

ՃԱՐՊԻԿ ԱՐԱՄ

(ՊԶՏԻԿ ՀԵՐՈՍԸ)

Հեղինակ

ԳՐԻԳՈՐ Յ. ՎԱՀԿԱՑԻ



ՏՊԱՐԱՆ «ՊԱՅԳԱՐ»

Գ Ո Ս Թ Ո Ն

1927

891. 99

Կ-18

19 NOV 201

ՃԱՐՊԻԿ ԱՐԱՄ

(ՊԶՏԻԿ ՆԵՐՈՍԸ)

Հեղինակ

ԳՐԻԳՈՐ Յ. ՎԱՀԿԱՑԻ



2802

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՒՀԱԼԻ
ԳՐԱԳԱՐԱՆ

ST. NERSES SHNOBHALI
LIBRARY

ARMENIAN PRELACY

ՏՊԱՐԱՆ «ՊԱՏԻԱՐ»

Պ Ո Ս Թ Ո Ն

1927

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԳԻՐԳՐ

«Ճարպիկ Արամ» վէպը երբ մաս առ մաս, Պայքար օրաթերթի մէջ հրատարակուեցաւ՝ շարժէ շարժ, զայն գրքի ձեւով հրատարակելու ունէ մտադրութիւն չ'ունէինք: Ան Պայքարի ընթերցողներուն ծանօթանալու եւ յետոյ, ինչպէս ուրիշ բազմաթիւ վէպեր, յաւիտեան կորսուելու յայտնի ճակատագրով հոն տեղ գտած էր: Ժողովուրդը սակայն, անոր առաջին մի քանի գլուխները կարդալէ յետոյ, կարծես չհանդուրժեց որ անոր վիճակուէր վերոյիշեալ բազդը: Հարիւրաւոր ընթերցողներ նամակներով թելադրեցին որ ան գրքի ձեւով հրատարակուի եւ ապրի: «Ճարպիկ Արամ»ը հրատարակել զանց մի՛ ընէք, գրեց հայ մը, անոր պատգամը պէտք է հասնի հայութեան գրքի ձեւին մէջ»: Թէ ինչ են ժողովուրդի այս պահանջին զաղտնիքը, վստահ ենք որ ընթերցողը պիտի գտնէ զայն պատմութեան մէջ:

«Ճարպիկ Արամ»ը գրական գործ մը կոչելու յաւակնութիւնը չունինք: Բայց ան ողբերու, աղերսանքի, վհատութեան շարք մը չէ, այլ հայ քաջութեան, վրէժի, սիրոյ, կամքի եւ ձեռներէցութեան կեանքի մը հետաքրքրական պատմութիւնը:

Յունիսք 25, 1927
Պօսթօն

ՀԵՂԻՆԱԿ



1111-2011

Շուշանիկ Անհետացած

Այդ զարհուրելի քաղաքական փոթորիկը որ պայթեցաւ Հայու գլխուն պատերազմին սկիզբները, եւ որ խլելով իր օճախէն հայութիւնը սիւնեց չոր ու անծայրածիր անապատներուն վրայ, Արամն ու Շուշանիկը Պիրէճիկ քաղաքին դիմաց, Յփրատի ափերուն վրայ, կեղտոտ, քարաչէն պանդոկի մը մէջ ձգած էր՝ ուրիշ անթիւ աքսորեալներու հետ միասին:

Այդ թուականէն երկու տարի առաջ երբ արհաւիրալից փոթորիկը զիրենք խլեց իրենց պապենական օճախէն, Հաճըն, իրենց ծնողքը զիրենք թեւերուն մէջ պաշտպանած էին ճակատագրին սուր փուշերէն մինչեւ որ օր մը երբ արեւը ծնաւ անապատի մը հորիզոնէն մարդիկ իրենց ըսին թէ որբացած էին այլեւս: Գիշեր մը երբ իրենք յոգնատանջ աւազներու վրայ կը քնանային, անսիրտ ոստիկաններ անդին, ձորի մը մէջ, վերջ տուած էին ծնողաց կեանքին: Այդ օրէն ի վեր ճակատագիրը իր սեւ երեսը դարձուցած էր այս անմեղներուն եւ խարազանելով զիրենք հասցուցած էր ներկայ գեհէնը ուր ամէն քայլափոխին մահը իր ճիրաններով իրենց կ'սպառնար: Երբեր էին...

Խանին մէջ բարի Հայ կին մը որ իր երկու զաւակները կորսնցուցած էր, զիրենք որդեգրեց եւ հող կը տանէր իրենց կերակուրին ու հազուատին:

Փոթորիկի պայթումէն ասդին երկու տարի անցած էր այդ առաւօտ երբ Արամ եւ Շուշանիկ խանին շուրջի կանանց մարդագետներն վրայ ընտանի խոտեր կը ժողվէին նախաճաշի համար: Իրենցմէ դատ դաշտին վրայ հարիւրաւոր Հայեր խոտ կը ժողվէին: Շուշանիկէն դատուելով Արամ ուրիշ տղու մը հետ դաշտին հեռաւոր մէկ ծայրը

ԱՄԷՆ ԻՐԱՒՈՒՆՔ
ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Է

գնաց, յուսալով որ հոն աւելի շուտ պիտի հաւաքէր ընտանի խոտերու մթերքը:

Իրաւ ալ հոն բուսեղէն շատ կար: Արամ միւս տղուն հետ մէկ ժամուան մէջ տոպրակը լեցնելով շալկեց եւ վերադարձաւ պանդոկ:

— Մարիամ մայրիկ, գոչեց ան յաղթականօրէն, տես որքան դեղեցիկ բուսեղէններ հաւաքեցի այսօր:

Մարիամ մայրիկ մեծ տոպրակին նայեցաւ ուրախութեամբ եւ Արամին մօտենալով անոր ձակատը համբուրեց:

— Կեցցե՛ս, քաջ տղաս, բայց Շուշանիկը ո՞ւր է:

— Ան միւս Հայերուն քով մնաց, հիմա կուգայ:

— Բայց տղա՛ս, խրատեց Մարիամ մայրիկ, պէտք է երբեք քրոջմէ՞դ զատուիս: Ո՞վ գիտէ ինչե՛ր կրնան պատահիլ: Կը յիշե՞ս թէ ինչպէս Թուրք ձիաւոր մը Վահանին քոյրը առաւ եւ փախցուց երկու շաբաթ առաջ:

Արամ շատ չսիրեց հայ մայրիկին չարատեսութիւնը, բայց յայտնի էր որ այս գէշ կանխադուշակութիւնը իր սրտին մէջ ալ սպրդեցաւ:

— Կ'սպաննեմ այն Թուրքը որ իմ քոյրս կը յայրըտակէ: Ո՛չ, Մարիամ մայրիկ, Թուրքը պիտի չկրնայ իմ քրոջս դպչիլ. ո՛չ ըսէ որ ատանկ բան չըլլար, հիմա կուգայ Շուշանիկը:

— Արամ՛մ... Արամ՛մ... աղաղակ մը յանկարծ լրսուեցաւ դուրսէն:

Արամ կարծես ամէն բան լսած ըլլար՝ հեծկտուրքի մէջէն հաղիւ փսփսուքի զօրութեամբ ձայն մը կրցաւ հանել:

— Արամ՛մ... Արամ՛մ... հոս է, եկէք, ներս եկաւ հեծկըլտալով Վահան:

— Ի՞նչ կայ, Վահան, ի՞նչ կայ, տղաս, հարցուց լաւով Մարիամ մայրիկ. Ո՞վ Աստուած դուն օգնէ մեզի, գթա, գթա մեզի ով Արարիչ: Ի՞նչ կայ, ըսէ՛, մի՛ լար, Վահան ըսէ:

— Թուրք մը... ձիաւոր մը... Շուշանիկը...:

— Ո՞ւր է այդ Թուրքը, դէպի դուռ վազեց Արամ պղտիկ դաւադան մը ձեռքին, ո՞ւր է քոյրս... Շուշանիկ...:

Ձայնը խեղդուեցաւ նորէն, սակայն Արամ գերբնական ուժով մէկդի կը հրէր զինք բռնող զօրաւոր բազուկները, որ դուրս վազէր այդ ձիաւորի ետեւէն, իր քրոջ Շուշանիկի ազատութեան համար:

— Ձղեցէ՛ք զիս, իմ քոյրս է ան: Դուք հոգ չէք ընել: Ձղեցէ՛ք զիս, ձղեցէ՛ք, եթէ ոչ դաւադանովս պիտի զարնեմ ձեր ձեռքերուն: Պիտի դռնեմ այդ ձիաւորը. Շուշանիկը պէտք է ազատեմ:

Ո՛հ, զթացէք ինձ, զթացէք ինձ. պէտք է ազատեմ Շուշանիկը: Իմ ծնողքս սպաննեցին, հիմա ալ Շուշանիկը, Շուշանի՛կ...:

— Տղա՛ս, դաւակս, սպասէ՛, մենք կ'ազատենք քոյրդ, աղաչեցին շուրջի կիները:

— Չէ՛, հիմա պէտք է երթամ, մայրս մեռնելու ատեն ինծի ձգեց Շուշանիկի պաշտպանութիւնը: Մայրս ինծի ըսաւ թէ Շուշանիկին լաւ պէտք է նայիմ, ձղեցէ՛ք, ո՛հ...:

Հաղիւ երեք չորս կիներ զինք զսպեցին եւ պանդոկին բակին մէջ նստեցուցին: Ամէն մարդ զինք վստահեցնելու կ'աշխատէր թէ Շուշանիկ պիտի ազատուէր, բայց Արամ չէր հաւատար: Ան գիտէր թէ Թուրքեր որքան անգութ, որքան դադանաբարոյ էին: Շուշանիկ դացած էր...:

Շուշանիկի անհետացումէն վերջ Արամի համար կեանքը այլեւս հաճոյք չունէր: Անոր օրերը տխուր մտածումներով կ'անցնէին: Յուսախաբութիւնը, թէ այլեւս Շուշանիկը գտնել կարելի պիտի չըլլար, օր ըստ օրէ կը մեծնար ու կը խոցոտէր Արամին սիրտը: Հին եռանդն ու աշխոյժը, հին խաղերն ու խաղի ընկերները մէկդի նետած՝ Արամ վշտահար հօր մը պէս խոժոռադէմ եւ տըրտումներէս Եփրատի ափերուն վրայ պտտելով, ջուրի հոսանքին խոր եւ հոր գոռումին կ'ունկնդէր: Եփրատ կը

շարունակէր իր անփոփոխ ու յարատեւ գնացըը՝ անհող աշխարհի ոճրագործութեանց մասին եւ տղէտ իր ափե-
րուն վրայ տանջուող հողիներու սարսափներուն եւ յու-
սախարութեանց: Արամ սրբնթաց մակերեսին վրայ կը
տեսնէր երբեմն մարդկային դիակներ, սնտուկներ, քուրջի
կտորներ, կեանքի լքուածներ, եւ կարծես վստահ օր մ'ալ
իր քրոջ դիակի երեւումին, ամէն անցնող առարկան իր
աչքերով կը գնէր մինչեւ որ վստահ ըլլար թէ Շուշանի-
կին դիակը չէր ան: Եւ որքան արցունք խառնուեցաւ Ա-
րամի աչքերէն Եփրատի ջուրերուն, միայն Աստուած եւ
Եփրատ գիտէին:

Ամիսներ անցած էին այն օրէն ի վեր, երբ Շուշանիկ
անհետացած էր: Արամ ու Վահան իրենց հանձարեղ միտ-
քերուն շինած բոլոր ծրագիրները ի գործ դրած էին որ
Շուշանիկի մասին լուր մը ձեռք ձգէին, բայց յաջողու-
թիւն չէին գտած:

Այդ Ուրբաթ օր սակայն բախտորոշ եւ վճռական
գործ մ'ալ ունէին Արամ ու Վահան: Անոնք Եփրատին ե-
զերքը աննպատակօրէն չէին թափառեր: Ծրագիր մը կար:
Շրջակայ դիւղերէն բոլոր դիւղացիներ ամէն առտու եւ
իրիկուն քաղաք երթալու համար ստիպուած էին նաև առ-
նել այդ եզերքէն, հետեւաբար ամէն դիւղացի այդտեղ
կուգար: Արամ եւ Վահան դադանի ոստիկանի դեր կը
կատարէին: Անոնք անուղղակիօրէն ամէն մի գէմք կը
գնէին: Վահան եթէ տեսնէր ձիաւորը կրնար ճանչնալ:
Գիւղացիներու խումբէն քիչ մը անդին երկուքը քով քովի
կեցած իրենց լուռ պաշտօնը կը կատարէին, երբ քիչ մը
հեռուէին ձիաւոր մը երևեցաւ:

Վիզին վրայ ձերմակով կէտիլառուած գեղեցիկ Արա-
բական ձի մըն էր ան: Ձիաւորը թխաղէմ, երխտասարդ
եւ պիտաւոր թուրք մըն էր: Արամին ու Վահանին ուշադ-
րութիւնը այս նոր ձիաւորին ուղղուած էր: Յանկարծ
Վահանին կուրծքը արագ ելեւէջ մը ունեցաւ եւ Արամին
ձեռքը ուժգին սեղմելով փափսաց:

— Արամ, այս Շուշանիկը տանող ձիաւորին կը նմա-
նի, բայց ձայն մի ըներ, դէպի հոս կուգայ:

— Վահան իր անունը հարցնենք, պատրուակաւ մը,
տես հոս կուգայ, աւելցուց Արամ:

— Զսպէ ինքզինքդ Արամ, եթէ Շուշանիկի դէպքին
մասին բան մը ըսես, ամէն բան կ'աւրուի, աղգարարեց
Վահան տեսակ մը վախով:

Ձիաւորը դիւղացիներուն բարեւ մը տալէ յետոյ քիչ
մը խօսեցաւ: Յետոյ նաւին մօտենալը տեսնելով ձին դար-
ձուց դէպի երկու տղաքը եւ անոնց քով եկաւ:

— Ծօ տղերք, ձեզի մէկ դրուչ կուտամ եթէ մինչեւ
վերադարձիս ձիուս հող տանիք:

Արամ Վահանին նայեցաւ եւ կարծես անոր աչքի հա-
ւանութիւնը առնելէ վերջ, թոթովեց:

— Այս պարոն, կը նայինք:

Ձիաւորը վար իջաւ ձիէն եւ սանձը հանելէ յետոյ ձին
յանձնեց Արամին եւ դէպի դիւղացիներու խումբը քալեց:

— Այս մարդն է Շուշանիկը փախցնողը Արամ, անունը
ի՞նչ ձեռով պիտի կրնանք հասկնալ արդեօք:

— Մէհմէտ Աղա, կանչեց Արամ ճշդելու համար լոկ
թէ արդեօք անունը Մէհմէտ էր: Մարդը ետ չի դարձաւ:

— Հասան, Աղա, Մահմուտ Աղա, Սէլիմ Աղա, պո-
ռաց Վահան, բայց մարդը չի պատասխանեց:

— Քասիմ Աղա՛...

— Հէ՛յ... ի՞նչ կ'ուղես ծօ:

— Քասիմ Աղա՛...

— Ի՞նչ է ծօ:

— Ե՞րբ պիտի վերադառնաս:

— Երեք ժամէն, ձիուն լաւ նայեցէք անպիտան Հա-
յեր, եթէ ոչ...

Նաւը եկած էր, դիւղացիները դիրար հրմշտկելով նա-
ւակ մտան եւ հեռացան:

— Արդեօք ո՞ր դէպքն է այս Քասիմ Աղան, հարցուց
Արամ յուսալատ եւ ջղադրդուած:

— Չեմ գիտեր Արամ, բայց անունը գիտնալն ալ կը բաւէ, հարցնելով կրնանք ճշտել իր որ գիւղացի ըլլալը:

Արամ դէպի Եփրատ դարձաւ: Նաւակը արդէն գետին միւս ծայրը հասած էր: Ժողովուրդի մէջէն Քասիմ Աղան ճանչցաւ: Ան ետ դարձած ձեռքերով աչքերուն վրայ շուք ըրած ձին կը դիտէր: Քիչ յետոյ դարձաւ եւ փողոցներուն մէջ անյայտացաւ: Արամ խորունկ մտածումներու մէջ ընկղմեցաւ մի քանի վայրկեան եւ յետոյ ժպտելով Վահանին դարձաւ:

— Վահան, դուն զնա ինծի քիչ մը հաց եւ ապուր բեր, անօթութիւնս այսօր կ'ըզամ: Ես ձիուն հետ հոս կ'սպասեմ քեզի: Բայց, մտիկ ըրէ Վահան, չըլլայ որ մէկուն բան մ'ըսես այս մասին: Պէտք է ամէն բան դադարի պահէնք մինչեւ որ Շուշանիկը ազատենք: Վահան դէպի դաղթավայր քալեց եւ մարդագետիններուն վրայէն վազելով մի քանի վայրկեանի մէջ արդէն պանդոկ հասած էր:

Ամէն մարդ խոտէ ապուրին շուրջ բոլորուած իր ճաշը կ'ընէր: Մօրը քով զնաց: Մայրը այդ օր ապուր չէր պատրաստած: Վահանին բարկութեամբ նայեցաւ, յետոյ շարունակեց իր ձեռքի դուլպան հիւսել լուռ ու մունջ:

— Մայրիկ, ապուր կա՞յ այսօր:

— Վահան դուն այս օրերս շատ անհնազանդ տղայ մը կ'ըլլաս կոր: Չեմ գիտեր թէ ի՞նչ կ'ընէք մինչեւ իրիկուն Եփրատի ափերուն վրայ: Ապուր չկայ, ուսկի՞ց ապուր պիտի կրնայի պատրաստել առանց խոտի:

— Մարիամ մայրիկը թերեւս ունի, երթամ զինք տեսնեմ: Արամը ձիուն հետ հոն կ'սպասէ: Ես հոս եկայ որ իրեն ուտելիք տանիմ: Բայց, մայրիկ... (հոս փորձուեցաւ իրենց դադարի դործերուն մասին խօսիլ, բայց մտաբերելով Արամի ազդարարութիւնը խօսքը փոխեց), հող մի ընէր, վաղը ես քեզի մէկ շարթուան բուսեղէն կը բերեմ:

— Որո՞ւն ձին է այդ, որ Արամ քովը կ'սպասէ:

— Թուրքի մը մայր, մեզի մէկ ղրուշ պիտի տայ վերադարձին, եւ գիտե՞ս այդ ճերմակ հացերը որ 2 մէթալիկի կը ծախեն, անոնցմէ մէկմէկ հատ պիտի առնենք:

Մայրը հառաչեց եւ յետոյ գուրգուրալից ժպտով մը Վահանին նայեցաւ:

— Ի՛... զնա', թերեւս Մարիամ մայրիկը բան մ'ունի:

Սովորաբար Մարիամ մայրիկը միշտ ուտելիք կ'ուտնար: Ան քիչ մը դրամ ունէր եւ գոնէ կերակուրի նեղութիւն չէր քաշեր: Վահան կերակուրը ծալլեց, թեւին տակ դրաւ ուշադրութեամբ եւ ուտոտելով պանդոկէն դուրս քալեց:

Սուլեյով դէպի ժամադրավայր ուղղուեցաւ, բայց յանկարծ անոր երեսը գունատեցաւ: Արամը չի կրցաւ տեսնել, ոչ ալ ձին: Մտահոգուած շուրջը նայեցաւ, բայց ոչ Արամ կար եւ ոչ ալ ձի:

— Հա, հա, խնդաց ակամայ, զիս պիտի խաբէ, ձին ջուրին քով քաշած պէտք է ըլլայ: Կեցիր ես ալ կամացուկ մը ետեւէն երթալով զինք վախցնեմ:

Գետափը հասաւ եւ ջրեղերքի երկայնութեան նայեցաւ: Իրապէս Արամ չի կար: Սարսափահար եղաւ Վահան: Արդեօք միեւնոյն թուրքը Արամն ալ փախցուցած էր:

— Արամ... Արամ... պոռաց ան, բայց գետին ձայնէն դատ ոչ մէկ շշուէ հասաւ իր ականջներուն իբր պատասխան:

Վահան սկսաւ լալ եւ երկիւղով պանդոկ ետ վազեց: Պատմեց Արամին անհետացումը: Շատ մը կիներ Մարիամ մայրիկին հետ եկան եւ գետափի երկայնութեան վրայ հետք մը պրպտեցին, բայց ապարդիւն մնաց իրենց աչխատանքը: Արամ եւս անհետացած էր...

Երբ դաղթականներ գետեղերքը ծայրէ ի ծայր փրկուելէ յետոյ, համոզուեցան որ Արամն ալ Շուշանիկի պէս անյայտացած էր, Վահան արատաւալից աչքերով հեռու

բլուրի մը վրայ նշմարեց սրընթաց սեւ բիծ մը, որուն
ետեւէն փոշիի ամպեր երկինք կ'ելլէին:

— Տեսէ՛ք, թե լազրեց Վահան իր շուրջի տխուր դադ-
թականներուն, այդ սեւ առարկան գիտեցէ՛ք գիմացի բը-
լուրին վրայ: Անպատճառ ան Արամն ու ձին ըլլալու են:

— Խեղճ Արամ, դժբախտ տղաս, հառաչեց Մարիամ
մայրիկը արտասուաթոր աչքերէն արցունքը քամելով,
ինքն ալ իր քրոջ ճակատագրին յանձնուեցաւ:

Քիչ յետոյ գիմացի բլուրին վրայէն սեւ առարկան
աներեւոյթ եղաւ, փոշիի ամպերը հովահար ցրուեցան,
եւ բլուրը վերստացաւ իր անշուք, անզղայ եւ լուռ բնա-
կանոն վիճակը: Եփրատի ջուրերը հեծկլտացին մոլեղ-
նօրէն, յուսահատ, անտէր ու անձար գաղթականներ ձեռ-
քերնին երկինք վերցուցին, Աստուծոյ մի քանի բողոքի
խօսքեր ուղղեցին եւ յետոյ... սրտաճմլիկ լացերով իրենց
նեխած պանդուկը վերադարձան:



ԳԼՈՒԽ Բ.

Շուշանիկի Ետեւէն

Վահանին ենթադրութիւնը՝ բլուրին վրայի սեւ ա-
ռարկայի մասին շիտակ էր: Ան Արամն էր, որ ձեռքե-
րով կառչած ձիու վիզին եւ յանձնուած զայրացած Արա-
բական ձիու քմահաճոյքին, կ'երթար, կը սուրար կայ-
ծակի արագութեամբ: Թէ ո՞ր կանգ պիտի առնէր կեն-
դանին, անորոշ էր Արամին, սակայն գիտէր որ ձին իր
քոյրը փախցնող Քասիմ Աղայի ձին էր եւ զինք պիտի
տանէր անոր գիւղը:

Քրոջը մասին այսպիսի հետապնդում մը իր մտքէն
խակ չէր անցած: Ո՛չ. Արամ այդքան ալ յիմար չէր որ
միամիտակ երթար թուրք գիւղ մը իր քոյրը ազատելու
համար: Այս տեսակ քայլ մը մահու եւ կենաց խնդիր էր:
Զինք թուրքեր անմիջապէս կամ պիտի սպաննէին եւ կամ
ծեծելէ յետոյ ախոռի մը մէջ պիտի բանտարկէին: Զէ՛,
երբ պարագաները այդ կերպով զինք չստիպէին, Արամ
այս յիմար յանդիմութիւնը չպիտի ընէր: Բայց, ի՞նչ ը-
նէր, գետեղերքին քով երբ ձին կ'արածէր, փորձուեցաւ
անոր վրայ հեծնելու: Եւ երբ փորձութիւնը գործադրեց
եւ զինք ասպետի մը պէս Արաբական անդուսպ ձիու մը
վրայ դտաւ, ալ ուրիշ ճար չկար, պէտք էր երթար ուր
որ ձին զինք պիտի տանէր:

Պահ մը բլուրներն ի վեր, պահ մը բլուրներն ի վար
դէպի ձորերը ձին կը սուրար անդուսպ, մինչ Արամ բո-
լոր ուժով ձիու բաշէն կը բռնէր: Տեղ մը քիչ մնաց գլուխը
ծառերու ճիւղերուն պիտի անցնէր, բայց առանց վնասի
այդ վտանգն ալ անցուց: Ծամբան հովիւներ եւ ուրիշ
գիւղացիներ իրեն կը նայէին մտաւախ՝ մատերնին խած-

— Մայրս — լացաւ հոս Արամ, — մեռնելու ատեն
ինձմէ խնդրեց որ անունս չի փոխեմ:

Գատիր էՖ. շատ զգածուեցաւ այս խոստովանութե-
նէն եւ թոյլ տուաւ որ Արամ իր սիրելի մօրը տուած ա-
նունը կրէր:

Արամ, վստահ իր կեանքի ապահովութեան, ախոր-
ժակով լալիեց Ա աման ապուրը զոր կալուածատիրոջ սպա-
սաւորները բերին իրեն: Վեց ամիսէ ի վեր զուտ հացա-
հատիկէ ալդպէս անուշ ապուր չէր կերած: Արամին հո-
գին սակայն շատ ալ խաղաղ վիճակ մը չունէր: Նախ չէր
գլխտեր թէ ո՛ւր էր, պանդոկէն ո՛րքան հեռու էր: Երկ-
րորդ չէր գլխտեր թէ արդեօք այս դէպքը սոսկալի
փորձառութենէ մը յետոյ զինք Շուշանիկին մօտ տե՞ղ մը
նետած էր: Քասիմ էֆէնտին արդեօք իրեն վնաս պիտի
կրնա՞ր հասցնել, իր նոր տիրոջ պաշտպանութեան տակ:
Իսկ եթէ հերկելու մասին իր գլորած սուտին հետեւանքը
լի՞նչ պիտի ըլլար, ամէնէն աւելի մտահոգութիւն կը
պատճառէր խեղճ Արամին ալեկոծ, վիրաւոր սրտին: Այս
մտածմունքներուն մէջ մինչ Արամ կը տարուբերէր, քո-
վի սպասաւորներէն մին — խոժոռագէմ մարդ մը — իրեն
հարցուց թէ ձի՞ն ուր դացած էր:

— Չեմ գիտեր, լուր չունիմ, պատասխանեց Արամ
խոշոր պատառ մը կլլելով, հաւանական է որ Քասիմ է-
ֆէնտի զիւրը գնաց:

— Ես վստահ եմ որ տղուն ըսածը շիտակ է: Քասիմ
ինձի անցեալ օր ըսաւ թէ իր ձին՝ հոգ չէ թէ ո՛ւր ըլլայ,
զիւրը կը գտնէ: Մուսա հիմա Չաթալ զիւր կ'երթայ,
ան լուր մը կը բերէ:

Արամ մտածեց որ այս խօսակցութիւնը Քասիմի բը-
նակավայրի մասին լաւ առիթ մըն էր դադարաւ մը կազ-
մելու զիւրի հեռաւորութեան մասին: Մի քիչ տատամ-
սուած յետոյ՝ վճռեց հարցում մը ընել:

— Չաթալ զիւր շատ հեռո՞ւ է այստեղէն, հարցուց
Արամ զիւրացիներուն:

— Քալելով մէկ ժամ է այստեղէն, պատասխանեց զիւ-
րացիներէն մին:

Արամ այս պատասխանին վրայ ամէն ցաւ մոռցաւ —
յոգնութիւնը, վախը, սուտը, ամէն բան: Վերջապէս
դէպքը որուն հերոսը եղաւ ինք, շատ ալ չարադէպ պա-
տահար մը չէր եղեր: Շուշանիկին քով զիւր մը հասած
էր: Արամ սրտին մէջ յոյսերու գաղտնի դրախտ մը ու-
նէր իսկ երեսին վրայ՝ խեղճ արտայայտութիւնը պահեց
անփոփոխ, թէեւ դժուարութեամբ:


Այդ իրիկուն Արամ գեղեցիկ երազներով քուն մը քը-
նանալէ յետոյ զիւրացիի մը հրամանին անսալով առտուն
կանուխ ոտքի ելաւ: Հերկելու պիտի երթար: Իրեն զոյգ
մը զօրաւոր եզներ տուին: Միւս զիւրացիներու հետ միա-
սին Արամ քալեց մօտաւորապէս մէկ ժամ մինչեւ որ ար-
տը հասան:

Եզները սէտք էր հիմա լծել: Արամ հարկաւ դադա-
փար իսկ չունէր թէ լի՞նչպէս եզները պիտի լծէր: Միւս
զիւրացիներուն նայելով բաւական դժուարութենէ, վախէ
եւ շուարումէ յետոյ յաջողեցաւ կենդանիները լծել արօ-
րին: Կարգը եկաւ դաւադանին. երկաթեայ սուր ծայրը
դպցուց կենդանիներու մորթին, բայց խեղճ Արամ մոռ-
ցած էր արօրը կառավարելու անհրաժեշտութիւնը իր ձախ
ձեռքով, եւ եզները արօրը իրենց ետեւէն քաշկուտելով
դայրացած վաղեցիկ սրարչաւ: Արամ բոլոր ուժով վաղեց
եզներու ետեւէն որ բռնէ զանոնք, բայց եզները արդէն
երկու մղոն հեռացած էին: Գեռ կը վազէր Արամ, վախէն
խելակորոյս, երբ Գատիր էֆ. դայրացած, ձին վազցնե-
լով իրեն հասաւ, ձեռքը ատրճանակ մը բռնած:

— Ստախօս չարաճճի քեղ, պոռաց զիւրատէրը, դուն
զիս կը խարես հը՞: Հիմա... ատրճանակը ձեռքին մէջ
դարձուց նորէն:

Խեղճ Արամ հերկելու մասին ըրած ստախօսութիւնը
արդարացնելիք բան չէր կրնար գտնել: Գատիր էֆ. իր
հրաբորբօք աչքերը իրեն տնկած եւ ջղայնացած՝ ցուցա-

1111 - 2011



մատը ատրճանակի ձգանին քով դրած կ'սպասէր Արամի պատասխանին: Մահու եւ կենաց վայրկեանն էր: Խեղճ Արամ վայրկեանի մը մէջ կամ մէկուն եւ կամ միւսին պիտի արժանանար: Մահ թէ կեանք իր մահասարսուռ շըրթներուն թոթովելիք պատասխանէն կախում ունէր: Սոստովանէ՞ր արդեօք թէ սուտ խօսած է, թէ յանցանքը նետէր եզներուն վրայ: Չէր գիտեր: Երկուքն ալ իրենց անպատեհութիւնները ունէին:

Կանանց գետնի վրայ ճար որոնող աչքերը յուսահատ վեր վերցուց: Սեւ դեղեցիկ աչքեր ունէր ան: Յուսավառ, փայլուն աչքերուն ցոլքը սակայն աղօտեցաւ երբ անոնք մահացու գործիքը գիտեցին: Սոսկալի էր այդ ատրճանակը որ մահ կը բուրէր եւ գթալու կարողութիւն երբեք չունէր: Մահուան պէս սոսկալի էր ան եւ սեւ հողին պէս պաղ: Իսկ այդ ցուցամատը որ ջրայնոտօրէն կը խաղար ձգանին մօտ, գաղանի մը արիւնաթաթախ ճանկին կը նմանէր — արիւնուռտ եւ անօթի, զղուելի եւ անկարեկից:

— Շուտ ըրէ, եթէ ոչ, տես, հինգ պիտի համբեմ եւ եթէ հինգ համբելուս պէս պատասխան չի տաս, տես — ոտքին քով գետնի վրայ պարպեց փամփուռտ մը:

Արամ սկսաւ յողալ, կարծես տենդ ունէր: Ան աւելի շուարեցաւ:

— Մէկ, սկսաւ համբել Գատիր էֆ., երկու, երեք — կը լսե՞ս, երկու մնաց, գոռաց ան բարկացած, չորս.....

— Ներէ՛, Տէր իմ, յանկարծ աղերսեց Արամ հեծկըլտալով, ճշմարտար պիտի պատմեմ քեզի, ես երբ ըսի թէ հերկել գիտեմ, ստեցի:

— Ուրեմն զիս խարելու աշխատեցար հը՞, գոռաց նորէն պէյը աւելի կատղած:

— Գթա՛ տէր իմ, լացաւ Արամ նորէն, քեզ խարելու նախտակ չունէի բայց վախնալով որ եթէ հերկել գիտեմ չըսէի, զիս պիտի վոնտէիք գիւղէն, կեանքիս սիրոյն ճշմարտութիւնը պահեցի քեզմէ: Ո՛հ, գթա՛ ինծի

տէր, դեռ տղայ մըն եմ, մեռնիլ չեմ ուզեր: Հայրս, մայրըս սպաննուեցան, գոնէ դուն, բարի տէր, զիս պաշտպանութեանդ տակ ազատէ: Քեզի ծառայ մը կ'ըլլամ, ինչ որ ուզես կ'ընեմ: Կ'ուզես հերկել կը սորվիմ, միայն թէ, ուր բարի պէյ, կեանքս ինծի շնորհէ եւ այս անգամ ինծի ներէ: Ո՛վ Աստուած, դուն այս բարի պէյին սիրտը ինծի նպաստաւոր զգացումներով լեցուր, ոգեկոչեց վերջապէս Արամ:

Ատրճանակը դէպի վար իջաւ եւ պէյին երեսի դայրալից արտայատուցութիւնը մեղմացաւ յանկարծ:

— Ո՞ր տեղացի ես դուն, տղայ:

— Հաճընցի եմ տէր իմ:

— Ծնողքդ ո՞ւր սպաննեցին:

Հոս Արամին աչքերէն արցունքը սկսաւ յորդառատ վազել: Ազատութեան նախազգացումը թուցուց անոր վախէ պրկուած ջիւղերը, այնպէս որ արցունքը անարգել սկսաւ հոսիլ այտերէն վար:

— Ճարապօղիսի մօտ տեղ մը, պատասխանեց Արամ: Մայրս իմ քովս մեռաւ դաշոյնի վէրքերէն: Եւ... — Հոս քիչ մը մտածեց Արամ, կարծես իր ըսելիքը կը շարժուէր համար — կ'ուզես զիս ալ սպաննէ տէր իմ: Ես այլեւս ապրիլ չեմ ուզեր: Տեղ չունիմ, տուն չունիմ, պաշտպան չունիմ: Ուր որ երթամ վախ եւ գուլում կայ: Ես միամիտակ, ի՞նչ պիտի ընեմ կեանքը: Դուն ինծի գթացած եւ պաշտպանած էիր երէկ, իսկ այսօր ահաւասիկ — ո՛հ, աղաչանքներս ետ կ'առնեմ, տէր իմ, սպաննէ զիս: Ատրճանակը նորէն ուղղէ ձակատիս եւ վերջ տուր, եթէ ինծի բարիք մը չնորհել կ'ուզես:

Գատիր պէյ, անշարժ իրեն կը նայէր առանց Արամի այս վերջին աղերսանքին անսալու մտադրութիւն ցոյց տալու:

— Սպաննէ զիս, տէր իմ, շարունակեց Արամ, ահաւասիկ փամփուռտի մը փոխարէն քեզի մօրս մատանին:

Մատանին գրպանէն հանելով թուրքին երկնցուց եւ լա-
ցաւ :

Գատիր պէյ, յանկարծ վար ցատկեց ձիէն : Արամին
մօտեցաւ :

— Արամ, քեզի վախ չկայ այլեւս, մի վախնար :
Դուն գիւղ վերադարձիր եւ ես քեզ պիտի պաշտպանեմ :

— Ծնորհակալ եմ, տէր իմ : Քեզի երախտասպարտ
եմ, թոթովեց Արամ եւ դառնալով քալեց դէպի Պօղ Ալի
գիւղը :

Ամբողջ ճամբու երկայնքին՝ Արամ կը մտածէր : Եւ
այնքան խորասուզուած էր իր մտածումներուն մէջ, որ
եթէ մէկը գիւղ հասած ատեն հարցնէր թէ ճամբան ի՞նչ
առուակներէ, պարտէզներէ եւ ձորերէ անցած էր, ան կա-
րող պիտի չըլլար պատասխանելու : Անոր համար առար-
կայ ըսուած բանը քլած ատեն դոյութիւն չունէր : Մտա-
ծումներու հոգեխոտով եւ անգութ աշխարհին մէջ կ'ապրէր :
Իր ճամբորդութեան միջոցին Արամ վախ ըսուած մտա-
ծումն ալ մէկդի նետած էր : Այդքան գիւղացիներու հան-
դիպեցաւ եւ հիւլէի մը չափ վախ չզգաց թէ անոնք իրեն
պիտի վնասէին : Նոյն իսկ գիւղացիին մէկը իրեն ետե-
ւէն պոռաց. «Կեալուր օղլու» ըսելով, բայց Արամ այն-
քան քաջացած էր իր, կարեւորութիւն իսկ չտուաւ թուր-
քին : Ահա այսպիսի կատարեալ ինքնամոռացութեան շըր-
ջան մը կ'ապրէր Արամ՝ երբ ինքզինք Գատիր պէյի պա-
լատին առջեւ դտաւ Մէհմէտին հետ դէմ գիմաց :

— Ինչո՞ւ եկար տղայ արտէն, հարցուց Մէհմէտ,
իր ազատարարը :

— Գատիր պէյ հրամայեց որ հոս վերադառնամ, պա-
տասխանեց Արամ մեքենարար :

— Անօթի՞ ես :

Աչքերը յանկարծ իրենց հին փայլը վերստացան :

— Այո, Մէհմէտ աղա, պատասխանեց ան :

Ապուրը եկաւ եւ Արամ ակորժակով կլլեց օրհնակ
անունը :

Շուշանիկը Գտնուած

Երկու տարի վերջ Արամ Գատիր պէյի ամէնէն աւելի
սիրուած ծառան եղած էր արդէն : Անոր գործը՝ գիւղէն
քաղաք, գիւղէ գիւղ, Գատիր պէյի հրամանները տանիլ
էր : Գատիր պէյ, ունէ կարեւոր գործ կը յանձնէր Արա-
մին, որ արդէն երիտասարդ մը եղած էր : Ան թուրքի մը
պէս հագուած էր, սակայն ոչ անունը եւ ոչ ալ սիրտը փո-
խած էր : Արամը Արամ էր եւ Արամը հայ էր : Ամէն
թուրք զինք կը յարգէր գիւղին մէջ :

Ուրբաթ օր մը Արամ լսեց գիւղացիներէն որ Անգլիա-
կան զինուորներ Շամ հասած էին եւ թէ թուրք կատա-
վարութիւնը յաղթուած էր : Լսեց նաեւ թէ քրիստոնեայ
բանակներ կը յառաջանային դէպի Հայկազ քաղաքը եւ թէ
անոնց Պիրէճիք հասնիլը շատ երկար ժամանակ պիտի
չառնէր :

Այս լուրը լսելուն պէս Արամ ժամանակը հասած նը-
կատեց Շուշանիկի ազատութեան : Այն գիւղը ուր Շուշա-
նիկ կը մնար, հազիւ մէկ ժամ հեռու էր Պօղ Ալիէն :
Նոյն իսկ երբեմն ալ այդ գիւղէն Արամ անցած էր, բայց
մինչեւ այն ատեն Շուշանիկը չէր տեսած : Շուշանիկին
գիւղատէրը շատ ազդեցիկ թուրք մըն էր եւ անոր ճան-
կերէն Շուշանիկը ազատել գիւրին գործ չէր : Անգլիացիք
եթէ հասնէին, հարկաւ կրնար անոնց միջոցաւ Շուշա-
նիկը ազատել, բայց ո՞վ գիտէ ինչ փորձանքներ պիտի բե-
րէին Շուշանիկի գլխուն, երբ լսէին թէ Անգլիացիք կու-
ղային : Թերեւս զինք բանտարկէին, պահէին, ծեծէին
կամ սպաննէին :

Ուրբաթ օր մը, կէսօրին, Արամ ճամբայ ելաւ առանց մէկուն բան մը ըսելու՝ դէպի Շուշանիկին գիւղը: Մէկ ժամէն գիւղ հասաւ եւ պղտիկ տղու մը հանդիպեցաւ:

— Ծօ՛, հոս եկուր, հրամայեց Արամ պղտիկ տղուն: Այստեղ հայ աղջիկ մը կա՞յ:

— Հա՛, խոստովանեցաւ տղան, Քասիմ աղային քով է, տղուն նշանեց եւ մօտերս հարսնիք պիտի ըլլայ: Տես այդ արտին մէջ է այդ կեանքը աղջիկը: Ալին ալ հոն է:

Հարսնիքին լուրը Արամը սարսեց: Ան անմիջապէս վազեց դէպի դաշտը, ուր Շուշանիկ հասկ կը քաղէր միւս գիւղացիներէն քիչ մը անդին: Ուղղակի Շուշանիկին քով քալեց եւ կամացուկ մը անոր խօսեցաւ հայերէն լեզուով:

— Շուշանիկ, մի՛ վախնար, ես Արամն եմ: Ձայն մի՛ հաներ, եթէ ոչ զիս կ'սպաննեն: Մտիկ ըրէ թէ քեզի ի՞նչ պիտի ըսեմ:

Իր ճակատագրին համակերպող Շուշանիկ առանց գլուխը դետնէն վերցնելու, շարունակեց քաղել ցորենի ոսկեգոյն հասկերը, բայց իր շարժումներէն կարելի էր գուշակել թէ Շուշանիկ չէր հաւատար Արամի ձայնին իրականութեան: Շուշանիկ կարծես թէ երազ կը տեսնէր: Պահ մը կեցաւ եւ դիմացի հորիզոնը դիտեց, մինչեւ որ արցունքները լեցոյցին անոր սեւ աչքերը:

Արամ այս անտարբերութեան առջեւ շուարեցաւ: Արդեօք Շուշանիկը չէ՞ր ան: Անգամ մ'ալ խօսիլ կ'ուզէր, բայց կը վախնար թէ աղջիկը թուրք մըն էր եւ եթէ լսէր անոր հայերէն խօսքերը, պիտի մատնէր զինք գիւղացիներուն:

— Ձարմանալի՛ բան, ինքնիրեն մտածեց Արամ, նոյն խակ դառնալով երեսիս չի նայեցաւ: Անպատճառ Շուշանիկը չէ այս: Այդ անպիտան թուրք տղան զիս խարեց, ուրեմն:

Յուսահատած, Արամ դէպի ետ քայլ մը առաւ: Ոտնաձայնը սթապիեցուց Շուշանիկը որ զարհուրած ետ դարձաւ ու բարկութեամբ նայեցաւ Արամին:

— Ի՞նչ կ'ուզես, հարցուց Շուշանիկ տածկերէն լեզուով:

— Շուշանի՛կ, շուշանի՛կ, չե՞ս ճանչնար զիս, չե՞ս գիտեր զիս. Արամն եմ, եղբայրդ Արամը, թոթովեց Արամ անզուսպ լացը կոկորդին մէջ խեղդելով:

Շուշանիկ աչքերը լայն բացաւ, դողահար անոր երեսը անգամ մ'ալ դնեց, յետոյ գետին նայելով աշխատեցաւ բարդ խնդիր մը լուծել: Իրեն ըսած էին թէ Արամ սպաննուած էր, թէ հայերուն ամբողջ խումբը կոտորուած էր: Միթէ կրնա՞ր Արամ յարութիւն առնել եւ իրեն ներկայանալ այդքան իրականօրէն:

— Մի՛ շուարիւր, Շուշանիկ, մի՛ վախնար: Ես Արամն եմ, քու եղբայրդ: Քեզ կը փնտռեմ երկու տարիէ ի վեր: Քեզ պիտի ազատեմ մօտ օրէն: Պատրաստ եղիր: Գիշեր մը ես քեզ պիտի փախցնեմ Քասիմ աղայի տունէն: Հարսնիքը չեղած ես քեզ պիտի ազատեմ: Ես Գատիր պէյի Պօզ Ալի գիւղին մէջ եմ: Ի՞նչ կ'ըլլաս Շուշանիկ, ինքզինքիդ եկուր, հիմա զիս պիտի մատնես: Ոյժդ ժողովէ, Շուշանիկ, մի նուազիր: Մի վախնար, Անգլիացիք մէկ շարաթէն հոս կ'ըլլան:

— Արամ... Արամ... հազիւ կրցաւ արտասանել Շուշանիկ եւ գետին ինկաւ նուազած:

— Հէյ, Մէհմէտ, բռնէ այդ սրիկայ տղան ով որ է: Նշանածդ սպաննեց: Վազեցէ՛ք, գիւղացիներ, բռնեցէք այդ մարդը: Սիւնպիլի (Շուշանիկի նոր անունն էր այս) վնաս մը հասցուց այդ մարդը, պոռաց Քասիմին կինը, որ քիչ մը անդին ձիւն մը քով կը կենար:

Գաշտին մէջ գտնուող գիւղացիները պաշարեցին Արամը, որ յոյսը կտրած՝ Քասիմի կնկան քով վազեց, եւ անոր ձեռքէն ձիւն սանձը քաշելով ձիւն վրայ ցատկեց եւ կայծակի արագութեամբ ձին քշելով դէպի Պօզ Ալի գիւղը ուղղուեցաւ: Գիւղացիներ մինչեւ որ իրենց ախոռներէն ձիերը դուրս քաշեցին, Արամ բլուր մը արդէն անցած էր եւ խոր զառիվարէ մը կայծակի պէս կը թռէր

Գատիմ աղայի ձիուն վրայ: Հետապնդումը շարունակուեցաւ մինչեւ Պօղ Ալի, ուր Արամ երբ հասաւ Գատիր էֆ.ին պատմեց շինծու պատմութիւն մը: Ան ըսաւ թէ գիւղին քովէն կ'անցնէր եւ ճամբան հարցնելու համար այդ աղջրկան մօտեցաւ եւ աղջիկը ինքնիրեն նուազած գետին ինկաւ: Այս սխրագործութեան հետեւանքը սակայն երբեք մնասակար չեղաւ Արամին: Գատիր պէյ միւս գիւղացիներուն պատուիրեց որ լուիկ մ'նջիկ իրենց գիւղը վերադառնան եւ անգամ մ'ալ չհամարձակին իրենց ծառաներուն սպառնալ:

ԳԼՈՒԽ Դ.

Վնասկան Գիշերը

Օրերը անցան. բայց Արամ միայն գիտէր թէ որքան դանդաղ կ'անցնէին ժամերը: Յանկարծ լուր մը հասաւ թէ Անգլիացիք Հալէպ հասած էին: Այս տեսակ բարի լուրեր Արամի անհամբերութիւնը քրոջ ազատութեան համար, աւելի կը հրահրէին: Ազատութեան մօտենալը Արամի համար այնքան ալ մխիթարական չէր, քանի որ դեռ չէր կրցած ազատել Շուշանիկը: Հաղիւ երեք օրեր կրկայի մը դանդաղութեամբ ներկայի բլուրին վրայէն քալեցին անցեալի անդունդն ի վար: Արամ, հարկաւ, չէր գիտեր ալ թէ Շուշանիկ նուազումէ յետոյ ինչ վիճակի մէջ էր:

Վերջապէս ուրիշ արեւ մըն ալ ընկղմեցաւ հորիզոնին ետեւ եւ խաւարը պատեց պզտիկ գիւղակը: Հիւրանոցի մէջ քանի մը գիւղացիներ հաւաքուած իրենց լեզուները կը մարդէին եւ դանկերնին կը քերէին մինչեւ կէս գիշեր խօսակցութեան առարկայ ըլլալիք նիւթ գտնելու համար: Արամ անոնց մէջն էր արարական տարագով բայց հայկական ինքնութեամբ:

Գիւղացիներէն մին վերջապէս գիշերուայ հետաքրքրական նիւթ մը հայթայթեց: Ոգիներու մասին սկսած էին խօսիլ այդ օր: Թուրքեր հարկաւ կը հաւատան ոգիներու եւ մեռելային տեսիլներուն: Գիւղացիին մէկը կը պատմէր թէ ինչպէս օր մը գերեզմաննոցէն անցնելու ատեն, ուրուական մը զինք հետապնդած էր մինչեւ գետը որմէ ոգիներ չեն կրնար անցնիլ: Ուրիշ գիւղացի թուրք մը պատմեց ուրուականներու հանդէս մը, որուն ինք ահանատես եղած էր ուրիշ գերեզմանի մը քով: Սօսակցութիւնը վերջապէս աւելի ընդարձակեցաւ եւ գիւղացիներ համոզում գոյացուցին որ աշխարհի մէջ մեռած մարդոց ուրուականները, շան մը, կատուի մը կամ նաեւ մարդու մը ձեռով կարելի էր յաճախ տեսնել: Նոյն իսկ գիւղացիներէն մօրուսաւոր ծեր մը վստահացուց իր խօսակիցները, որ այդ վայրկեանին իսկ կարելի էր ուրուական մը տեսնել գիւղի գերեզմանատան մէջ:

Գատելով գիւղացիներու խօսակցութեան թօնէն եւ անոնց երկիւղալի ձայնէն՝ Թուրքերը շատ կը վախնային ուրուականներէն:

— Ինծի հազար ոսկի տան, գիշերը մինակ չեմ երթար Հաճի Պաճիի գերեզմանին մօտ, ըսաւ գիւղացիներէն մին:

Հարկաւ ոչ, մարդ խենթեցած պէտք է ըլլայ որ այդ տեսակ յիմարութիւն մը ընէ: Պակաս չեն հոս ուրուականները, ոչ ցերեկ ժամանակ, ոչ ալ գիշերը, աւելցուց ուրիշ մը:

Ճիշտ այս միջոցին էր որ Արամ մասնակցեցաւ խօսակցութեան՝ անոնց ուղղելով հետեւեալ հարցումը.

— Ընդհանրապէս ի՞նչ տեսակ տարազ ունին ուրուականները:

— Ամէնէն ահաւորները անոնք են որ պատանքի մը պէս ճերմակ կտաւ մը կը հագնին, պատասխանեց թուրք մը:

գաւոր չէր կատարուելիք հրաշքը, որու յաջողութեան վրայ Արամէն դատ ոեւէ տղայ հաւատք պիտի չունենար: Արամ ճամբուն վրայէն գիւղին նայեցաւ պահ մը տատամստ: Յուսահատութիւն մը եկաւ իր վրայ, բայց Անգլիական բանակներու վերջիչումը զինք նորէն դատեալընդեց: Անմիջապէս ատրճանակը դուրս հանեց եւ մէջքին վրայէն կապեց: Յետոյ սաւանը իր շուրջ ուշադրութեամբ փաթթեց, այնպէս որ կատարեալ ուրուականի մը ձեւն առաւ:

Տոպրակէն հացի կտոր մը հանեց եւ յետոյ հառաչ մը քաշելով երկինք նայեցաւ: Ծրթները շարժեցան, յուսաւառ ժպտեցաւ եւ դէպի գիւղ քալեց:

Հազիւ թէ առաջին տունը հասաւ, կատաղի շուն մը սկսաւ հաչել: Արամ ձեռքի հացի կտորէն մաս մը շան առջեւ նետեց եւ լռեցուց առժամապէս: Արագ արագ քալեց դէպի գիւղին հրապարակը՝ աչքերով տունները զննելով: Յանկարծ քարաչէն տունը նշմարեց քիչ մը անդին, բայց ճիշտ այն ատեն ուրիշ կատաղի շուն մը սպառնաց զինք կտոր կտոր ընել: Արամ հացի կտոր մը նետեց նորէն անոր առջեւ, բայց կենդանին մերժեց իր պաշտօնին անհաւատարիմ ըլլալ: Արամ օտար մըն էր եւ կէս գիշերին իր տիրոջ գիւղը գալու, մանաւանդ ուրուականի մը տարագով, իրաւունք չունէր: Արամին վրայ ազմկալից յարձակում մը ըրաւ շունը, բայց Արամ շուտով ինքզինք դետին նետեց: Ճարպիկ Արամ գիտեր որ դետին պառկել լաւ միջոց մըն էր շուններու ակումներէն ազատելու: Շունը ձայնը կտրեց: Արամի քով դնաց նստեցաւ: Արամ կէս ժամ առանց շարժելու պատի մը առջեւ պառկած մնաց, որովհետեւ ամէն անգամ որ շարժէր, շունը կ'սպառնար զինք խածնել:

Բայց շատ երկար սպասել կարելի չէր: Այդ գիշեր պէտք էր Շուշանիկը ազատուէր, եթէ ոչ՝ Քասիմ Ազա Անգլիացիներուն մօտենալը լսելով՝ Շուշանիկը թերեւս կամ տեղ մը պիտի պահէր կամ ուրիշ քաղաք մը պիտի

փախցնէր եւ կամ պիտի սպաննէր: Այո, հսկայ շունը պէտք էր որ զինք այդպէս ծուլութեան պարտադրեր: Բայց կատաղի շունէ մը ինչպէս կարելի էր ազատել: Արամ, նորէն փորձ մը ըրաւ ոտքի կանգնելու եւ երբ գլուխը վերցուց, շունը գլխուն վերեւ կենալով ստակալի ակումները ցուցադրեց: Արամ կրնար այդ շունը իր ատրճանակով սպաննել: Բայց պէտք էր ձայն հանել: Ատրճանակի մը ձայնը մանաւանդ գիւղացիները ամբողջ ոտքի պիտի հանէր:

— Շնիկ, տէրջդ պէս դուն ալ անդուժ մի ըլլար, դնա որ ես քրոջս ազատութիւնն ապահովեմ, մրթմրթաց Արամ ինքնիրեն:

Քիչ մըն ալ պիտի խօսէր, սակայն անյաջողութեան յուսահատութիւնը աչքերէն արցունք բերաւ եւ իր ձայնը խեղդեց: Անտանելի էր կացութիւնը Արամին համար: Այդքան աշխատանքէ, վախէ եւ յաջողութենէ յետոյ, վերջին րոպէին անխօս եւ անկարեկից արարածի մը ստեղծած այդ արդէւրքին բախիլ: Ժամը 12-ը անցաւ եւ դեռ շունը իր դոհին վրայ կը հսկէր աչալուրջ: Բայց վերջապէս շուներու հաչիւն մը գիւղին հեռաւոր մէկ անկիւնէն ազատեց Արամը շունէն: Շունը իր ընկերներուն ձայնը լսելով վաղեց անոնց քով, ազատ ձգելով Արամը իր նպատակին հետ:

Արամ քարաչէն տան առջեւ հասաւ: Տունը երկու յարկ էր: Արամ նախ լաւ մը զննեց տունը, հաստատելու համար թէ Քասիմ Աղայի պալատն էր ան — Շուշանիկին գնտանը: Յանկարծ բակին մէջ նշմարեց ձին՝ Քասիմ Աղայի ձին, զոր լաւ կը ճանչնար: Համոզուելով այս մասին Արամ նախ վարի յարկի դուռը բացաւ եւ ներսը ակնարկ մը նետեց: Վարի յարկը ակոտ մըն էր: Գուրսէն սանդուխ մը կար երկրորդ յարկ ելլելու համար:

Ձգուողութեամբ վեր ելաւ եւ դուռը ուշադրութեամբ բանալէ յետոյ, սաւանը շտկելով դրան սեմէն ներս նայեցաւ: Ասդին անդին տարտղնած անկողիններու մէջ կը

պառկէին գիւղացիներ — Քասիմ աղայի ընտանիքը, որոնց մէջ էր անտարակոյս Շուշանիկ :

Որքա՛ն քիչ է միջոցը երբեմն կեանքի ծայրայեղ վիճակներուն մէջ : Հոն անկողնին մէջ բանտարկեալ, հոս դրան սեմը կեցող քաջագործ եւ ճարպիկ եղբոր մը քով ազա՛տ . . . : Սե՛ւ ճակատազիր . . . հաղիւ դեռ չորս տարիներ առաջ գորովալից մօր մը բազուկներուն մէջ դեղեցիկ եւ խաղաղ երազներով քնացող Շուշանիկը, հիմա բռնակալի մը որջին մէջ շրջապատուած անդուլթներէ, իր սոսկալի երազներուն մէջ կը տանջուէր :

— Շուշանի՛կ . . . փսիսաց Արամ անդամ մը եւ յետոյ լուեց :

Արգիլուած էր եղբոր մը իր սիրելի քրոջ կանչել : Արամ, սակայն անհամբերութեան զազաթնակէտին հասած էր : Պէտք էր տեսնել Շուշանիկը՝ իր մօր աւանդը իրեն եւ ազգին : Կ'ըզձար անոր շունչը զգալ իր երեսին վրայ, իր քրոջ տառապակոծ սրտին բարախիւնը կ'ողէր լսել : Գողի մը պէս խարխախելով դռնէն ներս մտաւ : Առաջին անկողնին մէջ պառկող մարդուն դէմքին վրայ ծոցեցաւ եւ նայեցաւ : Քասիմն էր ան : Դող մը եկաւ վրան : Վրէժ-խընդրութեան դողն էր ան : Զեռքը ատրճանակին վրայ դրաւ, բայց շուտով ետ քաշեց : Շուշանիկին ազատութիւնը աւելի կարեւոր էր վրէժխնդրութենէն : Յետոյ միւս անկողնին մօտեցաւ : Այդ Մէհմէտն էր՝ Շուշանիկին նշանածը : Հոս էր որ անոր ջիղերը պրկուեցան : Զայրոյթը իր արամբարնութիւնը չէզոքացուց եւ Արամ երկու ձեռքերը երկնցուց անոր կոկորդին՝ ախառները պինդ սեղմած, բայց նորէն Շուշանիկին սէրը զինք սթափեցուց : Քիչ ատենէն բոլոր անկողինները քնած էր, բայց ով դժբախտութիւն . . . չի կար Շուշանիկը :

— Ա՛խ . . . ա՛խ . . . հառաչեց ան նուազելու չափ յուսահատած :

Յանկարծ մանկական երգ մը լսեց տան մէկ անկիւնէն : Զդուշութեամբ ձայնին եկած ուղղութեամբ քալեց :

Հեռաւոր անկիւն մը, աղտոտ անկողնի մը մէջ, թխադոյն ճոխ վարսամներու մէջէն մանկական անմեղ աչքեր հոգեթով ժպտով իրեն նայեցան :

— Փառք քեզ Տէր, ըսաւ Արամ իւրովի, եւ անոր դէմքին վրայ ծոցեցաւ : Աչքերէն արցունքը աղջկան ճոխ, թըխադոյն վարսամներուն վրայ հոսեցաւ : Շուշանիկն էր . . .

Թխադոյն ճոխ վարսերուն մէջէն իր օգնութեան հասնող քաջ եղբոր մը ժպտող դէմքը Շուշանիկինն էր : Անմեղ հրեշտակի մը կը նմանէր անոր դէմքի քնքշութիւնն ու անմեղ արտայայտութիւնը : Յանձնուած երանելի քունին, եւ հաւանարար մոռցած իր անտանելի բաղդը, կը ժպտէր ան երազներու երջանիկ միջավայրին մէջ : Թերեւս ան իր երազին մէջ Արամին հետ էր, ձեռք ձեռքի կամ գիրկընդխառն :

Արամ անոր սնարին քով շարունակ կուլար : Վերջապէս անտանելի կարօտին զոհացում տալ աշխատեցաւ :

Այտերը դեռ արտասուքով թաց, ան իր ձեռքը երկընցուց քրոջ վարսերուն, որոնցմէ փունջ մը իր ձեռքին մէջ առնելով շրթունքներուն տարաւ եւ յետոյ վարսերու մէջ փունջով այտերը չորցուց : Յետոյ համարձակեցաւ իր քրտնած ձեռքը Շուշանիկի ձիւնասպիտակ ճակատին մօտեցնել լալով : Ի՛նչ երջանիկ բոպէ մ'էր ան, ի՛նչ երկնային սէր . . .

— Շուշանիկ, թանկազին քոյր, պաշտելի քոյր, բացազանչեց Արամ ցած ձայնով, իր ձեռքով շայելով անոր վարսերը : Ահաւաստիկ եկայ քեզի Շուշանիկ, սիրելի քոյր, քնքոյշ քոյր :

Յետոյ չի կրցաւ հանդուրժել կարօտի անզուսպ մղումին եւ երեսը մօտեցուց իր քրոջ երեսին : Բայց կարծես այսքանով ալ չյագեցաւ : Շրթունքները անոր երեսին վրայ դրաւ եւ լացաւ : Տաք, տաք, թափթփող արտասուքի կաթիլները Շուշանիկի երեսը կարծես այրեցին, որովհետեւ ան պզտիկ շարժում մը ըրաւ : Անմիջապէս ետ քաշուեցաւ Արամ վախցած : Ամէնէն վտանգաւոր դէպքը

Շուշանիկին արթննալն էր : Արդեօք ան երբ զինք տեսնէր մութին մէջ պիտի ճշա՞ր վախէն : — Շուշանիկ, մի վախնար, ես եմ, Արամը, քեզ հիմա պիտի ազատեմ : Մի վախնար, Շուշանիկ... ես եմ, քու եղբայրդ Արամը : Եկայ որ քեզ ազատեմ : Ամէն միջոց պատրաստ է : Զինուած եմ : Ինքզինքս ուրուական պիտի ձեւացնեմ եթէ արթննան :

Շուշանիկ յանկարծ աչքերը բացաւ :

— Մի—մի վախնար Շուշանիկ : Տե՛ս, ես եմ, Արամը : Քեզի խոստացայ անցեալ օր որ քեզ պիտի ազատեմ : Ահա հաւաստիկ եկայ : Զայն մի հաներ :

Շուշանիկին ձեռքերը սեղմեցին եղբոր ձեռքը :

— Արամ, Արամ, եղբա՛յրս... լացաւ Շուշանիկ :

— Մի վախնար, անմիջապէս ել եւ սա ետեւի դռնէն վար իջնելով ինծի սպասէ :

Շուշանիկ անմիջապէս ոտքի ելաւ հնազանդելու համար Արամին :

— Շուշանիկ, շուրջդ այսպէս սաւան մը փաթթէ, որ երբ արթննան եւ ես ուրուականի շարժումներ ընեմ, համոզուին թէ դուն ալ ուրուական մըն ես :

Շուշանիկ կէս ջուն կէս արթուն համակերպեցաւ եւ հազիւ դրան սեմին հասած էր, երբ Քասիմ Սղան «ո՞վ է» պոռաց, աչքերը մութին մէջ լայն բացած :

— Խը՛ն, խը՛ն, հաւ, հաւ, հաջեց Արամ շան մը պէս, եւ ձեռքերը դէպի առաջ երկնցուց, մատները բացաւ : Խը՛ն... խը՛ն...

Այս միջոցին դրեթէ ամբողջ ընտանիքը արթնցած էր :

— Ես—ես— Մուհամմէտն եմ : Գերեզմանէն ելլելով ամէն գիշեր հաւատարիմներու տունները կը պատիմ : Հաւ հաւ, մի՛ շարժիք, եթէ ոչ կը մեռնիք :

— Լէ իլախէ իլալա՛հ... բացադանչեց Քասիմ :

— Սիւպհա՛ն Ալլախ... փրցուց Մէհմէտ :

— Խալիֆ իւլ Ազի՛մ... ողեկոչեց Քասիմի կինը :

Այս միջոցին Արամ աթոռի մը վրայ Շուշանիկի անկողնէն հանած սաւանը կը փաթթէր :

Դողահար ընտանիքը վերմակները գլուխին քաշած, երբեմն վախով կը նայէին իրենց շուրջը յուսալով թէ ուրուականը, Մուհամմէտի ողին մեկնած ըլլար, բայց սաւանը հոն էր — ձեռմակ ուրուականը :

Արամ հարար իր հրաշագործութեան վրայ, ետեւի դռնէն վար իջաւ : Շուշանիկ իրեն կ'սպասէր վարը :

— Մի վախնար Շուշանիկ, ես աթոռին վրայ սաւան մը փաթթեցի, այնպէս որ անոնք անոր վախէն մինչեւ առտու իրենց տեղէն չեն կրնար շարժիլ : Երթանք, հիմա սաւանները ծալլենք եւ երբ հետապնդող մը տեսնենք սաւանները դարձեալ կը փաթթենք մեր շուրջը :

— Արամ, — քաջ եղբա՛յրս...

— Մինչեւ որ դեռ վրէժս չի լուծեմ, զիս քաջ մի կոչեր, ըսաւ Արամ, ատրճանակը ձեռքին մէջ առնելով :

Քանի մը տուն անցած էին երբ փորձանքներու գլուխ գործոց շունը նորէն Արամին վրայ յարձակեցաւ : Ատրճանակը, Արամ թշնամիի ճակատին ուղղեց եւ պիտի կըրակէր երբ Շուշանիկ զինք կեցուց :

— Կիւմիւշ, Կիւմիւշ, կանչեց Շուշանիկ շան եւ կենդանին ձայնը անմիջապէս կտրելով, պոչը շարժեց ի նշան բարեկամութեան :

Գիւղէն դուրս ելան եւ իրենց քայլերը արագացուցին : Ժամը առաւօտեան 2-ին կը մօտենար :

Գիւղէն կէս ժամ հեռացած էին, երբ սրտերն սկսան ազատութեան խինդը քնարերգել : Աստեղադարդ կամարին տակ, իրարու փաթթուեցան եւ յաղեցուցին իրենց կարօտը : Քոյր ու եղբայր միասին էին նորէն, ի՛նչ մեծ հրճուանք :

Յանկարծ գիւղէն ատրճանակներու ձայներ լսուեցան : Շուշանիկ սոսկաց, բայց Արամ սկսաւ խնդալ իր սրամտութեան յաջողութեան վրայ :

— Շուրջը սաւան փաթթուած աթոռին կը պարպեն այդ հրացանները Շուշանիկ : Դեռ անոնք, մինչեւ որ չին—

ծու ուրուական մը ըլլալը հասկնան, շատ կապար պիտի պարպեն:

— Սխալ կը մտածես Արամ, եթէ տեսնեն որ այլեւս ձայն չի դար ուրուականէն, կը հասկնան անոր շինծու ըլլալը եւ... նորէն մեզ կը բռնեն ու կ'սպաննեն:

— Անհոգ եղիլը դուն Շուշանիկ, ես սաւանին մէջ կատուն ալ փաթթեցի որ պէտք եղած մլաւունը հայթայթէ: Մինչեւ որ կատուն չսպաննուի, չեն կրնար գուշակել անոր խաղ մը ըլլալը: Կատուն ալ չեմ կարծեր որ սպաննուի, որովհետեւ աթոռի տակ տեղ մը կապած եմ. զինք՝ գրեթէ գետնին հաւասար: Պէտք է աճապարենք Շուշանիկ որ ձարապուլիս հասնինք չի լուսցած: Հիմա մտիկ ըրէ. եթէ ճամբան թուրքի մը հանդիպինք, վախի նշան ցոյց պէտք չէ ունենաս: Իսկ եթէ մեզ հարցաքննեն դուն քու անունդ Սիւմալիւ պիտի կոչես, իսկ ես իմ անունս Նէճիպ, որպէս զի մեզ թուրք կարծեն եւ վնաս չի հասցընեն:



ԳԼՈՒԽ Ե.

Զոհ մ'ալ Ազատուած

Շուշանիկ արագուց իր քայլերը մտածկոտ եւ անոնք մինչեւ լոյս հեւ ի հեւ քալեցին: Երկու ժամ հազիւ մնացած էր ձարապուլիս հասնելու, երբ անոնք հանդիպեցան կարգ մը զիւղացի թուրքերու որոնք բարկացոտ թօնով Անգլիացիներու մասին կը խօսէին: Անոնցմէ մին երկու պղտիկ ճամբորդներուն նայեցաւ ուշի ուշով:

— Ասոնք ալ քրիստոնեայի կը նմանին: Ո՞ւր կ'երթաք ծօ, վերջապէս հարցուց ան Արամին:

— Գըղըլ գիւղ կ'երթանք, պատասխանեց Արամ քաջ կերպով:

— Անպիտան կեալուրներ, գիշերը փախչելով ձեր բարեկամ Անգլիացիներուն կ'երթաք չէ՞:

— Անպիտանը դուն ես, կեալուրն ալ դուն ես, է՞նչ պէս կը համարձակիս Քասիմ Աղայի դաւակնորուն այդպէս խօսիլ:

Գիւղացին Քասիմ Աղայի անունը լսելուն պէս ներողութիւն խնդրեց Արամէն եւ դաւադանով իշուն դարկաւ եւ պոռաց «Չօ, չօ...»:

Քոյր ու եղբայր առաջին վտանգը անցնելէ յետոյ շարունակեցին իրենց ճամբան: Բայց քիչ յետոյ ուրիշ դիպուածի մը հանդիպեցան: Աղջիկ մը զիմացի բլուրէն վար կը վազէր օգնութիւն պոռալով, իսկ թուրք երիտասարդ մը զինք կը հետապնդէր հահոյանքով:

Արամ եւ Շուշանիկ իրենց ազատութեան արշաւը դադարեցուցին եւ բլուրին վրայի արշաւը դիտեցին: Աղջիկը բոպիկ եւ զլխաբաց, սուր քարերու վրայէն, փուշերը կ'ընկուտելով վազեց դէպի իրենց, մինչ ետեւի

Թուրք երիտասարդը կրցածին չափ արագ վազելով աղ-
ջիկը կը հետապնդէր:

Հազիւ հարիւր կանգուն հեռաւորութիւն մը կար մեր
ճամբորդներու եւ անծանօթ աղջկան միջեւ, երբ Շուշա-
նիկ փախաց Արամին:

— Արամ չմիջամտես հա՛... երթանք անցնինք մենք:

Արամ արձանի մը պէս անշարժ կեցած՝ աղջկան նա-
յեցաւ եւ աչքան խորասուզուած էր իր մտածումին մէջ
որ Շուշանիկին խօսքերը չի լսեց:

— Անպիտան հայ աղջիկ, քեզ բռնածիս պէս պիտի
սպաննեմ, պոռաց հետապնդող թուրք երիտասարդը իր
դոհնին դրեթէ ետեւէն հասած: Հէ՛յ... բռնեցէք այդ
կեպալուր աղջիկը, կանչեց մարդը Արամին եւ Շուշանի-
կին:

— Աստուած իմ, հայ աղջիկ է, Արամ, Արամ...
երթանք գլուխնիս փորձանք մ'ալ պիտի դայ, աղաչեց
Շուշանիկ քարացած Արամին, մէկ երկու քայլ քաշելով:

Արամ չի շարժեցաւ իսկ եւ աւելի վճռական նայ-
ուածքով հետեւեցաւ դիմացի դէպքին:

Փախստական աղջիկը գրեթէ Արամին մօտեցած էր
երբ Արամ ատրճանակը քաշեց մէջքէն:

— Աղատէ դիս էֆէնտի, այս մարդուն ձեռքէն, կ'ա-
ղաչեմ աղատէ՛... հեծկտաց աղջիկը աղեկտուր՝ Արա-
մին առջեւ ծունկի դալով:

— Մի՛ վախնար: Մի՛ մօտենար — ըսաւ թուրք երի-
տասարդին որ իրեն հասած էր գրեթէ — եթէ ոչ կը վար-
նեմ քեզ:

— Ի՞նչ իրաւունք ունիս դ—

— Թա՛նկ, Արամ թուրքի ոտքին քով հատ մը սար-
պեց հասկցնելու համար թուրքին թէ, եթէ համարձակէր
աղջիկը իր ձեռքէն առնելու, զինք գետին պիտի փռէր:

Մինչ թուրք երիտասարդը շուարած իր զոհը եղող
հայ աղջկան այս անակնկալ պաշտպանէն, տասը տասնը-
հինգ քայլ անդին անշարժ կեցած կը մտածէր, Արամ ա-

տրճանակը իր մատներուն մէջ կը դարձնէր ջրայնոտ-
րէն եւ նմանապէս կը մտածէր իր առնելիք քայլի մասին:

— Ինչո՞ւ կը հետապնդես այս աղջիկը, հարցուց Ա-
րամ թուրք կատգած երիտասարդին:

— Իմ նշանածս է ան, պատասխանեց թուրքը, դուն
ո՞վ ես որ անոր պաշտպան կը հանդիսանաս:

— Թա՛նկ... հատ մըն ալ պարպեց Արամ երիտասար-
դին ոտքին քով, իբր աղբարարութիւն թէ ան պէտք էր
իրեն պէս պղտիկ հերոսի մը հետ խօսելու ատեն խօսակ-
ցութեան թօնին եւ ձեւին ուշադիր ըլլար: Այս աղջիկը իմ
քոյրս է, հայ քոյրս է, կը հասկնա՞ս...: Ի՞նչ է անունդ
քոյրիկ, հարցուց Արամ աղջկան առանց հեռացնելու նայ-
ուածքը երիտասարդէն:

— Իմ անունս Արմենուհի է, հայ եղբայր: Այս մարդը
զիս դաղթականներու մէջէն առաւ եւ փախցուց: Պղտիկ էի
այն ատեն: Հիմա դիս իր նշանածը պիտի ընէ: Երբ էր
նպատակը իմացայ, փախայ գիւղէն որ ձարապղիս եր-
թամ եւ Անգլիացիներուն քով պաշտպանուիմ:

— Արամ, աղերսեց Շուշանիկ խեղճուկ ձայնով, ո-
րուն մէջ սարսափի դող մը կար, երթանք, հիմա նորէն
վտանգի կը հանդիպինք:

Արամ ատրճանակը թուրք երիտասարդին ուղղած,
դէպի անոր քալեց, մինչ Արմենուհի դետնի վրայ դողա-
հար կծկուած կուլար: Յանկարծ պղտիկ հերոսը ետ դար-
ձաւ եւ Արմենուհիին խօսեցաւ հրամայողական թօնով.

— Հոս եկուր, Արմենուհի, որ սպակը կատարենք:
Քանի որ այս թուրքին նշանածն էս դուն, պէտք է պա-
կուխ անոր հետ:

— Արմենուհի, սարսափած իր պղտիկ պաշտպանին
նայեցաւ, յետոյ Շուշանիկին՝ որ հաւասարապէս այլայլ-
լած արտայայտութիւն մը հագած էր երեսին վրայ:

— Հոս եկուր, կ'ըսեմ քեզի, պոռաց Արամ քիչ մը
ջրայնացած, ժամանակ չունիմ ես, պակը պէտք է լրա-
նայ որ մեկնիմ:

— Ի՞նչ կ'ընես, Արամ, կանչեց Շուշանիկ, Արամին քով վազելով, դուն խենթե—

— Պիտի դա՞ս, թէ ոչ, դուստր Արամ նորէն Արմենուհիին, սպառնական նայուածք մը նետելով:

Արմենուհի, անձար, Արամին քով դնաց կամակոր:

— Հոս եկուր, փեսացու, հրամայեց Արամ դիմացի թուրք երիտասարդին:

Երիտասարդը տեղէն չի շարժեցաւ:

— Հոս եկուր, եթէ ոչ սրուքներդ ծակ ծակ կ'ընես, սպառնաց Արամ նորէն:

Երիտասարդը ապուշ ապուշ նայելով Արամի մօտեցաւ:

— Մտիկ ըրէ հիմա փեսացու, եթէ շարժում մը ընես, պիտի մեռնիս եւ եթէ ամէն մէկ ըսածս անմիջապէս չի կատարես, նորէն կը մեռնիս, կը հասկնա՞ս: Արմենուհի նշանածիդ մէջքէն այդ կաշիէ դօտին քակէ եւ անոր ձեռքերը ետեւէն լաւ մը կապէ: Աճապարէ՛!...

Արմենուհի մեքենարար հնազանդեցաւ: Այս լրանալէ յետոյ, Արամ Արմենուհիին տուաւ ատրճանակը եւ հրամայեց որ եթէ թուրքը փախչելու փորձ մը ընէ, պարպէ դայն անոր կուրծքին:

— Սպասելու ի՞նչ հարկ կայ, հիմա սպաննեմ գինք եւ երթանք, յայտարարեց քաջ Արմենուհի որ 15 տարեկան էր, թէ եւ ծարմնով յաղթանդամ:

Արմենուհիին ատրճանակը ձեռք առաւ, սպասեց Արամի երկրորդ հրահանգին:

— Հիմա ձորին մէջէն պիտի քալենք եւ դուն փեսացու, մեզ այս ձորին մէջէն պիտի առաջնորդես ձարապօլիսի մօտ տեղ մը ուր պսակը պիտի կատարենք, հարսդ քեզի պիտի վերադարձնենք եւ գիւղը պիտի վերադառնաս: Ես այս ճամբաները շատ լաւ չեմ գիտեր, թէ եւ դաղթականութեան ատեն այստեղերէն անցած եմ: Հիմա եթէ կեանքդ քեզի արժէք ունի, մեզ ամենամայր տեղերէն ողջ առողջ ձարապօլիս կ'առաջնորդես եւ կը վերադառնաս:

— Ո՛չ, ո՛չ, օգնութիւ՛ն... Իսլամներ, օգնութիւ՛ն... դուստր երիտասարդը յանկարծ:

— Լռէ՛, դուն իմ մօրս ոճրագործը, եթէ ոչ կ'սպաննեմ քեզ, ճչաց Արմենուհի ատրճանակը երիտասարդին գլխուն ուղղած: Պրն. Արամ, հրաման տուր ինձի որ սպաննեմ այս շունը: Իմ մայրս գիշեր մը գիւղէն դուրս ձորի մը մէջ սպաննեցին թուրքերը:

— Մոռցայ, փեսացու, որ ձայն կընայիր հանել. սա բերանդ լաւ մը կապեմ որ մեզ չմատնես:

Ձորին մէջ արդէն իջած էին: Պզտիկ առուակ մը կարկաչելով վար կը վազէր: Արամ թուրքին բերանը լաւ մը կապեց եւ հրահանգեց որ զիրենք առաջնորդէ:

Հաղիւ կէս ժամ քալեցին կանանչապատ ձորին մէջէն, երբ հայերէն խօսքեր լսեցին իրենց ետեւէն:

— Շուտ ըրէ, Սարգիս, այս ձորը ապահով է, շատ ալ ճամբայ չմնաց, խօսեցաւ մէկը ձորին մէջ:

— Կուգամ, Վահան, դուն ինձի մի սպասեր, քալէ, քալէ: Հիմա կը հասնին մեր ետեւէն, պատասխանեց ուրիշ մը աւելի հեռուէն:

— Արամ, ասոնք ովքե՞ր են արդեօք:

Արամ այս միջոցին արդէն կեցած, մտիկ կ'ընէր:

Ոտքի ձայները հետզհետէ մօտեցան եւ քիչ յետոյ արդէն անծանօթները երեւցան: Անծանօթ հայերը երբ Արամի խումբը տեսան, խօսիլը դադրեցուցին եւ տատամտումի ու շուարումի նշաններ ցոյց տուին:

— Մի վախնաք, եղբայրներ, եկէք, հայեր ենք մենք, եկէ՛ք...:

— Ծօ, Վահան, հայեր են ասոնք ալ:

— Այո, այ՛, հայեր են, եկէք, մի վախնաք: Մենք ալ ձարապօլիս կ'երթանք:

— Հաւատա՞նք անոնց, Սարգիս, հարցուց անծանօթին մէկը իր ընկերոջ:

— Չհաւատարու պատճառ չկայ, իմ անունս Արամ է, եկէ՛ք:

— Արա՛մ... Ի՞նչ կը լսեմ, Սարգիս, արդեօք այս մեր պանդուկը Արա՛մն է:

— Այո՛, այո՛... ես եմ, դադիթականներու պանդուկին Արամը: Քու անունդ Ի՞նչ է:

— Վահանն եմ ես, պատասխանեց անծանօթը ծառերու մէջէն քալելով:

— Վահա՛ն...

— Արա՛մ... Շուշանիկը...

— Հոս է, հոս: Ազատեցի Շուշանիկը:

Անծանօթները աւելի մօտեցան Արամի խումբին եւ երբ դէմ դիմաց իրարու նայեցան, թեւերը բացուեցան, կարօտավառ արտայայտութիւն մը ցոլաց երեսներուն վըրայ, ուրախութեան արտօսքը սկսաւ կաթկթիլ աչքերէն վար, եւ յետոյ յաջորդեց զիրկընդխառնումը, լուռ ու երկայն, խորհրդաւոր եւ սիրածոր:

— Երթանք, Վահան, պատմելու ժամանակ չկայ հիմա ամէն բան, բայց ուկի՞ց կուզաք դուք:

— Պերէճիկէն, պատասխանեց Սարգիս:

— Երանի՛ր քեզի, Արա՛մ, քոյրդ դտած ես, ես — միւս մինակ եմ աշխարհի մէջ:

— Մայրդ ո՞ւր մնաց, Վահան:

— Մա՛յրս... հոս Վահանի ձայնը խեղդուեցաւ: Յետոյ շարունակեց լալով, մայրս հիւանդութենէ մեռաւ...

Լռութիւնը յաջորդեց դոյժին: Գլուխները տխուր յիշատակներով բեռնաւորուած, սեւ հողին ծոցեցան եւ սիրտերը լացին, ինչպէս նաեւ աչքերը պարպեցին իրենց արտասուքի վերջին պաշարն ալ արիւննաներկ հողին վրայ:

— Բայց այս մարդը ո՞վ է, հարցուց վերջապէս Սարգիս:

— Այս մեր փեսացուն է, խնդաց Արամ արցունքներու մէջէն, քալենք որ ձեզի պատմեմ:

Քայլեցին. մինչ Արամ իր վերջին քաջադործութեան պատմութիւնը կ'ընէր:

Երբ հերոսական պատմութիւնը լրացուց Արամ, Վա-

հան ուրախութենէն անոր վիզին փաթթուեցաւ ու համբուրեց:

— Կեցցե՛ս Արամ, բացազանչեց Վահան:

— Շուտ քալէ, ընդմիջեց Արմենուհի թուրք փեսացուին, ետեւէն ատրճանակը դպցնելով:

— Կեցցե՛ս Արմենուհի, պոռաց Սարգիս:

Թուրքը յանկարծ կեցաւ եւ մատներով ցոյց տուաւ դաշտ մը ձորէն անդին ուր ճերմակ վրաններ կային: Ամէնքը դաշտին նայեցան. յետոյ դիտեցին հովահար յաղթական դրօշակը որուն վրայ մահիկ չկար — անգլիական դրօշակն էր:

— Արմենուհիին ըսենք եւ թող վրէժը լուծէ այս թուրքէն, թեւաղբեց Սարգիս:

— Օ՛հ, ո՛չ, զինք Արմենուհիին հետ պիտի պսակենք, բողբեց Արամ:

Արամ թուրքին բերանին շուրջ կապուած կտաւը կը քակէր այս միջոցին:

— Արմենուհի, նշանածիդ Ի՞նչ ընենք, հարցուց Վահան:

— Եթէ ինծի մնայ, ես զինք դժոխք կը զրկեմ, որպէս զի նահատակ մայրս դրախտէն վկայէ իր աղջկան վրէժին զոհերէն մէկուն դժոխքի կրակին մէջ նետուելը, բայց հարկաւ Պրն. Արամ ինչ որ հրամայէ, Այդպէս կ'ընենք:

Այս միջոցին Արամ թուրքին գլուխն կտաւը քակած, անոր երեսը կը դիտէր ուշադրութեամբ:

— Ի՞նչ կ'սպասես, Արամ, պոռաց Վահան, տես, ամէնքս ալ որք մնացած ենք: Քոյր, եղբայր ամէն բան կորուսած, թողէք զիս որ զինք իմ վրէժիս պռաջին զոհը ընեմ: Այսպիսի թուրք մը չէ՞ր իմ քոյրս փախցնողը: Խեղճ Արմենուհի՛, լացաւ Վահան, զինք անգամ մըն ալ պիտի կրնա՞մ տեսնել արդեօք... Վահան ատրճանակը պիտի կրնա՞մ տեսնել արդեօք... Վահան ատրճանակը ետ չի խլէր, Վահան պիտի կրակէր թուրքին վրայ:

— Կեցիր Վահան, թելադրեց Արամ մեծապէս զգածուած, վրէժնիս պէտք է լուծենք, բայց ոչ այս մարդէն: Գանի որ ան հիմա անճար մեր ձեռքին մէջ է, անոր մահը ինձի վրիժառութեան դոհացում չի տար: Այո, պէտք է լուծենք վրէժնիս, բայց կոուելով: Որպէս զի դաս մը տանք թուրքերուն, ես այս երիտասարդը ազատ պիտի ձգեմ որ պատմէ Հայուն վեհանձնութիւնը իր ստորին ազգակիցներուն: Մտիկ ըրէ հիմա թուրք, քանի որ մեր ձեռքին մէջ ինկար այսպէս անզէն ու անպաշտպան, քեզ ազատ պիտի ձգեմ: Գուք անդուժներ, մեր անպաշտպան քոյրերն ու մանուկները, նոյն իսկ ծերերը անամօթաբար սպաննեցիք եւ առեւանգեցիք: Ձեզմէ վրէժս պիտի լուծեմ, բայց ոչ թէ ձեր կիներէն, մանուկներէն կամ ծերերէն, այլ ձեր կոռուղներէն՝ կոուելով:

Գնա՛, եւ փառք տուր Հայուն վեհանձնութեան:

Թուրք երիտասարդը ներողութիւն խնդրեց իր յանցանքին համար, ծոցեցաւ Արամին ոտքերը համբուրեց առ ի երախտագիտութիւն եւ ձեռքերը ետեւ կապուած քալեց ձորն ի վեր դէպի իր գիւղը:

Սումբը քալեց դէպի ճարապօլիս ուր 10 վայրկեանի մէջ հասաւ եւ դադիթականներու կայանին մէջ հիւրասիրուեցաւ անդլիացիներու եւ ամերիկացիներու կողմէն: Իրենց սենեակ մը տուին, ինչպէս նաեւ կերակուր, հագուստ, կօշիկ եւ անկողին:

Բայց չուղեցին հոն երկար մնալ, պատրաստութիւն տեսան մեկնելու դէպի իրենց ծննդավայրը որ ազատուած էր այլեւս թուրք բռնապետութենէն: Անոնք լսեցին որ Հայ կամաւորական խումբեր կային Կիլիկիա: Արամ եւ Վահան որոշեցին կամաւոր արձանագրուել եւ վրէժ լուծել:

Գիշերը վրայ հասաւ, ամէն մարդ չոր գետնին վրայ պաթանիայի մը տակ պառկեցաւ: Արմենուհի եւ Վահան դեռ կը խօսէին, երբ Արամ Սարգիս եւ Շուշանիկ քնացան:

Վահան սկսաւ պատմել Արմենուհիին թէ ինչպէս իր քոյրը, որուն անունն ալ Արմենուհի էր, փախցուած էր թուրքի մը կողմէն Շուշանիկի պէս:

— Իրա՛ւ առջի անունը Արմենուհի էր, հարցուցած էր Արմենուհի պատմութեան սկիզբը: Ինձի երբեք կը նմանէ՞ր:

— Շիտակը երբ քեզ տեսայ Արմենուհին կարծեցի, բայց անոր երեսը աւելի ձեւմակ եւ լեցուն էր: Ճակտին վրայ ալօսներ չկային, ձեռքերը այդպէս կոշտացած չէին, ձայնը աւելի իրական էր, մաղերը աւելի խարտեաչ էին, պատասխանած էր Վահան:

Բայց երբ Վահան պատմութեան վերջաւորութեան կը մօտենար, Արմենուհի սկսաւ դողդղալ, կարծես վախցած՝ դունատեցաւ, խենդ ու խելառ շարժումներ սկսաւ ընել եւ երբ պատմութիւնը լրացաւ, Արմենուհի Վահանին գլուխը թեւերուն մէջ սեղմած աւետեց աշխարհին. Գտա՛յ... դտայ եղբայրս... գտա՛յ... գտա՛յ...:

— Գիտէի որ դուն իմ քոյրս Արմենուհին պէտք էր ըլլայիր, հեծկտաց Վահան: Քոյրս, Արմենուհի՛... ա՛խ... երանի թէ սպաննէի այդ թուրքը: Արամն է յանցաւորը:

— Ի՞նչ կայ, Վահան, հարցուց Արամ, Արմենուհի արձակած զգլխիչ ձիշերէն արթննալով:

— Բան չկայ, Արամ, բան չկայ, արցունքներու մէջն թոթովեց Վահան, Արմենուհին իմ քոյրս է...:

— Շուշանի՛կ... Շուշանի՛կ, ելի՛ր, արթնցիր, մեր ազատած աղջիկը Վահանին քոյրն է եղբր, պոռաց Արամ ուրախութենէն:

— Ի՞նչ է այս աղմուկը, Աստուած սիրէք, լուցէք որ քիչ մը քնանանք, գանգատեցաւ Սարգիս, քնատ աչքերը շփելով:

Բայց անոնք չքնացան: Երջանկութիւնը անսահման էր: Հետեւեալ առտու արդէն շոգեկառքին մէջ նստած կը սուրային դէպի Կիլիկիա, իրենց ցանկալի հայրենիքը:

Քաղցր Հայրենիք

Առանա հասան: Փրանսական զինուորներ լեցուն էին: Հայ կամաւորներ ազգային երգեր կ'երգէին փողոցներուն մէջ: Սարգիս իր հայրը գտաւ Ատանայի մէջ եւ քոյրերէն մէկն ալ օր մը զինք գտաւ գաղթականին մէջ: Վահան եւ Արմենուհի իրենց տան մէջ տեղաւորուեցան, ուր Արամ եւ Շուշանիկ հիւրասիրուած էին:

Մի քանի օր հազիւ անցաւ, երբ Արամ եւ Շուշանիկ հրաժեշտ առին իրենց բարեկամներէն եւ կարաւանին խառնուելով Հաճըն՝ իրենց ծննդավայրը հասան: Իրենց քարաշէն տունը թուրքեր արդէն պարպած եւ փախած էին: Հին յիշատականեր վերակենդանացան անոնց սրբտերուն մէջ: Շուշանիկ իր սենեակը ճանչցաւ: Արամ յիշեց իր ձիերը, որոնք վարի ախոռին մէջ էին — Ժամանակին: Իրենց մօտ ծաղկաստանը կար անգին, անխնամ եւ առանց ծաղիկի: Հօր գրադարանը կար առանց գրքի, մերկ ու անսլո՛ճոյճ: Սենեակէ սենեակ անոնք ելան ու մտան: Շուշանիկ իր օրօրոցը գտաւ: Մոռցած մեծ կորուստը զայն քիչ մը շարժեց, բայց ձեռքը այրեցաւ: Մայրը չկար, մայրը չէր գար, երբեք պիտի չգար: Օրօրոցը առանց օրօրի, Շուշանիկ առանց մօր մնացած էին եւ միշտ ալ այդպէս պիտի մնային: Արամ փոշիներու մէջ եւ յիշեց որ մայրը զայն կը կարգար, երբ դատիկաններ կէս փշերին այնկարծ ներս մտած եւ հայրը տարած էին: Ո՞հ, վերջապէս կեանքը համ չունէր: Ինչո՞ւ իրենք ալ չէին մեռած: Բայց... ո՛չ... պէտք էր պարել: Սրբազան պարտականութիւն մը կար կատարելիք: Իրենց

ծնողաց ոճրագործները անսպառիտ մնալու չէին: Հաշուեյարգարութեան մը պէտքը կար անոնց հետ եւ Արամ պատասխանատու էր ասոնց կատարելագործման:

Ողջ մնացած Հաճընցիներ մի քանի օր վերջ արդէն վերադարձած էին իրենց ծննդավայրերը: Շուշանիկ եւ Արամ դրացիներու օգնութեամբ տան կահկարասիները չակեցին: Շուշանիկ Արամին կերակուրները կը պատրաստէր, իսկ Արամ հօր առնելիքները գանձեց պահ մը: Իրենց ազգականներէն ոեւէ մին չէր վերադարձած այն ատեն:

Օր մը, մինչ քոյր ու եղբայր կը ճաչէին, դուռը դարնուեցաւ: Չափահաս կին մը լալով ներս եկաւ եւ զիրենք դրկեց ու լացաւ: Ո՞վ էր այս կինը: Իրենց մօրաքոյրը, Տիկին Սաթենիկն էր, որ իր ընտանիքին ոսկորները անապատներուն վրայ թողած միս միսակ իր ծննդավայրը վերադարձած էր: Արամ եւ Շուշանիկ իմացան անոր ով ըլլալը, միասին լացին մի քանի օր եւ յետոյ Արամը կորսնցուցին: Ան երեք օր տուն չեկաւ, ոչ ալ իր քրոջ իմացուց թէ ո՞ւր կը պահուրտէր եւ ի՞նչ կ'ընէր:

Շուշանիկ իր դրացիներուն հարցուց Արամի մասին, թէ եւ ոմանք զինք տեսած էին, բայց ոչ մէկը կրցաւ ցուցնել կամ լուր տալ որոշ վայր մը, ուր կարելի էր զայն գտնել:

Օր մըն ալ, յանկարծ աղմուկ մը լսուեցաւ հրապարակէն: Հետաքրքիրներու խումբին խառնուած Շուշանիկ հրապարակ փութաց: Խումբ մը զինուած ձիաւորներ զիրար կոխկռտող բազմութիւնով շրջապատուած բանախօսի մը մտիկ կ'ընէին, որ նմանապէս զինուած էր:

— Փոխվրէժ... այո՛, փոխվրէժի Ժամն է այն, գոչեց բանախօսը բռունցքը սաստիօրէն վար լիկեցնելով: Ահաւասիկ տասն եւ երկու երիտասարդներ պատրաստ են վրէժ լուծելու, բայց կոչ կ'ընեմ ձեզի, ով վերապրող երիտասարդներ, որ միանաք մեզի սրբազան գործի մը համար: Տեսէք, ես որք եմ մնացեր, ամէնքս մեր սիրե-

Քաղցր Հայրենիք

Ատանա հասան: Ֆրանսական զինուորներ լեցուն էին: Հայ կամաւորներ ազգային երգեր կ'երգէին փողոցներուն մէջ: Սարգիս իր հայրը գտաւ Ատանայի մէջ եւ քոյրերէն մէկն ալ օր մը զինք գտաւ զաղթականին մէջ: Վահան եւ Արմենուհի իրենց տան մէջ տեղաւորուեցան, ուր Արամ եւ Շուշանիկ հիւրասիրուած էին:

Մի քանի օր հաղիւ անցաւ, երբ Արամ եւ Շուշանիկ հրաժեշտ առին իրենց բարեկամներէն եւ կարաւանին խառնուելով Հաճըն՝ իրենց ծննդավայրը հասան: Իրենց քարաչէն տունը Թուրքեր արդէն պարպած եւ փախած էին: Հին յիշատակներ վերակենդանացան անոնց սրբտեղուն մէջ: Շուշանիկ իր սենեակը ճանչցաւ: Արամ յիշեց իր ձիերը, որոնք վարի ախոռին մէջ էին — ժամանակին: Իրենց մօտ ծաղկատանը կար անդին, անխնամ եւ առանց ծաղիկի: Հօր դրազարանը կար առանց գրքի, մերկ ու անալ շոյճ: Սենեակէ սենեակ անոնք ելան ու մտան: Շուշանիկ իր օրօրոցը գտաւ: Մոռցած մեծ կորուստը զայն քիչ մը շարժեց, բայց ձեռքը այրեցաւ: Մայրը չկար, մայրը չէր գար, երբեք պիտի չդար: Օրօրոցը առանց օրօրի, Շուշանիկ առանց մօր մնացած էին եւ միշտ ալ այդպէս պիտի մնային: Արամ փռչներու մէջ եւ յիշտ ալ այդպէս պիտի մնային: Մօրը Մր. Գիւրքն էր: Մտաջէն Մր. Գիւրք մը գտաւ: Մօրը Մր. Գիւրքն էր: Մտաջէն եւ յիշեց որ մայրը զայն կը կարդար, երբ ոստիկաններ կէս գիշերին այնկարձ ներս մտած եւ հայրը տարած էին: Ո՞հ, վերջապէս կեանքը համ չունէր: Ինչո՞ւ իրենք ալ չէին մեռած: Բայց... ո՞չ... պէտք էր ասլիլ: Սրբազան պարտականութիւն մը կար կատարելիք: Իրենց

ծնողաց ոճրագործները անպատիժ մնալու չէին: Հաշուեյարդարութեան մը պէտքը կար անոնց հետ եւ Արամ պատասխանատու էր ասոնց կատարելագործման:

Ողջ մնացած Հաճընցիներ մի քանի օր վերջ արդէն վերադարձած էին իրենց ծննդավայրերը: Շուշանիկ եւ Արամ դրացիներու օգնութեամբ տան կահկարասիները շտկեցին: Շուշանիկ Արամին կերակուրները կը պատրաստէր, իսկ Արամ հօր առնելիքները դանձեց պահ մը: Իրենց ազգականներէն ոեւէ մին չէր վերադարձած այն ատեն:

Օր մը, մինչ քոյր ու եղբայր կը ճաչէին, դուռը դարնուեցաւ: Չափահաս կին մը լալով ներս եկաւ եւ զիրենք դրկեց ու լացաւ: Ո՞վ էր այս կինը: Իրենց մօրաքոյրը, Տիկին Սաթենիկն էր, որ իր ընտանիքին ոսկորները անպատենըուն վրայ թողած միւս միմակ իր ծննդավայրը վերադարձած էր: Արամ եւ Շուշանիկ իմացան անոր ով ըլլալը, միասին լացին մի քանի օր եւ յետոյ Արամը կորսնցուցին: Ան երեք օր տուն չեկաւ, ոչ ալ իր քրոջ իմացուց թէ ո՞ւր կը պահուեալէր եւ ի՞նչ կ'ընէր:

Շուշանիկ իր դրացիներուն հարցուց Արամի մասին, թէ եւ ոմանք զինք տեսած էին, բայց ոչ մէկը կրցաւ ցուցնել կամ լուր տալ որոշ վայր մը, ուր կարելի էր զայն գտնել:

Օր մըն ալ, յանկարծ աղմուկ մը լսուեցաւ հրապարակէն: Հետաքրքիրներու խումբին խառնուած Շուշանիկ հրապարակ փութաց: Խումբ մը զինուած ձիաւորներ զիրար կոխկոտող բազմութիւնով շրջապատուած բանասօսի մը մտիկ կ'ընէին, որ նմանապէս զինուած էր:

— Փոխ-վրէժ... այո՛, փոխ-վրէժի ժամն է այն, գոչեց բանախօսը բուռնցքը սաստիկօրէն վար իլեցնելով: Ահաւասիկ տասն եւ երկու երիտասարդներ պատրաստ են վրէժ լուծելու, բայց կոչ կ'ընեմ ձեզի, ով վերապրող երիտասարդներ, որ միանաք մեզի սրբազան գործի մը համար: Տեսէք, ես որք եմ մնացեր, ամէնքս մեր սիրե-

լինե՞րու ցաւը ունինք, վրէժը կ'այրէ մեր կուրծքերը: Փոխ-վրէժի ժամանակը հիմա է: Գիւշ յետոյ, առիթը ան-
ցած պիտի ըլլայ, ճակտաագրին պիտի համակերպինք,
արդէնքներ պիտի շատնան: Հօրս աւերակ օճախին մէջ
ես ձայն մը կը լսեմ միշտ, հրամանի մը մտիկ կ'ընեմ, հօ-
րըս ձայնը, մօրս հրամանը թէ՛ պէտք է լուծեմ իրենց
վրէժը: Դուք ալ վստահ եմ որ կը լսէք միեւնոյնը, ձեր
սիրելիներուն ալ փափաքը միեւնոյնն է: Ի՞նչ մնացեր է
մեզի որ կեանքը արժեցնէ, մեր ասլըիլը արդարացնէ, եթէ
ոչ նահատակ Հայութեան վրէժը: Եթէ այդ ալ պիտի չը-
նենք, աւելի լաւ է որ չասլըինք: Եթէ ես պիտի չաշխա-
տիմ հօրս ու մօրս վրէժը լուծելու, աւելի լաւ է որ հիմա
մեռնիմ: Կա՞ն արդեօք երիտասարդներ որոնք կ'ուզեն
հիմա մեզի միանալ այս նպատակին համար:

— Ե՛ս... Ե՛ս... ես ալ կուգամ, պատասխանեցին
50-ի մօտ երիտասարդներ:

Շուշանիկ այս միջոցին հաղիւ կըրցած էր ամբոխը
ձեղքելով բանախօս Արամին առջեւ կենալ: Արամ, Ա-
րամ, կանչեց ան մի քանի անգամ, բայց «կեցցէ»ները
անոր ձայնը խեղդեցին:

Խումբը երթալով մեծցաւ: Ձէնքը առնողը խումբին
միացաւ, «Մեր Հայրենիք»ը երկինք թնդացուց եւ ամէն
մարդ պատրաստուեցաւ վրէժի, երբ գիւղի մեծաւորնե-
րէն մի քանի մարդիկ Արամի քով մօտեցան:

— Տղա՛ս, ըսաւ մեծաւորներէն մին, վրէժ լուծել ա-
ղէկ է, բայց մենք հիմա վրէժ լուծելու ի վիճակի չենք:

— Տաքցուի մի՛ ըլլաք նոշէն, տղա՛ք, մեր գլխուն
փորձանք մըն ալ մի հանէք, բողոքեց ուրիշ մեծաւոր մը:

— Ձեր խեղդ ու խելատ խօսքերն էին որ մեզ աքսորել
տուին, աւելցուց ուրիշ մը:

— Վրէժ կ'ուզենք մենք, վրէժ՛... պատասխանեցին
երիտասարդները միաբերան:

— Ալ մեզի ի՞նչ կրնան ընել Թուրքեր, խօսեցաւ Ա-
րամ, եթէ մենք այս առիթը չգործածենք եւ Թուրքերուն

լաւ դաս մը չտանք, անոնք նորէն պիտի համարձակին
մեզ կոտորել:

— Տղաս, դուն տաքարիւն ես դեռ: Փրանսան կայ
մեր կոնակը: Երբ մենք մեր ուրոյն պետութիւնը ունե-
նանք, վրէժի մասին կը մտածենք: Մինչ այդ, պէտք է
խաղաղասիրական ոգի ցոյց տանք, որպէս զի դաշնակից-
ներ մեզի վստահին մեր հայրենիքին դեկը:

Արամ յուսահատեցաւ վերջապէս, բայց իր արտա-
յայտութիւնը կը ցուցնէր իր դժգոհութիւնը այս միջա-
մբտութեան դէմ: Վար իջաւ իր քարէ բեմէն եւ Շուշա-
նիկը նշմարելով, քովը գնաց:

— Ո՞ւր էիր Արամ երեք օրէ ի վեր, համարձակեցաւ
հարցնել իր քոյրը:

Արամ անխօս խումբին նայեցաւ, ի պատասխան Շու-
շանիկի հարցումին:

— Արամ, խումբէն երիտասարդ մը փափսաց անոր ա-
կանջին, Ատանա երթանք եւ կամաւոր արձանադրուինք:

— Արամ տեղ մը չի կրնար երթալ, պատասխանեց
Շուշանիկ:

— Կրնա՞նք արձանադրուիլ, հարցուց Արամ երիտա-
սարդին, եւ մեզի կուուելու առիթ պիտի տա՞ն:

— Ես կարծեմ թէ երկուքն ալ կարելի է:

— Իրա՞ւ կ'ըսես, ուրախացաւ Արամ:

— Բացարձակապէս:

— Հիմա պատրա՞ստ ես երթալու:

— Անմիջապէս:

— Մնաք բարի Շուշանիկ, մի լար քոյրս: Եթէ իմ
երջանկութիւնս կ'ուզես, ձգէ որ երթամ, եթէ ոչ վստահ
եղիր որ կեանքը ինձի բնօ մը պիտի ըլլայ: Մնաք բա-
րով: Արամ համբուրեց Շուշանիկի այտերը եւ ձիուն վը-
րայ նստեցաւ:

Գեպի Սէր ու Վրէժ

Կամաւոր Արամ Ատանայի մէջ բաւական Հայերու ծանօթ էր արդէն: Կամաւորի հազուատը իրեն նոր կերպարանք մը տուած էր — կռուողի մը կերպարանքը: Արամենուհի այդ կերպարանքը շատ դիտած էր դադարներէն: Ան Արամին հրաւիրու աչքերուն առջեւ նստած մէկէ աւելի անդամներ կրկնած էր իր ազաչանքը, որ կամաւորի համազգեստը մէկդի նետէ, վրէժի քաղցը մոռնայ եւ միշտ իր քովը, իր տունը մնայ: Բայց Արամ հաստատ կը մընար իր որոշումին վրայ — Վրէժ կամ մահ:

Արամենուհին տունը այդ օր լեցուն էր տասնեակ մը կամաւորներով եւ երկուտասնեակ Հայերով: Վահան վերջին ծայր ուրախ էր, ուրախ էին նաեւ միւս հիւրերը: Երգեր ու պարեր, խինդ ու եռանդ, դոյնդոյն հազուատներ, եւ քահանայի մը ներկայութիւնը կրնա՞ք ենթադրել թէ ինչ կը նշանակէին: Հարսնի՞ք: Ո՛չ, շատ կանուխ էր հարսնիքի հե մար: Արամ իր վրէժը չլուծած հարսնիք պիտի չունենար: Կարճ խօսքով — բայց Արամին չէր յանցանքը: Արամենուհին շատ պնդած էր որ ըլլար, եթէ ոչ ուղղակի, բայց անուղղակիօրէն անտարակոյս: Վահանի նախամեծար համարած մարդն էր Արամ, իսկ Շուշանիկ նամակներու միջոցաւ թերադրած էր որ — թերադրած, պնդած էր որ — Արամ Արամենուհիի հետ նշանուի: Ահաւասիկ ամբողջ պատմութիւնը: Արամ մատանի մը անցուց Արամենուհիին մատը — ձախ ձեռքի չորրորդ մատը — եւ խոստացաւ որ հարսնիք մըն ալ ընեն մօտերս: Այդ խոստումը սակայն պայմանաւոր էր, բայց միայն Արամենուհի եւ Արամ ծանօթ էին այդ պայմաններուն, ո-

րոնց կատարելագործումը կը մնար թէսկան: Հետեւաբար թէեւ նշանուութիւնը լրացաւ յաջողութեամբ, հարսնիքը ապագայի խնդիր էր եւ ապագային պէս ալ անորոշ: Պայմանները: Արամ նախ վրէժը պիտի լուծէր: Հայ Հանրապետութիւնը պիտի հաստատուէր Կիլիկիոյ մէջ եւ յետոյ տեղի պիտի ունենար հարսնիքի թափօրը ազատ հայրենիքի հողին վրայ, դրօշազարդ փողոցներէն դէպի խաչաւոր եկեղեցին... խորանը... ստակադրութիւն...:

Վերջին բառը աւելի կը հմայէր Արամենուհին այդ օր, քան այն պայմանները որոնց իրականացումէն կախում ունէր վերջինին յաջողութիւնը: Արամենուհին վերջինին — նպատակակէտին — հմայքին մէջ կորսուած միտքն — իսկ չէր բերեր, որ պայմաններ դոյնութիւն ունէին: Արամենուհիի համար ստակադրութիւնը գրեթէ սպահովուած իրականութիւն մըն էր:

Կէս դիշերը վրայ հասաւ: Պարերը դադարեցան, երգերը լուցին եւ հիւրեր խօսեցեալներուն ձեռքերը սեղմելէ յետոյ հրաժեշտ առին ու դռնէն դուրս ելան: Արամ քիչ յետոյ տունը ձգեց եւ զօրանոց դնաց:

Նշանուածի կեանքը երջանիկ էր Արամի համար, իսկ վերերջանիկ՝ Արամենուհիի համար: Արամենուհի սիրտը սէր կը քնարերգէր, իսկ Արամ վրէժ կ'երազէր, թէեւ ան կը սիրէր Արամենուհին իր բոլոր սրտով եւ լիութի կը կատարէր սիրահարի իր պարտականութիւնները անոր հանդէպ:

Վերջապէս հասաւ «քրիզ»ը, քաղաքական «քրիզ»ը՝ որ Արամի կեանքին «քրիզ»ը ստեղծեց:

Կիլիկիան պաշարուեցաւ Թուրքերէ: Ֆրանսացիներու կողմէն գրեթէ հակադրուած չեղաւ: Արամի համար իր հատնէր: Միայն համազգեստի մը սիրերութիւնը կը հատնէր: Միայն համազգեստի մը սիրերութիւնը կը հատնէր: Կոխ... բոլոր կամաւորներ լոկ տողանցելու համար էր: Կոխ... բոլոր կամաւորներ կ'ըզձային անոր: Մի քանի մանր մունը գլխադրութիւններ, հասարակ ռազմափորձերու կը նմանէին: Անմիջա-

պէս որ թշնամիներու պարպումը կ'սկսէր, նահանջի մը հրամանը կուզար: Անմիջապէս որ մի քանի թուրքեր դետին իյնային, կամաւորները կը կշտամբուէին եւ նոյն իսկ կը դատապարտուէին մարդասպանութեամբ: Չէ՞ որ անոնք ռազմափորձեր էին միայն եւ սպանութիւն պէտք չէր տեղի ունենար:

Զայրոյթը հետզհետէ կը մեծնար Արամի սրտին մէջ այս կատակերգութեան դէմ եւ օր մըն ալ ան դուրս եկաւ բացարձակ աստամբուութեամբ մը Փրանսական խեղկատակութեան դէմ: Ատանայի շուրջը տեղ մը կուր մը տեղի ունեցաւ եւ երբ թուրքեր նահանջել սկսան՝ հրաման եկաւ կամաւորներուն որ նահանջեն: Արամի ողին սպըստամբեցաւ անոր դէմ եւ առանց անսալու հրամանին, ան շարունակեց կրակելով հետասնդել ամի մը թուրքերը: Չի լսած ձեւացուց Փրանսական սպայի մը կոչը որ դադարի եւ անդադար կրակեց պղտիկ ժայռի մը վրայ, որուն ետեւէն թուրք մը կատարներ կը տեղացնէր իր վրայ:

Կէս ժամ յետոյ կամաւորներ հրամանին անսալով նահանջած էին իրենց բանակատեղին: Արամին անհնազանդութեան ակնատես եղած էին անոնք, որոնցմէ մի քանիներ նոյն իսկ զղջացին որ անոր չհետեւեցան: Բայց ընդհանուր կարծիքը այն էր թէ Արամ սպանուեցաւ: Յանկարծ դիմացի բլուրէն կամաւորի համազգեստով մէկը երեւցաւ: Ոմանք ծպտուած թուրք մը կարծեցին զայն, իսկ ոմանք տարակոյսի մէջ էին թէ կրնա՞ր Արամն ըլլալ: Չինուորը վար իջաւ եւ քարեց բանակատեղին, ուր հետաքրքիր աչքեր զինք կը դիտէին:

— Բարեւ Արամ, ո՞ւր դացիր ծօ՛:

— Կուուելու, պատասխանեց Արամ:

Պահ մը լուսութիւն տիրեց, յետոյ կամաւորներէն մին հարցուց:

— Փախա՞ն թուրքերը:

Այս միջոցին Ֆրանսացի սպան եկաւ դէմքին վրայ քամահրալից զայրոյթ մը հագած:

— Ու էքէ քիւ (ո՞ւր էիր) հարցուց սպան:
Արամ անմիջապէս գէնքը հրամցուց սպային եւ սկըսաւ մէջքի սուրը քակել:

— Բէս քիլ ֆէ, քէս ք'ըսա (ի՞նչ կ'ընէ կոր, ի՞նչ կը նշանակէ այս) հարցուց զարմացկոտ սպան:

— Ես կը հրատարիմ կամաւորութենէ տէր հարիւրապետ, ես կամաւոր արձանագրուեցայ որ կուուիմ, ոչ թէ թուրքերու փախած պահուն նահանջեմ: Թոյլ տուէք որ հրատարիմ ես: Կամաւորի անուան արատ մըն են այսպիսի տղայական կռիւներ եւ քանի որ չէք ձգեր որ կըրուինք, ես ալ աւելի կը նախընտրեմ չին կեանքիս վերադառնալ, քան կամաւորի մը անունը կրել զարդարանքի համար:

Սպան զայրացած թարգմանի մը միջոցաւ յայտնեց թէ բանտ պիտի երթայ:

Բանտն ալ տեսաւ Արամ, բայց վրէժի հուրը եւ կըրուելու ծարաւի չի կորսնցուց: Բանտէն ելլելուն եւ կամաւորութենէ արտաքսուելուն պէս Արամ Արմենուհիին քով գնաց: Խեղճ Արմենուհի, թէեւ իր բոլոր պերճախօսութեամբ, արցունքներով եւ աղաչանքներով խնդրեց որ լքէ անիրականանալի վրէժի գաղափարը, արդիւնք մը ձեռք չկրցաւ բերել, բայց ի կարմիր թաշկինակէ մը զոր Արամ ցուցադրեց իրեն:

— Ի՞նչ է այդ արիւնոտ թաշկինակը, հարցուց Արմենուհի:

— Վրէժիս մէկ մասը:

— Ի՞նչ ըսել կ'ուզես, լուսաբանութիւն պահանջեց

Արմենուհի:

— Մէհմէտին արիւնը:

— Ո՞ր Մէհմէտին:

— Շուշանիկը փախցնող թուրքի տղուն, որ ի՞մ քրոջս

հետ պիտի...

— Ե՞րբ... ո՞ւր... ի՞նչպէս...

— Այն օրը որ զիս բանտ նետեցին : Առտուն կռուի մը դացինը : Թուրքեր, պարտուած նահանջել սկսան եւ մեզի այս խաբեբաները հրաման ըրին որ նահանջենք դէպ ի մեր խրամները : Ես չանսացի այս հրամանին եւ շարունակեցի Թուրքերուն վրայ կրակել եւ անոնց ետեւէն երթալ : Վերջապէս ողջ ողջ բռնեցի այս Թուրքը եւ զինք անմիջապէս ձանչցայ, ինքն ալ խոստովանեցաւ թէ մեր Մէհմէտն էր : Ահաւաստիկ այս թաշկինակը կը բացատրէ մնացածը :

— Ինչո՞ւ կը պահես այդ անօրէնին թաշկինակը, տուր վառեմ :

— Շուշանիկն ալ պէտք է տեսնէ դայն :

— Խեղճ Շուշանիկ, փրցուց Արմենուհի խեղդուած ձայնով եւ արտասուելով :

— Ինչո՞ւ խեղճ եւ ինչո՞ւ կուլաս, ոտքի ցատկեց Արամ :

— Հաճըն պաշարուած է բոլորովին :

— Ո՞վ ըսաւ :

— «Հայ Զայն»ին մէջ կարգացի :

— Ուրիշ, ուրիշ, Գրանսացիներ նահանջած են :

— Այո՛, ո՞ւր Արամ, Արամ, ո՛հ զիս մի ձգեր երթար Արամ : Գլխա ինծի, աշխարհի մէջ զիս միս մինակ մի ձգեր մինչեւ կեանքիս վերջը : Ո՛չ, ո՛չ, պիտի չթողում որ երթամ :

— Ձգէ զիս, պէտք է երթամ, Հաճըն պէտք է երթամ : Շուշանիկ... մօրս ինծի աւանդած կտակը : Ըսի իրենց, ըսի թէ պէտք էր որ վրէժնիս լուծէինք, երբ առիթը ներկայացած էր : Ա՛խ... :

Արմենուհի արտասուած թոր աչքերը անոր երեսին յառած, երկու ձեռքերով անոր օձիքներուն կառչելով կ'աղերսէր որ ինքզինքը կրակի մէջ չնետէ : Գլուէր որ Արամ ուր պիտի երթար այս անգամ -- Հաճըն, եւ Երս մինակ, քրոջ աղատութեան համար :

Կարծես Գարբրիէլ հրեշտակը արդէն Արամին հողին աննելու եկած ըլլար, Արմենուհի կը մաքառէր մահուան դէմ : Գութ կը հայցէր իր երիտասարդութեան, դութ իր սիրոյ, դութ իր երջանկութեան, դութ իր կեանքին համար :

— Չէ՛ Արամ, ո՛չ զիս մի ձգեր, տես դեռ նոր նշանուած ենք, քու վրադ դրած եմ յոյսս, դթա ինծի Արամ : Ձեռ կրնար միս մինակ Հաճըն երթալ, քեզ... :

Բայց Արամ արդէն Արմենուհիին ձեռքերէն իր օձիքը աղատած եւ դուրս ելած էր : Ճամբան հայերէն թերթ մը առաւ, աճապարանօք պարունակութեան տեղեկացաւ եւ արագ արագ քայլով ներս մտաւ սրահէ մը, ուր միջկուսակցային մարմին մը շուարած ժողովի նստած էր :

— Ի՞նչ կ'ուզես տղաս, հարցուց չափահաս մարդ մը, հաւանաբար ժողովին ատենապետը :

— Կ'ուզեմ հասկնալ թէ դուք ի՞նչ կը մտածէք :

Ամէն մարդ Արամի նայեցաւ, անոր յանդգնութեան վրայ զարմացած :

— Իբր Հայ կ'ուզեմ իմանալ թէ ներկայ կացութեան մասին ի՞նչ մտածած էք, ի՞նչ ծրագիր չինած էք, կամ... :

— Ի՞նչ յանդգնութիւն... :

— Յանդգնութիւն չէ պարոն, խոնարհութեամբ կը հարցնեմ թէ Հաճնոյ մասին ի՞նչ կը մտածէք : Պաշարուած Թուրքերուն պիտի ձգէք որ անոնք մեռնին :

— Այդ մասին մենք ալ կը մտածենք երիտասարդ, Գրանսացիներ չեն ուզեր օգնական ոյժ զրկել :

— Հայեր չե՞ն կրնար... :

— Ձեռն ձգեր որ զրկենք : Ռազմածրեք չեն տար :

— Գրանսացիներ չեն այս երկրին տէրերը, մենք ենք : Եթէ Ֆրանսական ալի մը քաղաքագէտներ կը դաւաճանեն եւ ժողովուրդին, մենք պէտք է պաշտպանենք մեր իրաւունքը : Եթէ Ֆրանսական սիրտը պիտի հանդուրժէ որ Հաճնոյ եւ Վահկայի Հայութիւնը կոտորուի, մեր պատիւը, մեր խիղճը, մեր Աստուածը չեն ներեր որ մենք ալ

սրտերնիս կարծրացնենք եւ պառաւներու պէս «մեր ճակատագիրը այս է եղեր» ըսենք:

— Իրաւունքը մերն է տղաս, բայց ոյժը անոնց ձեռքն է, խրատեց մարդը դերթէ լալով:

— Բայց ի՞նչ կրնանք ընել կը կարծես, հարցուց ուրիշ մը:

— Վաղը իշխանութիւնը մեր ձեռքը կ'առնենք:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Հայկական անկախութիւն կը հռչակենք, ահաւասիկ ըսելիքս, եւ արդէն ուրիշ ճար չկայ: Եթէ ոչ Ֆրանսա թոյլ պիտի տայ որ Թուրքեր Ատանան ալ պաշարեն եւ մեզ ալ սուրէ անցնեն:

— Կարելի բան չէ՛, մէջ ինկաւ եկեղեցական ներկայացուցիչներէն մին:

— Միակ միջոցը որ մնացած է, շարունակեց Արամ, էւ եթէ այդ ալ չյաջողի, պատրաստենք մեր պարանոցները որ երբ Թուրքեր զանոնք կոտորեն, Ֆրանսացիներ հանդիսականի դեր կատարեն: Պէտք է ցոյցը, պէտք է վաղը հռչակենք հայկական հանրապետութիւն մը եւ փոխանակ Ֆրանսական էնթրիկներու զոհ երթալու, անկախութեան ճամբուն վրայ մեռնինք:

Միութեան միւս անդամները իրարու երես նայեցան: Միթէ իրաւ չէ՞ր Արամին ըսածը: Ֆրանսա ցոյց առած չէ՞ր արդէն իր անհաւատարիմ պաշտպանի իրողութիւնը:

— Նկատի կ'առնենք այդ տղաս, ըսաւ վերջապէս ժողովականներէն մին:

— Ե՛րբ, դուրս եկաւ Արամին կարուկ հարցումը:

— Մօտերս:

— Ինչո՞ւ հիմա չէ:

— Հանրութեան գաղափարը նախ շօշափել կ'ուզենք այդ մասին:

— Եթէ թոյլ տաք եւ որպէս զի ժամանակ չահինք, ես կրնամ ձեզի համար շօշափել Հայութեան գաղափարը այս մասին:

— Եթէ կրնաս...

— Այո կրնամ, մնաք բարի, այս գիշեր ձեզի կուգամ ժողովուրդին կամքը հաղորդելու:

Երկու ժամ վերջ, ընդարձակ սրահի մը մէջ խուռն բազմութիւն մը հաւաքուած ճառախօսութիւն մը մտիկ կ'ընէր: Բանախօսութեան սկիզբը, կարելի էր տեսնել արկ'ընէր: Բանախօսութեան վերջաբանը «կեցցէ»ներու զգլխիչ աղաղակներուն մէջ կը խեղդուէր: Առաջարկ մը կար եւ անոր ամէն մարդ հաւանութիւն յայտնեց:

— Ազգային Միութիւնը թող գիտնայ որ մենք համախառն ենք, կը բաւէ Ֆրանսական դիւանագիտութեան սիրոյն թափուած Հայ արիւնը, պոռաց երիտասարդ մը բազմութեան մէջէն:

— Կամ անկախութիւն, կամ մա՛հ... պոռացին միւսները:

Արամ յաջողեցաւ ժողովուրդին կամքը առնել «կեցցէ»ներու մէջ եւ աճապարանօք սրահը ձգելով վազեց Ազգային Մարմնոյ ժողովատեղին:

Այս մարմինը արդէն իսկ որոշած էր անկախութեան համար ցոյց մը կատարել: Արամին կարծիքը յաղթանակած էր շուարումին:

— Ամբողջ Հայ ժողովուրդը մէկ սրտով, մէկ հողիով պատրաստ է ցոյցին: Վաղը... վար առնենք Թուրք բաշան եւ թող մեր Հայ բաշան դրաւէ իր տեղը, մեր երկիրն է այս եւ մենք պիտի կառավարենք դայն: Հաճոյ ու Վահայի Հայութիւնը անմիջական պէտք ունի օգնական ոյժերու:

— Պաղարիւն եղիր տղաս, պատուիրեց ժողովականներէն մին, մենք պէտք եղած կարգադրութիւնը ըրած ենք այս մասին եւ վաղը Ամանոսի մէջ հանրապետութիւնը պիտի հռչակուի, իսկ Ատանայի մէջ նմանօրինակ ցոյց մը:

— Իրա՞ւ... Աստուած սիրէք, իրա՞ւ էք թէ զիս կը մխիթարէք, ըսէք: Ո՞վ ցանկալի աղատութիւն... Կիլի-

կիս'... երկիր դրախտալայր: Այս վերջինը Արամ ինք-
նամոռացութեան մէջ թոթովեց: Ես պիտի ըլլամ այն զե-
նուորը որ թուրք բաշան աթոռէն վար պիտի իջեցնէ: Աչ-
քերովս պիտի տեսնեմ մեր կառավարիչին հոն՝ ցանկալի
Կիլիկիոյ Հայ պետութեան կառավարչական աթոռին վրայ
բազմիւր:

Արամ դուրս ելաւ ոգեւորուած եւ ուրախ, բերկրալից
ու վրէժխնդիր եւ երբ սանդուխներէն վար կ'իջնէր, ինք-
նիրեն թոթովեց.

— Մեր Կիլիկիան, Հայոց Կիլիկիան, անկախութիւն
... Շուշանիկը... Վրէժը...:

Իր ոգեւորութենէն առանց հիւլէ մը կորսնցնելու, Ա-
րամ հօտաւ Արմենուհիին դրան առջեւ եւ ներս մտաւ ժող-
տելով: Սենեակին հետաւոր մէկ անկիւնէն, մաղերը ան-
հոգօրէն վար թափած աղջիկ մը թաշկինակը ձեռքին,
լալիան աչքերը իրեն յստեց դարմացմամբ:

— Սրբողեցա՞ր ինձմէ Արմենուհի, հարցուց Արամ
քահ քահ խնդալով, որ բարեւ իսկ չէր տար:

— Արամ... քիչ մը լացաւ Արմենուհի, ես... ես...
կարծեցի որ Հաճըն դացիր Շուշանիկի ետեւէն:

— Նորէն պիտի երթամ, բայց քեզի աղուոր լուր մը
բերի:

— Շուշանիկը աղատա՞ծ է, հարցուց Արմենուհի ան-
համբերութեամբ: Չէ՞ մի որ անոր աղատութիւնովը... լը-
մընցած պիտի ըլլար պայմաններէն մին: Չէ՞ մի որ Շու-
շանիկին աղատուած ըլլալը նաեւ պիտի արդիւնէր Արամը
Հաճըն երթալէ եւ հետեւարար հաւանական մահէ:

— Ոչ, բայց... Արմենուհի, կարծեմ թէ վաղը հարս-
նիքի մատանիները պէտք է պատրաստենք:

Արմենուհի շիկնեցաւ, բայց թաշկինակով արող ա-
րող աչքերն ու երեսը սրբելով, յոյսի պերճախօս ժպիտը
հալաւ, իր արտում ու տժգունած դէմքին վրայ: Խօսիլ
փափաքեցաւ, բայց շուտով ինքզինք անկարող դրաց՝ իր
անհուն բերկրանքը պէտք եղած լեզուով արտայայտելու:

Աւելի մօտեցաւ Արամին եւ անոր աչքերուն մէջ նայեցաւ
ժպտելով եւ դուլիւր աստիճանաբար մօտեցուց անոր աջ
թեւին վրայ, մինչեւ որ ան հանգչեցաւ Արամի բազուկին
վրայ, ո՞ր զինք պիտի սպրեցնէր, պաշտպանէր եւ երջան-
կացնէր: Թխագոյն մագերուն մէջէն Արմենուհիին ժպտող
դէմքը՝ լուսավառ եւ սիրագեղ, առաջին անգամ ըլլալով
Արամի երակներուն ներմուծեց Սէրը իր ամբողջ ուժգ-
նութեամբ, դիւթականութեամբ եւ հմայալից երջանկու-
նութեամբ, Յետոյ: Ո՛չ, Արամ սկզբունքներու տէր մէկն էր,
թեամբ: Յետոյ: Ո՛չ, Արամ սկզբունքներու տէր մէկն էր,
համբուրելու իրաւունք չունէր մինչեւ որ Արմենուհի օ-
համբուրապէս եւ կրօնաւորապէս իրենը չըլլար — պսա-
կուէր:

Արմենուհի սպասեց որ շարունակէր Արամ, որ սա-
կայն լուռ կը մնար:

— Շարունակէ Արամ, խնդրեց Արմենուհի նորէն՝ մէկ
մատով մաղերէն փունջ մը բռնած: Չե՞ս լսեր Արամ:

— Արմենուհի՛, ըսաւ Արամ, կարծես քունէն արթըն-
ցած, չէի կարծեր որ սէրը մարդս այսքան կ'երջանկացնէ:
Այո՛, — լի՛նջ կ'ըսէի — հա՛, միտքս եկաւ, հարսանեկան
մատանիի մասին կը խօսէի: Այո, վաղը հարսանեկան մա-
տանիները ծախու առնենք որ պատրաստ ըլլան եւ...:

— Այո՞...
— Արմենուհի՛, դիտես որ վաղը հայկական անկա-
խութիւն պիտի հաստատուի Կիլիկիոյ մէջ եւ Շուշանիկը
աղատած պիտի ըլլայ Հաճնոյ ժողովուրդին հետ միասին:

— Ո՞վ ըսաւ Արամ:
— Ես կ'ըսեմ, ես պիտի առաջնորդեմ ցոյցը: Մետաք-
սեղէն ունի՞ս տունը:

— Բայց անկարելի բան է այդ Արամ... երա՛զ է...
անս'ւրջ:

— Օ՛հ... ո՛չ Արմենուհի, իրականութիւն պիտի ըլլայ
այդ վաղը: Տես սա բարձր տուները, վաղը անոնց ամէն
մէկուն վրայ հայկական եռագոյնը պիտի ծածանի յաղ-
թականօրէն, փողոցները պիտի թնդան Հայ զինուորներու

վրէժխնդրական երգերով: Վահկայի բերդին վրայ Հայ անկախ դրօշը պիտի ծածանի եւ Հաճնայ լեռները պիտի մաքրուին արիւնոռւշտ Թուրքերէ:

— Արամ, ընդմիջեց Արմենուհի համբերութիւնը հատած, եթէ հարսանեկան մատանիին դնումը այս ըսածներուդ կատարելագործումէն կախում ունի, չեմ գիտեր ալ...

Արամ սակայն խորատուգուած էր վաղուան յոյսերուն մէջ՝ պայծառ ու վսեմ: Կէս ժամ շարունակ ժպտելով դիտեց Ատանայի լոյսերը, տուներն ու հորիզոնը, անխօս եւ լուռ: Յետոյ դարձաւ Արմենուհիին:

— Պատրաստ է դրօշակը, Արմենուհի:

— Ի՞նչ դրօշակ...

— Հայկական եռագոյնը...: Նորէն նայեցաւ պատուհանէն դուրս դէպի Հայոց եկեղեցին:

— Ո՞ւր է դրօշակը Արմենուհի, հարցուց ան նորէն մեքենաբար:

— Դրօշակ չունիմ Արամ:

— Օ՞հ, խնդաց Արամ իր ինքնամոռացութեան մէջ, մետաքսեղէն կ'ուղէի Արմենուհի:

— Ի՞նչ գոյն:

— Կարմիր կապոյտ, նարնջագոյն...

— Երթամ նայիմ, յանձն առաւ Արմենուհի եւ ներս գնաց ուրիշ սենեակ մը: Քիչ յետոյ վերադարձաւ ձեռքը բռնած նարնջագոյն եւ կարմիր մետաքսեղէնի երկու կըտորներ:

— Կապոյտ չկա՞յ:

— ունիմ, բացի... չէ չունիմ:

— Բաց ի ինչէ՞...

— Բաց ի մետաքսեղէն այն կտորէն զոր հարսանեկան հագուստիս համար պիտի գործածեմ:

— Ի՞նչ Արմենուհի ի սէր Հայ Անկախութեան: Գիտեմ որ ան քեզի համար թանկագին է, բայց քու թանկագին ստացուածքդ նուիրէ Հայ Անկախութեան:

Դուռը զարնուեցաւ այս միջոցին եւ Վահան ներս մըտաւ հեւալով:

— Աչքերնիս լոյս Արամ, արտասանեց ան իր թաւ ձայնով: Տեսա՞ր վրէժ լուծելու ժամանակը:

— Տեսնենք թէ որուն լուրը աւելի մեծ է: Ես ալ աւետիս մը ունի քեզի:

— Բերի Արամ, յայտարարեց Արմենուհի ներս մըտնելով եւ ձեռքին մէջ բռնելով ծալլուած մետաքսէ կապոյտ կտորը: Արմենուհի կուլար:

— Այս ի՞նչ է հարցուց Վահան: Նո՞ր ծախու առիք ասոնք: Տես, կարմիր, կապոյտ, նարնջագոյն: Հայկական սքանչելի դրօշակ մը կարելի է շինել ասոնցմէ:

— Մենք ալ միեւնոյն նպատակին համար է որ ասոնք հոս բերած ենք, պատասխանեց Արամ:

— Բայց ինչո՞ւ է այս աճապարանքը: Ուակի՞ց այս յղացումը:

— Դուն չըսած ես քեզի ըսեմ իմ լուրս: Վաղը — Հայկական Անկախ...

— Հանրապետութի՛ւն, աւելցուց Վահան ուրախութեամբ վեր ցատկելով: Կեցցէ՛ Հայ ժողովուրդը, կեցցէ՛ Հայ կամաւորը: Քոյր սրբէ արցունքներդ: Նայէ Արամ, մանուկի մը պէս իր հարսանեկան հագուստի կտորին համար կուլայ, հա՛, հա՛, հա՛...: Քոյրս, Արմենուհի, հարսանեկան հագուստիդ համար ասկէ աւելի պատուաւոր տեղ մը կրնա՞ս երեւակայել — Հայկական պանծալի եռագոյնը:

— Այո, կը հասկնամ, հեծկլտաց Արմենուհի, բայց շատ հարսնիքներ այդ անկախութեան սիրոյն երազներ մ'ուացած են, շատ «սէք»եր անիրականալի:

— Թող հաստատուի Հայ Անկախութիւնը եւ հող չէ Արմենուհի որ ճակատադիրն ալ մեզի հանդէպ տարակուսածիդ չափ անդուծ ըլլայ: Ես չեմ մեռնիր Արմենուհի, մի վախնար: Քու սիրոյդ եթէ բոլոր յոյսերս իսկ կործանին, պիտի ապրիմ:

— Բայց, իրապէս յոյս կա՞յ ձեր աւետիսին իրակա-
նացման:

— Հոս եկուր որ քեզի ըսեմ, թե լաղրեց Արամ, Ար-
մենուհիի թեւէն բռնած զայն դէպի սլառուհան առաջ-
նորդելով, կը տեսնե՞ս այն Քրանսական դրօշակը որ կը
ծածանի, վաղը հարիւր հազար ժողովուրդ անոր տեղ
հայկական եռագոյնը պիտի բարձրացնէ: Հաւատա Ար-
մենուհի, վաղը Հայկական անկախ հանրապետութիւն մը
պիտի հաստատուի հոս:

— Կը հաւատամ... թոթովեց Արմենուհի:

— Մկրատը բեր, մկրատը, բացազանչեց Վահան:

Կարի մեքենան սկսաւ վազել Արմենուհիի ձեռքերուն
տակ: Կէս ժամ յետոյ, փառաւոր հայկական եռագոյն մը
արդէն ձողէ մը կախուած կը մնար սենեակին մէջ, մինչ
երեք լուս տառապակոծ բեկորներ անոր կը նայէին՝ ինք-
նամոռաց:

— Վաղը, ցոյցէն վերջ մատանիները պիտի առնեմ
Արմենուհի:

— Եւ իրիկունը պսակադրութենէ վերջ, ես ալ «զէյ-
պէկ» պիտի պարեմ, յանձն առաւ Վահան:

— Ոչ այնքան շուտ Վահան, թե լաղրեց Արամ, դի-
տէք Շուշանիկն ալ պատրաստ պէտք է ըլլայ:

— Ան ե՞՞ք պատրաստ կրնայ ըլլալ, հարցուց Արմե-
նուհի անորոշութեամբ:

— Մէկ շարաթէն... թերեւս աւելի կանուխ: Անկա-
խութիւնը հաստատուելուն պէս, Հայ օգնական ոյժեր
պիտի ազատեն Հաճրնն ու Վահան:

Գիշերը ուշ ստեն, Արամ ու Վահան, անկախութեան
դրօշակին հետ, եւ անոր տակը, սենեակի մը մէջ կը քնա-
նային: Գունատ ու արցունքոտ դէմքով աղջիկ մը ուրիշ
սենեակի մը մէջ սլառուհանի մը առջեւ նստած արշալոյս-
սին կ'սպասէր աստղերուն հետ: Չար նախազգացումներու
մէջ կը շարձարուէր անոր սիրտը: Պրկուած երակներէն
ներս, հակառակ իր անկեղծ փափաքին, յոյսը չէր կր-

նար թափանցել: Սրտին մէջ սարսուռ մը կար որ յոյսը
կ'սպաննէր: Ինչո՞ւ էր այս անտեղի հոգեկան կացութիւ-
նը, չէր գիտեր, չէր հասկնար, բայց իր իսկ էութիւնը
կարծես ծնունդ կուտար այդ շար նախազգացումներուն:
Ուսկի՞ց կուգային ասոնք, ի՞նչ պատճառ կար անոնց,
Արմենուհի չէր գիտեր: Բայց հոգեկան ներքին ձայն մը
իրեն կ'ըսէր թէ դժբախտութեան պիտի հանդիպէր: Օ՛հ
... ան կ'ատէր այս դէշ նախազգացումը, բայց քանի
կ'աշխատէր զայն իր էութենէն վնասելու, այնքան աւելի
յուսալքումը զինք կը համակէր:

Արշալոյսին կ'սպասէր ան գիշերուան հետ, գիշեր-
ուան պէս լուս ու տրտում... որ խաւարին հետ փարա-
տէին զինք շարժրկող մտածումները:

ԳԼՈՒԽ Ը.

Դէպի կառավարատուն

Երբ արշալոյսը իր չքնաղ ժպիտով ոսկեղօծեց արե-
ւելեան հորիզոնը, Արմենուհի գլուխը պատուհանի սեմին
վրայ հանգչեցուցած կը քնանար: Առաւօտեան քնքոյշ գե-
վիւտը քնքուշօրէն կը շոյթեր անոր մազերը: Տխրութիւնը
իր դրոշմը ձգած էր անոր երեսին վրայ, թէեւ հազիւ նըշ-
մարելի ժպիտ մը կը ցոլար շրթներուն վրայ: Շրջակայքը,
բացի գեփիւտի խորհրդաւոր փափսուքէն, անակնկալնե-
րով յղի լուսթիւն մը պատած էր: Քաղաք մը որ քիչ յե-
տոյ առիւծի մը պէս պիտի մոնչէր, կանգ առած էր նոր
օրուան մը կեանքի ծրագիրները շինելու:

Բայց արեւելեան հորիզոնը հետզհետէ բռնկելով խա-
ւարը սկսաւ վնասել՝ տանիքներու վրայէն: Փողոցներուն
մէջ ոտնաձայներ լսուեցան: Քիչ յետոյ կեանքի եռուզեւը
սկսաւ իր վերելքը դէպի դողում: Ճիշդ այս միջոցին էր
որ Արամ անկողնէն վեր ցատկելով իր գլխուն վերեւ կե-

— Արմենուհի, երբեք մի կարծեր որ Արամ իր պարտականութիւնը քեզի հանդէպ չի ճանչնար: Ոեւէ մէկէն առաջ, ոեւէ բանէ առաջ, ես քուկդ եմ եւ քու երջանկութիւնդ ամէն բանէ առաջ է ինձի համար: Քեզի համար կեանքս իսկ զոհելու պատրաստ եմ, Արմենուհի: Բայց — հոս ան քիչ մը մտածեց — դուն փոխանակ տխրելու պէտք է դնահատես որ ես ազգային պարտականութիւններս կատարել կը ջանամ: Քու եւ իմ երջանկութիւնը կախում ունի Հայ ժողովուրդի երջանկութենէն, ազատութենէն եւ անկախութենէն, եւ որպէս զի Հայ ժողովուրդը երջանկութիւն դոնէ, պէտք է նախ իր ճակատագրին տէրը դառնայ եւ այս իր զաւակներուն պարտաճանաչութենէն ու զոհաբերութենէն կախեալ է: Վերջապէս... այդ օրն ալ հասաւ, այսօր անկախ պիտի ըլլայ Հայ ազգը, իր ճակատագրին, իր հայրենիքին տէրը պիտի ըլլայ եւ պիտի ապահովէ քու եւ իմ երջանկութիւնը: Առ՝ ահաւաստիկ հարսանեկան մատանիները: Առ դուն պահէ. իմ անունս գրուած է մէջը, իսկ այս ես պիտի պահեմ — մինչեւ անկախութեան հռչակումը այսօր:

— Արա՛մս... եղաւ Արմենուհիի գերերջանիկ բացազանչութիւնը:

— Ելիք Արմենուհի եւ հարսանեկան հազուատներդ հագիր, հարսանեկան զարդարանքդ դիր վրայդ, որովհետեւ ժամանակը կը մօտենայ: Տե՛ս, իրարանցումը սկսաւ փողոցներուն մէջ: Անկախութեան պսակեալները պիտի ըլլանք մենք:

Արմենուհի հնազանդեցաւ:
* * *

Այդ ծովածաւալ բազմութիւնը որ փողոցները ողողեց մարդկային հազարաւոր էակներով, եւ մոլեգին ձայներով՝ քայլեց դէպի կառավարչատուն իր անկախութեան իրաւունքին ետեւէն, խելայեղ եւ անդուսպ:

Երկինքները գըրդացին անոնց մոնչիւնով եւ խաչուած Հայ անկախութիւնը արիւններու մէջէն ժպտեցաւ: Անոնց

գլխին վրայ կը ծածանէր բիւրաւոր դրօշակներ՝ մեծ ու պզտիկ: Կատաղի բազմութիւնը առաջնորդող խումբին առջեւէն երիտասարդ մը իր հուժկու բազուկներով վեր կը վերցնէր դրօշակ մը որ մեծագոյնն էր: Դրօշակիւր երիտասարդի դէմքին վրայ երջանկութեան ժպիտ մը կար: Մարդիկ արցունքներով կը համբուրէին դրօշակներու ծայրերը: Քանի կառավարչատուն կը մօտենային, վեր, աւելի վեր կը բարձրացնէին դրօշակները: Մեծագորդը, մեծածաւալ մոնչիւնը սարսափ կ'ազդէր շրջակայքին — անիրաւութեան եւ անարդարութեան դէմ բարձրացող բողոքի ձայնն էր ան: Ժողովրդային այս ծովածաւալ հոսանքին մէջ սակայն ամէնէն աւելի աչքի դարձող բանն էր առջեւէն երիտասարդի մը դօրաւոր բազուկներուն վեր վերցուցած այդ հսկայ դրօշակը: Ան, պահ մը յաղթակահօրէն կը բացուէր, կը ծփծփար եւ պահ մը վար կ'իյնար ուժասպառ իրեն հետեւողներուն ուսերուն վրայ եւ յանկարծ նօրէն կը սաւառնէր վեր խաղալու համար հովի ալիքներուն հետ: Երջանիկ էր Արամ այդ դրօշակը կրելուն համար: Երջանիկ էր որ ազգային դրօշակի վէտովէտումին հետ, ու անոր հովանիին ներքեւ ազատութեան ճամբէն կը քայլէր երջանիկ զգացումներով համակուած: Անոր աչքին առջև կային հոգեկան ուրիշ տխուր տեսարաններ: Մօրը յիշատակը, խղիւղուած հօրը դէմքը, մօրը վերջին խօսքերը, քրոջը աղերսող արտայայտութիւնը, եւ տառապանքի օրերուն սեւ յիշատակները անոր աչքին առջեւ կը պարզուէին մինչեւ որ իր կրած դրօշակը ծփծփար եւ զինք սթափեցնէր անարգել երազներէն: Անցած էին անոնք — հալածանքն ու տառապանքը, սուրն ու մահը, անցած այլեւս յաւիտեան...: Ինչո՞ւ տխրիլ անոնց մասին, չէ՞ մի որ անոնք իրենց շրիմներուն մէջ կը ժպտէին այսօր ի հանդէս անկախութեան այդ ցոյցին: Զէ՞ մի որ մայրը իրեն ըսած էր որ եթէ վրէժը լուծէր ինք գերեզմանին մէջ հանգիստ պիտի քնանար:

Մարդկային հոսանքը կը շարունակէր: Դրօշակները վեր բարձրացան: Ձայները երկինքները լեցուցին: Անկախ եւ ազատ կառավարութիւն մը կ'ուզէր հայ ազգը: Կառավարչատան դրան առջեւ հասած էին արդէն: Տասը քայլ եւս, եւ իրենցը պիտի ըլլար ան: Կեցցէները աշխարհ սարսեցին: Ինչո՞ւ չընէին, վեց հարիւր տարիէ ի վեր ըզձացուած իտէալ մը կ'իրագործուէր: Տասը քայլ, միայն ատար քայլ մնացած էր որ հայկական եռագոյնը սաւառնէր յաղթականօրէն, սարսափեցնէր Թուրքերը, պաշտպանէր հայութիւնը եւ ազատէր Հաճընը, Վահկան, Սիւս եւ Շուշանիկը: Վե՞ր, վեր բարձրացուցին դրօշակները, երգերը թնդացին: Ներս քալեց դրօշակիր Արամ յանդուզն ու վըճռական քայլերով, քաջ ու հերոսական արտայայտութիւնով, անյաղթ կամքով ու վճռականութեամբ: Հիմա բակն էին, զերար հրձակելով բազմութիւնը դէպի անկախութիւն կը փութար: Բայց բակը լեցուեցաւ, ասեղ նետելիք տեղ չմնաց: ձիւներու, աղաղակներու, կեցցէներու եւ երգերու ժխորը կառավարական շէնքերը դրդապոցին: Դրօշակիր Արամ եւ աղբային առաջնորդներ սանդուխներէն վեր կ'ելլէին դէպի կառավարիչին սենեակը, իրենց հետ տանելով հայ կառավարիչը եւ հայ դրօշակը: Բայց — ա՛խ... — անիծեալ յուսախարութիւն, անգութ անարդարութիւն, անարդար մարդկութիւն, խարեբայ քաղաքականութիւն — Փրանսական զինուորներ հրացանները ձեռքերնին, զինակառքերով եւ թնդանօթներով ներս խուժեցին: Արդարութիւնը զօրաւորինն էր: Տկարը պէտք էր վազ անցնէր իր արդար իրաւունքէն: Փրանսական քաղաքականութիւնը իր կեղծ պաշտպանի դիմակը վար առած, խոժոռադէմ զինուորներով եւ վռնանց ժողովուրդը, զըլացաւ անոր արդար պահանջը, մոռցաւ իր խոստումները, հայ կառավարիչը վար առնուեցաւ իր աթոռէն եւ հայ դրօշակը անարգուեցաւ: Արամ անիծեց աշխարհը, անիծեց մարդկային կեղծ արդարութիւնը, բայց ստիպուեցաւ սուրիններու առջեւ տեղի տալ, թէ անգամ մը սպառնաց Փրան-

սական զինուորի մը երբ անոր սուրնը ձեռքի դրօշակին ծայրը պատուեց: Սանդուխներէն վար քալեց ան, բարկութենէն կրակ կտրած, պարտուած, և յուսախար...: Բակը պարպուած էր հայ ժողովուրդէն, Փրանսական զինուորներով պաշարուած էր կառավարչատունը: Ձէր ուզեր դուրս ելլել այդ տեղէն: Հայ դրօշակը պէտք էր ծածանէր այդ շէնքին վրայ: Արամ այդ օրուան վրայ դրած էր իր յոյսը: Անկախութենէ կախում ունէր Արմենուհիի երջանկութիւնը, Շուշանիկի համար մահուան եւ կենաց խնդիր մըն էր այդ օրը: Անոր ծրագիրները ձախողած էին: Շուշանիկ մահուան դատապարտուած էր և... Արմենուհի... ո՛չ, ո՛չ ո՛չ, ձախողանքը պէտք էր դարմանել, ճար մը պէտք էր գտնուէր դէպքերու մակընթացը դարձնելու: Ո՛ր էին հայ երիտասարդները: Ինչո՞ւ անոնք կուուելով այդ բակին մէջ չմեռան: Թերեւս յաղթէին: Ձեռքի դրօշակն ալ կը քնանար: Ալ չէր շարժեր ան, չէր ծածաներ, չէր ծփծփար:

Յանկարծ զէնքի պայթիւն մը լսուեցաւ: Արդեօք հայ դայրոյթի պայթումին առաջին աղբանաշօնն էր այդ: Հայութիւնը իր իրաւունքը պիտի պարտադրէր անդութ աշխարհին վրայ: Ձէնքի ուրիշ պայթիւններուն սպասեց ան: Լուծութիւնը չի խղուեցաւ: Ամբօխը դապուած էր, Փրանսացի զինուոր մը հրամայեց որ դուրս ելլէ, բայց Արամ անդալարար արդէն քալել սկսած էր: Դուրս ելաւ մեծ դռնէ: Քալեց, առանց զգալու թէ ուր կ'երթար: Շուկային մէջ երկսեռ բազմութեան մը հանդիպեցաւ: Ձէնքի պայթիւնի մասին կը խօսէին: Աղջիկ մը ոստիկան մը ըսպաննած էր: Ոստիկան մը որ հրացանի կոթով ժողովուրդը ձեռել սպառնացած էր: Անծանօթ աղջիկ մըն էր — դռնէ այդ բազմութեան: Կ'ըսէին թէ լաւ հաղուած էր ոճրագործուհին: Ձեռքը հայկական դրօշակ մը կար: Առաջին ոստիկանը դետին փոսելէ յետոյ փորձած էր ուրիշ ոստիկաններ ալ սպաննել, բայց Փրանսացիք զինք ձեռքալիւրով բանտ տարած էին: Արամ, յուսախար, ուժառ-

պառ եւ անհոգութեամբ մտիկ ըրաւ փոխանակուած խօսքերուն, արտայայտուած դադափարներուն:

Յանկարծ խումբին մէջ մտաւ: Մարդիկ իրեն նայեցան, քիչ առաջուան յանդուգն քայլերով դէպի անկախութիւն սլացող խրոխտ դրօշակիրին: Դեղնած էր ան, աչքերուն մէջ կեանքի կայծը մոխրացած էր: Ան հազիւ կրցաւ հարցում մը թոթովել:

— Ինչո՞ւ մենք բոլորս, հայրենակիցներ, այսօր չհետեւինք այդ աղջկան օրինակին: (Աչքերը չափով մը վերստացան իրենց հին փայլը): Եկէք ամբոխը հաւաքենք, զինուինք եւ երթանք անկախութեան ետեւէն: Պէտք է կռուիլ եւ դեռ առիթը չէ անցած:

— Յիմարութիւն պիտի ըլլար կռուիլ բարեկամս, մէջ բերաւ մարդ մը, մեղ մէկի՛կ մէկի՛կ դետին կը փռեն: Գոնէ ռազմամթերք ունենայինք:

— Չէ՛, չէ՛, այս պայմաններու տակ կռուիլ անկարելի է եւ յիմարութիւն: Ա՛խ... խաբերայ Եւրոպացիներ:

Ասոնք չի համոզեցին Արամը: Բայց զանոնք համոզեալ խատեւելու ի՞նչ հարկ կար: Ապարդիւն պիտի ըլլար: Անոնք դեռ չէին հասկցած ինքնօգնութեան ճշմարտութիւնը: Ո՛չ, կեանքը չէր արժեր ապրիլ:

Ժամերով քալեց ան դրօշակը ձեռքին մէջ, փողոցէ փողոց, մինչեւ որ գետեղերը հասաւ: Թուրքեր սկսած էին դուրս ելլել իրենց տուներէն: Յայտնապէս լսած էին հայոց ցոյցին ձախողութեան լուրը: Իրարու հետ կը խօսէին խնդալով: Կամուրջին վրայ հասաւ Արամ (դրօշակը միշտ իրեն հետ), գետի փրփրագէշդ ալիքներու վայնասունին մտիկ ըրաւ: Լուսինը իր արծաթեայ լոյսով կ'ողողէր գետին մակերեսը: Սորասուզուած մտածումներու մէջ, Արամ թերեւս պիտի չզղար որ դիշերուան ժամը տասն էր, եթէ ձեռքի դրօշակը չցնցուէր: Բնազդաբար մէկ ձեռքով ատրճանակը բռնած ետ դարձաւ ան եւ ինքզինք դտաւ երկու երիտասարդ թուրքերու դէմ յանդիման:

— Շունե՛ր... մրթմրթաց ան սեղմուած ախանքերու մէջէն:

— Քեաֆիր օղլու քեաֆիր, այստեղը կեավուրներու թա՞ղը կարծեցիր որ ձեռքիդ քուրջը միասին բերած ես:

Երկուքը մէկէն դանակները շողշողացուցին: Բայց Արամին ատրճանակէն արձակուած կապար մը արդէն մէկը գետին փռած էր: Միւս թուրքը սակայն սկսաւ դանակով վրան յարձակիլ: Արամ ձերբակալուելու որոշ վտանգին տակ կը գտնուէր այս պահուն եթէ միւս թուրքն ալ գետին փռելով չհեռանար: Առաջին զէնքի պայթիւնը ուշադրութիւն գրաւած էր թէ ոչ, Արամ չէր զխտեր, բայց վստահ էր որ ուրիշ պայթիւն մը կրնար զինք մատնել: Թուրքը դաշոյնը ձեռքը կը տատամսէր, որովհետեւ Արամի ձեռքին մէջ, մահացու ատրճանակը իրեն կը նայէր:

— Վար դիր դաշոյնը, եթէ ոչ կը ծակծկեմ քեզ, սաստեց Արամ ատրճանակի ձգանք մատներով շօշափելով:

Թուրքը նախ տատամսեցաւ, բայց երբ տեսաւ որ Արամ չէր կատակեր, դաշոյնը վար նետեց եւ փախուստի առիթ մը գտնել ջանացողի պէս շուրջը նայեցաւ: Արամ դուշակեց անոր նպատակը եւ ատրճանակը անոր կուրծքին ուղղելով հրամայեց որ կամուրջէն հեռանայ: Թուրքը դէպի քաղաք քայլ մը առաւ, բայց Արամ իրեն ցոյց տուաւ հակառակ ճամբան: Մինչեւ որ թուրքը աներեւոյթ չեղաւ, Արամ իր տեղէն չշարժեցաւ:

Քիչ յետոյ թուրքը անյայտացաւ եւ Արամ դրօշակը իր առաջին զոհին վրայ տնկելով արագ արագ քալեց դէպի քաղաք: Թուրք թաղէն անցնելով Հայոց եկեղեցիի քով հասաւ: Չայն չկար: Մի քանի մարդիկ քով քովի եկած կը խօսէին: Յուսալատ ցոյցէն յիշատակ մը միայն մնացած էր, տխուր յիշատակ մը: Հայուն համար երջանկութիւն չկար այլևս: Մատնութիւնը յաջողած էր — իրազորուած էր գրեթէ կատարելապէս: Ատանան ալ պիտի յանձնուէր Թուրքերուն: Մարաշի բաղդին պիտի ենթարկուէր ան ալ: Աւելի լաւ էր մեռնիլ, մտածեց Արամ, մեռ-

նիլ մէկ օր առաջ: Իր սենեակի դրան առջեւ հասաւ եւ յանկարծ Արմենուհին դուրս ցցուեցաւ իր յուսահատ խորհուրդներու մէջէն: Ամբողջ օրը զինք չէր յիշած, չէր տեսած: Արդեօք ան ի՞նչ կը մտածէր: Ան ալ կորսնցուցած էր վստահութիւնը իր վրայ: Եւ... ո՞վ անդթուծիւն, այդ իրիկուն ալ հարսնիք ընել խոստացած էր:

— Անիծեալ ճակատագիր, սեւ բա՛խտ... աղաղակեց Արամ, սեղօուած ակուններուն մէջէն: Պարտութի՛ւն... պարտութիւն, ամէն կողմ:

Արիւնը գլուխը խուժեց, մաղերը դայրոյթէն փշացան: Մարտուռ մը համակեց իր էութիւնը եւ վճռական նայուածքը հանդէպեցաւ ատրճանակին վրայ:

— Կեանք հը՛ր... դժո՛խք... թոթովեց ան պժգանքով: Աչքին առջեւ այս միջոցին փայլատակեցաւ «անձնասպանութիւն» բառը: Աչքերը փակեց ուժգին եւ ջղախնոտ մատներով ատրճանակը դուրս քաշեց: Երեսը ծամածոց: Սոսկալի դէմք մը առաւ, մինչ ատրճանակը դողդղաց մատներուն մէջ:

Արամ, յուսահատ եւ ճարահատ, աչքերուն ծայրովը ատրճանակին անդուժ խողովակին անգամ մըն ալ նայեցաւ եւ պարտուած անյուսութեան յարձակումին առջեւ նորէն կրկնեց վախկոտներու, տկար կամք ունեցողներու այդ պիղծ ու ամօթ չլի բառը՝ «անձնասպանութիւն»: Գողահար ձեռքը դէպի վեր ելաւ մինչեւ որ ատրճանակը իր մահացու քիթը զետեղեց անոր սրտին վրայ եւ սպասեց Արամի ցուցամատին պզտիկ մէկ շարժումին, մէկ պզտիկ երերումին որ...

Բա՛թ... գետին ինկաւ ատրճանակը, երբ բանտականութիւնը իր վերջին յաղթութիւնը տարաւ Արամի յուսահատութեան զղացումներուն վրայ եւ պոռաց անոր դրլուն ի վեր:

— Ամօ՛թ քեզի, վախկոտ, վատ ապիկար...: Եթէ կամք ունիս, պիտի յաջողիս նպատակներուդ մէջ: Զգէ՛, վար ձգէ այդ ատրճանակը: Արժանի չես այդ մահացու

գործիքի ծառայութեան, երբ արդեւքներու առջեւ ծունկի կուգաս ու անձնասպանութեան վատ միջոցին կը դիմես: Ո՞վ կ'ըսէ թէ Հայութիւնը այլեւս պիտի անհետանայ աշխարհի երեսէն, ո՞վ կ'ըսէ ան իր փնտոած առիթները ձեռք պիտի չձգէ: Կ'ուզե՞ս մեռնի՛լ... գնա՛ Շուշանիկի ազատութեան ճամբուն վրայ գոնէ մեռիր:

Արամ երբ ինքզինք գտաւ, արդէն իրերամարտ զգացումներու տակ ուժասպառ եղած էր: Մահուան փոսէն հեռացած էր, ալ պիտի չմեռնէր, բայց շատ ալ մեծ արժէք չտուաւ այս փրկութեան վրայ: Ալ ապրել չէր ուզեր: Մահը կ'ուզէր միայն, սա տարբերութեամբ որ փոխանակ ինք դրկելու մահը, պիտի ձգէր որ մահը գար եւ զինք գտնէր:

Արմենուհին նորէն իր աչքին առջեւ եկաւ: Յաւը մեծ էր եւ անդարման: Մէկուն պէտք էր թափէր զանոնք: Սփոփանքի եւ գգուանքի պէտք ունէր: Միս միտակ էր աշխարհի մէջ: Վստահելի եւ սիրող անկեղծ ընկերոջ մը պէտքն ունէր:

Մութին մէջ խարխափելով փողոց իջաւ: Գիշերաչըրջիկի մը պէս, ուր որ երազները զինք տարին քալեց, մինչեւ որ հինցած բակի մը դրան առջեւ կանգ առաւ: Լոյս չէր գար սենեակներէն: Ինչո՞ւ Արմենուհին իրեն չէր սպասած: Ի՞նչ անփոյթ սէր էր այս: Ի՞նչ անզգամ սիրուհի: Արմենուհի պէտք է զիտցած ըլլար գոնէ որ Արամ իր ամենամեծ նպատակին աւերակներուն տակ մնացած էր եւ սպասեր իրեն — սպասեր ի սէր պարտականութեան, ի սէր սիրոյ, զինք մխիթարելու եւ սփոփելու համար:

Անիծեալ ճակատագիր՛ր... ուր որ երթար յուսախորտութիւն, ուր որ վազէր պարտութիւն: Ծօճանակը սկսաւ զարնել, բայց ներսի լուծիւնը չխղուեցաւ: Յայտնի բան էր որ Արմենուհին զինք մոռցած էր, ան ալ իրմէ յուսախար եղած էր: Գոնէ դուռը բանար: Գոնէ Արամին իր ցաւը պատմելու առիթ մը տար, թող վերջը զինք վառն-

տէր, ատէր, անիծէր, հող չէր: Յանցաւոր էր — Արամ
այսպէս կ'զգար: Անկախութեան փորձին անյաջողու-
թեան, Շուշանիկի կրկին վտանգի ենթարկուելուն եւ Հայ
ազգին դժբախտութեան պատասխանատուութիւնը ինք կը
շալկէր կամաւորապէս:

— Այո, ես եմ պատասխանատուն, մտածեց ան, երբ
դրան առջեւ անպատասխան կ'սպասէր, այս ամբողջ դժ-
բախտութիւններու պատասխանատուն ես եմ:

Խեղճ Արամ...

Բայց ինչո՞ւ աւելի սպասէր: Միթէ արժանի՞ էր Ար-
մենուհիի սիրոյն այլեւս: Ի՞նչ հարկ կար դատաստանի,
երբ Արամ արդէն ինքզինքը կը դատապարտէր: Ինքնար-
դարացումի ոչ միջոց ունէր, ոչ կամք, ոչ ալ հարկ կը
տեսնէր ատոր:

Ամբաստանեալ մը կար, այդ ինքն իսկ էր: Ամբաս-
տանողը Արմենուհին, Շուշանիկը, ազգը, աշխարհն էին:
Վճիռը տուաւ եւ Արամ ինքզինք դատապարտեց մեռնելու
կամ յաջողելու Շուշանիկի ճամբուն վրայ:

— Բայց Արմենուհին պէտք էր ինծի առիթ մը ըն-
ծայէր խօսելու, լացաւ Արամ կամակոր, թող քաջի մը
պէս բանար դուռը եւ ինծի ըսէր որ այլեւս զիս մոռցած
է: Եթէ զիս սիրէր, եթէ զիս չատէր դուռը առաջին զար-
նելուս պիտի բանա չ:

Պարտուած եւ անյոյս անգամ մըն ալ նայեցաւ Ար-
մենուհիի սենեակի պատուհաններուն, լոյս չկար: Ոչ մէկ
չըսեց կը լսուէր փողոցներէն: Ամայի ու երկիւղալից լը-
ռութիւնը Արամի հեւքոտ շունչին միայն արձագանգ կու-
տար, երբ ան հասաւ իր խուցը: Մոմ մը վառեց: Անոր
աղօտ լոյսին շուրջ գլուխը հակած քիչ մը մտածեց եւ հա-
ռաչելէ յետոյ սնտուկէն թուրք տարազ մը հանելով հա-
զաւ: Ո՛չ, չէր ուզեր մեռնիլ մինչեւ որ Շուշանիկը նո-
րէն ազատէր աւելի վտանգաւոր պայմաններու տակ քան
առաջին անգամ: Առնուազն 5 օր արիւնոռւշտ, դազա-
նասիրտ ու միանգամայն աշալուրջ թուրքերու մէջէն պի-

տի անցնէր: Եթէ տեղ մը իր իսկութիւնը մատնէր, վըս-
տահօրէն պիտի մեռնէր: Կերպարանափոխութիւնը կա-
տարեալ պէտք էր ըլլար: Իր ունեցած տարազը միայն
կրնար զինք թուրքի ձեւին մէջ մտցնել, բայց թերեւս
զինք այն ատեն ստիպէին զինուորագրուիլ: Ամէն թուրք
երիտասարդ ստիպուած էր բանակին միանալ: Անաս-
տողներ գնդակահար կ'ըլլային: Ուրուականի մը տարա-
զը դործնական չէր այս անգամ: Տէրվիչի մը տարազը
թերեւս աւելի նպատակայարմար էր, բայց չունէր: Ստի-
պուեցաւ իր ունեցած տարագով գոհանալ:

Վար իջաւ սանդուխներէն եւ անմիջապէս քալեց լը-
ռութեան մէջէն մինչեւ որ կամուրջը հասաւ: Իր գնդա-
կահար գոհը կեանքի վերջին հռոպները կ'արձակէր:
Ուշադրութիւն չըրաւ եւ քալեց: Երբ արշալոյսը կը բա-
ցուէր Արամ չորս ժամուայ ճամբայ քալած էր առանց մի-
ջադէպի:

ԳԼՈՒԽ Թ.

Ոնրագործուիմ

Անյոյս ու անփառունակ նոր արշալոյս մըն ալ ծա-
ղեցաւ քաղաքին վրայ: Թշնամիի մը անձնատուր քաղա-
քի մը տպաւորութիւնը կը թողուր Ատանան: Տասնութը
տարեկան տղայ մը յուսահատ քալուածքով անկիւնէ մը
դառնալով Արմենուհիի տան առջեւ կանգ առաւ: Բանա-
լի մը կղզանքին մէջ դարձաւ եւ բակի դուռը բացուեցաւ:
Յոյցէն ի վեր առաջին անգամ կը բացուէր այդ դուռը:
Նախաճաշի սեղանին վրայ աղտոտ ամաններ դեռ անկարգ
կը մնային: Ամէն սենեակի մէջ կահկարասեաց խոնա-
շրփութիւն մը կար: Երիտասարդը կսկծանքով իր շուր-
ջը դիտելէ վերջ, տիրութիւնը դուրս թափեց արցունքի

չիթերու հետ: — Ինքզինք բաղկաթոռի մը մէջ նետեց եւ ձեռքի սիկարէթէն ելլող ծուխի ծուկններուն նայեցաւ, անոնց մէջ բան մը փնտռողի արտայայտութեամբ: Բայց կարծես յուսահատեցաւ շուտով, որովհետեւ սիկարէթը ոտքին տակը առնելով կոխկրտեց եւ ոտքի ելաւ:

— Արամն իսկ լքեց մեզ, փսփսաց ան, անիծեալ Ֆրանսացիներ...:

Աչքին հանդիպեցաւ պատկեր մը պատին վրայ: Պատկերին նայեցաւ խանդաղատանքով, բայց արցունքները լեցուցին աչքերը:

— Արմենուհի... քոյր աննման, հերոսուհի քոյր...:

Բայց նախադասութիւնը չկրցաւ լրացնել: Կախաղանի մը պատկերը իր աչքին առջեւ եկաւ: Անիծեալ պաշտպաններ... , ուր որ նայէր, Արմենուհիի յիշատակը կար, անոր շինարար ձեռքերուն հետքը կար ամէն բանի վրայ: Ձկրցաւ աւելի սպասել աւերակ տան մէջ, դուրս ելաւ եւ Արամին սենեակը հասաւ: Հոն ալ միեւնոյն խառնաչըփութութիւնը, միեւնոյն իրարանցումը հաղուստներու եւ կահկարասեաց:

— Գացած է... եղբակացուց շուտով: Ձինք պաշտող, իրեն սիրոյն բանտարկուող նշանածը լքած դացած է: Վատ, անհաւատարիմ Արամ: Երբ լսեց թէ Արմենուհին բանտարկուած է, վախցաւ թէ իրեն ալ վնաս պիտի հասնէր: Խենդ, ապուշ, խաբեբայ: Իմ քոյրս գէնք մ'իսկ չէր վերցնէր եթէ իրեն սիրոյն չըլլար: Հիմա փաստեց թէ անարժան է քրոջս սիրոյն, անարժան... : Ա՛խ, մէյ մը քոյրս ազատէր կախաղանէն, թող բանտի մէջ մնար: Ի՞նչ կ'ըլլայ, Թուրք մը սպաննած է: Այդ դաղաններն ալ հաղարներ խողխողեցին: Իմ մայրս ու հայրս սպաննեցին: Վահան կուլար: Բայց յանկարծ ալլափոխուեցաւ: Խենդ ու խելառ շարժումներով սկսաւ պոռալ: Խաբեբայ Ֆրանսացիներ, ի՞նչ իրաւունքով իմ քոյրս կախաղան պիտի հանէք: Կ'անիծեմ ձեզ, ամէնքդ: Հէ՛յ... պիտի սպաննեմ ամէնքդ: Մի դպիք քրոջս: Ձեռքդ վար

դազան Ֆրանսացի, վար առ ձեռքդ քրոջս ուսէն: Մի մօտենար անոր քով: Այո, ի՞նչ եղած է, սպաննեց: Ես ալ ձեզ պիտի սպաննեմ եւ արիւնէդ պիտի խմեմ... պիտի խմեմ... արիւնէդ... պիտի խմեմ... այո՛, պիտի խըմեմ... արիւնէդ պիտի խմեմ: Հէ՛յ... թող տուր. ո՞ւր էք հայ կամաւորներ: Հայ կոյս մը կ'սպաննեն հոս, քոյրս է — ո՞ւր էք, կամաւորներ, կախաղանը կը պատրաստեն: Փողոց ելած խենդի մը պէս կը վազէր Վահան, ատրճանակը ձեռքին մէջ:

Մարդիկ անկողնէն դուրս ցատկեցին սարսափահար եւ պատուհաններէն դուրս նայեցան: Մի քանի երիտասարդներ մտադրեցին որ զինքը բռնեն, բայց պարզ որոշումէ մը անդին ոչինչ ըրին: Հայոց եկեղեցիի փողոցի անկիւնէն դառնալով դէպի շուկայ վազեց Վահան պոռալով եւ կանչելով:

— Խենդացած է, եղբակացուցին ականատեսներ եւ ետեւէն քալեցին:

Վահան շուկայ հասաւ, ետեւի խումբը երթալով մեծցաւ:

— Մի դպիք քրոջս — կ'սպաննեմ — պիտի խմեմ ձեր արիւնը: Կամաւորներ... հայ կամաւորներ...

Ի՞նչ կ'ըլլար, ոչ ոք զիտէր. բայց վազելով կը միանային հետաքրքիր ականատեսներու շարքին: Կամաւոր մը վերջապէս անկիւնէ մը դառնալով Վահանին առջեւ անցաւ եւ անոր պոռչտուքներուն մտիկ ընելէ յետոյ ետեւը անցաւ որ դայն բռնէր, բայց Վահանի ատրճանակէն պայթում մը զինք տատամսեցուց: Խենդացած էր խեղճ տղան: Կամաւորը յանկարծ Վահանի վրայ ցատկելով ձեռքի ատրճանակը խլեց եւ սկսաւ անոր երեսը ապտակել, որ հաւասարակշռութիւնը կորուսած ուղեղը բընականոն վիճակը վերադառնէր: Ապտակները կ'երեւայ նպատակին հասան, որովհետեւ Վահան ձայնը կտրելով պիչ պիչ շուրջը նայեցաւ, մինչ կամաւորը զինք հրելով դռնէ մը ներս քաշեց որուն վրայ «Կիրիկեան դարմանա-

տուն» գրուած էր «Ռամկավար Գլըպ» վերտառութեան տակ: Դարմանատան պատասխանատու-բժիշկը բժշկական ոեւէ ձեռնարկի հարկ չդրաց՝ կարծես արդէն գիտցած ըլլար անոր մտային խանգարումին դադոնապատճառը: Գլթալից նայուածք մը ուղղեց տղուն եւ պահ մը մտածկոտ կեցաւ: Յետոյ պատուհանէն դուրս նայեցաւ վրդոված եւ ըսաւ.

— Կը խնդրեմ որ ամէն մարդ հեռանայ, եղածը անցողակի մտային խանգարում մըն է միայն: Հանդիստի եւ առանձնութեան պէտք ունի:

Բիշ յետոյ Վահան իր գիտակցութիւնը վերտացաւ: Հայրենասէր բժիշկը յայտնապէս զգածուած էր Վահանի պատմութենէն, որովհետեւ աչքերը թրջած էին:

— Պատմէ թէ լ՞ոնչպէս քոյրդ բանտ դրին, թեւադրեց բժիշկը:

— Երբ ցոյցի անյաջողութենէն վհատած, քոյրս թուրք ոստիկան մը սպաննեց, իր գէնքը ուղղեց ուրիշ ոստիկաններուն վրայ, բայց Ֆրանսացի ոստիկաններ ձեռքերը բռնելով ատրճանակը ձեռքէն առին եւ զինք բանտ տարին: Արդեօք կարելի չէ՞ քոյրս կախաղանէ ազատել, պարոն, լացաւ Վահան:

Կանանց բանտին ֆէջ՝ երկաթէ ձողերուն ետեւէն զոյգ մը սեւ աչքեր աշխարհի յառած՝ անոր դատաւճիռին կը սպասէին: Այդ աչքերէն խոյս տուած էր երբեմնի այն վճռական փայլը, որ կ'ենթադրէր թէ աշխարհի մէջ անկարելի ոչ մէկ բան կար: Յուսահատական դալուկ մը յաջորդած էր անոր այտերուն երէկուան կարմիր կրակին: Ի՞նչ զարհուրելի անակնկալներով լեցուն է կեանքը: Դեռ երէկ ատուտ այդ սեւ աչքերը յուսաչող՝ հայ անկախութեան դրօշակներուն կը նայէին. իսկ այդ առաւօտ Արմենուհին ինքզինք կը դտնէր խոնաւ ու ապականած նկուզի մը մէջ՝ ոճրագործութեամբ դատապարտուած:

Սեւ ճակատագիր...

Օր մը առաջ, կառավարական բակին մէջ, անկախութեան ցոյցի միջոցին, Արմենուհին զգուանքով ակնարկած էր այդ բանտին, ուր ինքն էր հիմա: Պիտի ուզէ՞ր որ դուրսէն մէկը այդ օր քամահարանքով նայէր իր բնակարանին: Թերեւս, բայց պայմանաւ որ այդ անձը ընդունէր որ նողկալի տանիքներուն տակ վայրկեանները համրող յանցապարտներուն մէջ կար աղջիկ մը, (յանցին իրեն), որ անմեղ էր՝ պարագաներու գոհը միայն: Արմենուհին հաւատացած էր որ թուրք բռնապետութիւնը շատ անմեղ Հայեր չինձու ոճիրներով դատապարտելով այդ գարշելի երկաթեայ ձողերուն ետեւ փակած էր, բայց երբեք չէր մտածած թէ ոճրագործ մը անմեղ կրնար ըլլալ, մինչեւ որ ճակատագիրը զինք հոն առաջնորդէ:

Վաղը մարդիկ զինք դատապարտելէ յետոյ հաւանաբար կախաղան պիտի առաջնորդէին: Ինչո՞ւ չէ, մարդկային արդարութիւնը այդպէս կը պահանջէր: Ոճրագործը պէտք է մեռնի: Արմենուհին կ'ընդունէր թէ ինք գետին փոած էր ոստիկան մը: Անտարակոյս մարդասպանութիւնը առաջին կարգի ոճիր մըն էր: Ոճրագործ մըն էր ինք իրապէս: Համողուած էր այս մասին: Ամբողջ գիշեր կախաղանի սեւ ստուերը պար բռնած էր իր աչքերուն առջեւ: Երեւակայութեան մէջ կը տեսնէր դատարան մը, որուն մէջ մարդիկ ձեռքերնին երկինք վերցուցած իր արիւնը կը պահանջէին: Ամբողջ գիշեր այս տեսակ տեսարաններով շրջապատուած ան այլեւս համակերպած էր անարգել մահուան:

— Ճակատագիրս է, կ'ըսէր ան, ճակատագիրս է եւ անկէ փախուտ չկայ:

Ինչպէս ամէն մահուան դատապարտեալ, Արմենուհին ալ ունեցած էր հոգեկան անզուսպ մաքառում մը մահուան դէմ, բողբօած էր, տառապած էր եւ տանջուած: Սակայն, վերջապէս, յուսահատած, համակերպած էր ճակատագրին անփոփոխելի վճիռին — մահուան:

Արշալոյսի բացումով, սակայն, կեանքի պերճանքը նորէն զինք դիւթեց: Միթէ ճակտին վրայ կեանքի անակնկալներուն արձանագրութեանց վերջին տո՞ղն էր «կախաղանը»: Կախաղանը, սոսկալի, մի՞ին գերեզմանը, վերջին հանդրումը պիտի ըլլար իր կեանքի քսաներորդ դարնան՝ թէ դեռ կային ուրիշ ծրագիրներ: Ահաւասիկ այս հարցն էր որ մտածել կուտար իրեն բանտի պատուհանին առջեւ արեւի փախտական մէկ բարակ ճառագայթին տակ որ տանիքին վրայ պղտիկ ծակէ մը իրեն կը ժպտէր յուսալից՝ նման յոյսի ճառագայթի մը, որ ընկճուած յուսահատ հոգիներու մէջ երբեմն կեանք ու կամք կը ներշնչէ ճակատագիրն իսկ փոխելով:

— Ինչո՞ւ կախաղան, կը մտածէր ան ինքնիրեն, երբ ես ոչինչ ըրած եմ, այն որ սպաննեցի հրէջ մըն էր:

Հրէջ մըն էր Արմենուհիի զոհը: Մէկուն չէր ըսած թէ ինչ դրդապատճառաւ սպաննած էր ոստիկանը, բայց ինք զիտէր: Արմենուհին ճանչցաւ այդ դէմքը զոր ուրիշ առթիւ ալ տեսած էր — արքայութեան ճամբուն վրայ, երբ ան իր մայրը մտրակած եւ հայրը խարաղանով ծեծած էր: Ի՞նչպէս կրնար Արմենուհի մոռնալ այդ տեսարանը երբ այդ ոստիկանը ճամբուն վրայ պղտիկ տղայ մը սուինահարած եւ ձորին մէջ գլտորած էր, արագ չքալելուն համար:

Երէկուան քարսիրտ ոստիկանը, երբ ցոյցէն վերջ ալ կուգար գէն ի ձեռին հպարտութեամբ վռնտելու Հայութիւնը կառավարական շէնքի բակէն եւ կ'սպառնար իրեն գարնել, Արմենուհի չէր կրնար այլեւս իր զգացումները զսպել: Այո, երբ երէկուան ոճրագործը այդ օր իր արինոտ ձեռքերով արդարութիւն եւ օրէնք գործադրելու պաշտօն յաջողած էր առնել, մարդկային արդարութիւնը խեղկատակութիւն մըն էր այլեւս: Արդարութիւն չկար: Ինչո՞ւ Արմենուհի չգործադրէր արդարութիւնը, ոճրագործին իր արժանի պատիժը տալով: Երբ արիւնոուշտ մարդասպան մը ընկերական օրէնք եւ արդարութիւն կը

ներկայացնէր, ինչո՞ւ ինք, անմեղ, մարուք կայս մը իրաւունք չունենար արդարութիւնը գործադրելու: Ատորճանակը հանած եւ սպաննած էր հրէջը: Տկարի մը ոճիրը սակայն, զօրաւորի մը ոճիրին նման, անպատիժ չի մնար: Փրանսացիք զինք բռնած եւ բանտ նետած էին:

Ան սեւ աչքերը աշխարհի յառած, անոր վճիռին կը սպասէր...: Մահ կամ կեանք: Ըլլալ կամ չըլլալ, երկուքէն մէկը: Անոր անորոշ մտածումներու նախասիրութիւնն էր կեանքը: Կեանքը իր յոյսերով, իր սէրով, իր պերճանքով: Կեանքը, հող չէ թէ որքան տանջալից, տառապալից եւ անփառունակ: Սեւ աչքերը սպասեցին յուսահատ: Յանկարծ որպէս հեռու անցեալի յուշեր, անուրջներու նման անորոշ, վերջիչում մը պատեց իր մտածումները: Միս միտակ չէր աշխարհի մէջ: Արամը կար՝ ճարպիկ ու անձնուէր: Վահան պիտի պայքարէր իր ազատութեան համար:

Սեւ աչքերը ժպտեցան...

Հազիւ թէ յոյսի արշալոյսը կը ծագէր իր հոգիին մէջ, բանտապահը դուռը բացաւ եւ դրեթէ մանկական ձայն մը արտասանեց իր անունը — Արմենուհի՛...

— Արամ... ոչ, Վահան, սեւ աչքերը լեցուեցան:

— Արմենուհի, քոյրս, ըսէ ինձի, ի՞նչպէս, ինչո՞ւ, ե՞րբ...:

— Յոյցէն վերջը, հող մի ըներ Վահան, եթէ Փրանսացիք զիս կախաղան հանեն ոճրագործի մը սպանութեան համար, թող ընեն: Ե՛կֆիքն էր, Վահան, ծնողքս խարաղանոյ անդութ Ե՛կֆիք ոստիկանը, որ կը յիշես թէ ի՞նչպէս Հայ տղայ մը խողխողեց եւ քու կեանքիդ ալ ըսպառնաց արքայութեան միջոցին, լացաւ բարձր ձայնով Արմենուհի: Փրանսացիք եթէ արդարութեան տարրական գիտակցութիւնը ունենային, Ե՛կֆիքի պէս ոճրագործի մը ոստիկանի պաշտօն չէին տար: Բայց — կարճ լըուութիւն մը — Արամը ո՞ւր է Վահան: Ան ինչո՞ւ...

— Արամը... մոռցիր անոր պէս անհաւատարիմ բարեկամներու անունը: Լաւ օրերու բարեկամ: Չկայ, գացած է: Ա՛խ, ... Արմենուհի, ջու գլխուդ եկած այս փորձանքն ալ անոր երեսէն է: Քեզ նոյն իսկ չայցելեց, թերեւս ալ ճիշտ այս խնդրոյն երեսէն փախաւ՝ վախնալով որ իրեն ալ վտանգ մը կրնար հասնիլ: Հիմա, Արմենուհի, մտիկ ըրէ, ես ազգեցիկ Հայ մը դտայ, բժիշկ մը, որ իր ձեռքէն եկածը պիտի ընէ այս խնդրոյն մէջ:

— Արամը զի՛ս լքէ... Ես որ զինք այնքան կը սիրեմ...: Չէ, Վահան, մի աշխատիր իմ ազատութեանս համար այլեւս: Չգէ որ ճակատագիրը իր ուզած ձեւով ընթանայ: Ալ հաւատք չունիմ կեանքին վրայ: Թող խաչեն զիս: Ի՞նչ պիտի ընեմ ես կեանքը ալլեւս: Յոգնեցայ ալ կնճրոններու դէմ կռուելէ, խեղդուեցաւ Արմենուհիի ձայնը, վեց տարի է եւ վերջ չունի տառապանքը: Եւ արդէն Արամը ողջ չի վերադառնար: Անդու՞ ինչ աշխարհը մեզմէ երես դարձուցած է այլեւս:

— Մի յուսահատիր Արմենուհի, չե՞ս ուզեր ինծի համար ապրիլ, ջու եղբայրդ: Տես, մտածէ, միակ դուն մնացած ես ինծի համար: Ո՛չ, ես կ'ակնկալեմ որ քոյր մը եղբոր մը հանդէպ դոնէ քիչ մը սէր տածէ: Դուն գիտես որ առանց քեզի կեանքը ինծի գժոխք մըն է:

Քարէ սրտերն իսկ պիտի հալեցնէր Վահանի որբի կեցուածքը, երբ ան իր կոչը կ'ընէր: Եղբայրական սէրը իր ճաճանչները սփռեց Արմենուհիին շուրջ:

— Վահան, լացաւ Արմենուհի, կ'ապրիմ, կ'ուզեմ ապրիլ, մի լար: Թերեւս Արամն ալ ողջ առողջ վերադառնայ: Չեմ կրնար հաւատալ որ ան գիտումնաւոր կերպով անհաւատարիմ գտնուի ինձ հանդէպ: Ո՛հ, ան ետ կուզայ ինծի, ետ պիտի դայ: Չեմ կրնար համոզուիլ թէ Աստուած, որուն նախախնամութիւնը մեզ իրարու ծանօթացուց, մեր ծաղիկ կեանքերը փշրելու չափ անգուժ պիտի ըլլայ:

— Կը յուսամ որ բոլոր փափաքներդ պիտի իրագործուին, Արմենուհի, մաղթեց Վահան, բայց պէտք է որ կեանքը սիրես: Անյաջողութեան ամենամեծ պատճառը կեանքը անարժէք երազ մը նկատելն է: Վստահ եղիր, որ, եթէ Արամ վերադառնայ, զայն մեծապէս փոխուած պիտի գտնես: Այսինքն՝ ան հասկցած պիտի ըլլայ թէ ներկայիս դեռ առիթ չկայ Հայոց իրենց ճակատագրին տէրը ըլլալու: Երբ Արամ այս ճշմարտութիւնը տեսնէ եւ հասկնայ, ինքզինք «պարտուած» մը պիտի չնկատէ, այլ պաղարկեալութեամբ պիտի սպասէ ու պատրաստ ըլլայ կատարելու իր պարտականութիւնը, երբ առիթը ներկայանայ:

— Ի՞նչ կ'ըսէիր բժիշկի մը մասին, ընդհատեց Արմենուհի:

— Հաւանական է որ քեզ պատերազմական ատենանի մը առջեւ դատեն: Այս բժիշկը պիտի աշխատի քեզ առանց դատաւարութեան բանտէն ազատել:

— Հոն է, բանտապահին ձայնը եկաւ անդիէն, դուք անոր ազգականներն չէք: Այցելութեան ժամանակը լրանալու մօտ է, միայն կէս ժամ ունիք:

Յանկարծ մէկը Վահանի ուսին դրաւ իր թեւը: Ամերիկահայ բժիշկն էր: Անոր կ'ընկերանար Ֆրանսացի ըսպայ մը:

— Լա՛ւ... Վահան, այս օրիո՞րդն է քոյրդ: Ի՞նչ, լացած ալ է: Օրիորդ դուն երբեք հոգ պէտք չէ ընես, թերեւս վաղը նորէն Ատանայի փողոցներուն մէջ ազատ համարձակ բարեկամներուդ այցելես: Չէ, չէ, պէտք չէ արտասուես: Թէ ոչ ոստիկանի գերեզմանին վրայ լալ կ'ուզես: Հա՛, հա՛...:

— Ո՛չ, ո՛չ, օրիորդ, միջամտեց Ֆրանսացի սպան, մի լար, հիմա մեզի պատմէ թէ ի՞նչպէս սպաննեցիր այդ մօրուսաւոր Էմմին: Եթէ զիտնայի թէ դուն այդքան լաւ գէնք դորձածել զիտես, քեզ մեր բանակին մէջ կ'առնէի:

— Բայց նախ պէտք է լացդ դադարեցնես: Դուն որ

ոստիկան մը սպաննելու ջիղը ունեցար, ինձ զարմանալի կը թուի տեսնել քու արտասուելը: Հազիւ 15 վայրկեան մնացած է այցելութեան ժամը լրանալուն, շուտ ըրէ, օրիորդ, պատմէ որ տեսնենք թէ քեզ տաժանակիր աշխատութեամբ պէտք է դատապարտենք թէ աքսորի:

Այս վերջին խօսքին վրայ խնդաց սպան բժիշկին հետ: Արմենուհին ճշմարտութիւնը պատմեց այնպէս ինչպէս որ էր: Բայ պայմանաժամը շուտով լրացաւ եւ Արմենուհին նորէն մնաց միս մինակ իր ատելի խուցին մէջ: Իր առաւօտեան յուսահատ եւ պարտուածի տրամադրութիւնը փոխուեցաւ: Կեանքէ հրաժարեալ մը չէր ան այլ եւս: Ան ապրիլ կ'ուզէր եւ ազատութեան կը բաղձար: Թերեւս առանց նիրհելու բանտի պատուհանին առջեւ պիտի սպասէր մինչեւ հետեւեալ օրը, երբ Վահանն ու բրժիշկը զինք պիտի ծանօթացնէին իր ճակատագրին հետ: Ան իր վրայ իշխանութիւն չունէր: Ինքն իր ճակատագրի բերքը չէր կրնար կռուակարել: Վահանն ու բժիշկը իր կեանքին տէրերն էին, անոնք պիտի հսկէին իր բախտին վրայ:

Հետեւեալ առտու անորոշ արտայայտութիւնով տղայ մը, որուն սիրտը հաւասարապէս կը դողար եւ կը ժըպտէր, բժիշկին սենեակին առջեւ կանգ առնելով սպասեց: Ամերիկահայ բժիշկը դուրս ելաւ: Եթէ դէմքը սրտին հայելին է, բժիշկը այդ առտու իր երէկուան լաւատեսութիւնը չունէր: Սենեակէն դուրս ելլելուն պէս արուեստական ժպիտով մը բարեւեց Վահանը: Բայց յայտնի էր որ մտածկոտ էր ան: Մտածկոտութեան այն տեսակը որ անորոշութեան մը դէմ կը պայքարի:

— Նստի՛ր, ըսաւ բժիշկը Վահանին, կտրուկ կերպով: Վահան մեքենաբար հնազանդեցաւ, բայց տեսակ մը շուարեցաւ բժիշկին վարուելակերպէն:

— Հիմա քեզի բան մը պիտի ըսեմ, բայց ինձի նախ խոստացիր որ քրօջ պիտի չըսես:

Վահանին սիրտը սկսաւ դողդղալ:

— Ձեմ ըսեր, պատասխանեց Վահան, առանց հաւտալու իր իսկ խոստումին:

— Ֆրանսացի սպան որ երէկ տեսար, պատերազմական ատեանի անդամ մըն է եւ իմ բարեկամս: Իրեն աջակցութիւնը հայցած էի երէկ եւ իր ձեռքէն եկածը ընել խոստացաւ, բայց քրօջ պատերազմական ատեան պիտի երթայ:

Վահան աթոռին վրայ սկսաւ անհանգիստ ըլլալ, կարծես փուշերու վրայ նստած ըլլար: Խենթ շարժումներով եւ դթութիւն հայցողի մը պէս ձեռքերը բժիշկին երկնցուց, շրթները խօսելու անհամբեր:

— Բա... բայց, պարոն, պա-պա-տե-րազ-մական ատ-ատեանէն: Ո՛վ յուսախարութիւն... պիտի երթամ ես, քրօջ պիտի երթամ: Պէտք է ազատի քոյրս: Պահպանը պիտի սպաննեմ եւ փախցնեմ զայն, պոռաց Վահան: Անդու՞ Ֆրանսացիք, իրենց վրայ կապար տեղացընող թուրքերը չեն սպաններ, իսկ քոյրս, քոյրս պիտի սպաննեն: Ձդէ զիս, պարոն, թող տուր թեւերս:

— Նստի՛ր Վահան, խնդրեց բժիշկը պաղարիւնութեամբ, դեռ ամէն յոյս կորսուած չէ:

Գարձեալ պատուհանէն դուրս նայեցաւ բժիշկը մըտածկոտ: Միեւնոյն ոխը կը կրծէր իր սիրտը Ֆրանսական խարբարութեան դէմ: Ինք մին էր անոնցմէ, որոնք իրենց գործերն ու հանգիստը թողած ազատ Ամերիկայի մէջ, ազատ Կիլիկիոյ, ազատ հայրենիքի մը մէջ իրենց ժողովուրդին հետ ապրելու եկած էին: Մին էր անոնցմէ, որոնց հայրենասիրութիւնը պարագայական չէր, որոնց ազգասիրութիւնը յոյսերու կործանումին հետ չէր անհետանար: Հայրենիքին հանգէպ ունեցած տարիներու անզուսպ կարօտը յագեցնելու եկած էր ան, վստահ Ֆրանսական պաշտպանութեան տեսականութեան վրայ: Անուրջի մը ետեւէն չէր եկած, այլ պաղ իրականութեան մը հետեւած էր: Համոզուած էր թէ արդարութեան աւանդով կուտող դաշնակիցներ Հայուն իրաւունքը իրեն

պիտի վերադարձնէին: Իրաւունք մը դոր հայ զինուորը
դաշնակիցներու կողքին կուուելով շահած էր: Ողորմու-
թիւն մը չէր որ դաշնակիցները պիտի բարեհաճէին տալ
իրեն, այլ արիւնով եւ յաղթանակով, զէնքով եւ հերո-
սամարտերով շահուած իրաւունք մը: Հակառակ Փրանս-
սական մեքենայութիւններուն եւ մատնութեանց, հայրե-
նասէր բժիշկը, դեռ կը յուսար թէ Հայուն իրաւունքը
պիտի չոտնակոխուէր: Դեռ չէր ուղեր մտածել այն հա-
ւանականութեան մասին թէ Կիլիկիան պիտի վերադար-
ձուէր Թուրքին եւ զինք պիտի ստիպէր վերադառնալ ձեռ-
նունայն եւ յուսահատ իր օտար բնակավայրը: Ո՛չ, ո՛չ,
ամէն յոյս դեռ խափանած չէր:

— Վահան, ի՞նչ է քու մականունդ, վերջապէս հար-
ցուց բժիշկը մտածումները ընդհատելով: Մականունը
դեռ չէր գիտեր իր երիտասարդ բարեկամին, որուն հա-
մար փրկարարի դեր ստանձնած էր:

— Պօղոսեան, պատասխանեց Վահան լալով:

— Ծնողքդ ո՞րք է:

— Ո՛չ:

— Պօղոսեան, կրկնեց բժիշկը ոտքի ցատքելով՝ կար-
ծես իր փնտոած գիւտերէն մին դտած: Քու մօրդ անու-
նը ի՞նչ էր:

— Շամիրամ:

Բժիշկը ցնցուեցաւ:

— Ո՞րտեղացի էր մայրդ, գիտե՞ս:

— Կարծեմ Խարբերդցի էր:

— Ո՞ւր է հիմա ան, հո՞ս է: Ո՛չ, մեռաւ ըսիր հէ՞:
Ո՞ւր սպաննեցին: Ուրեմն այս ոստիկանն էր զինք մըտ-
րակող գազանը: Ետեւէս եկուր, գլխարկը գլուխը դրաւ
դայրացիտ բժիշկը: Շո՛ւտ: Ինչո՞ւ ինծի երէկ չըսիր
այս պատմութիւնը: Անիծեալնե՛ր, անիրաւնե՛ր:

Ան հիմա սանդուխներէն վար կը վազէր ինքնիրեն
խօսելով, բայց յանկարծ կեցաւ եւ ետեւը նայեցաւ:

— Վահան, լացաւ բժիշկը վերջապէս, դուն իմ քրո-

ջըս տղան ես: Քու քեռիդ եմ ես, գրկեց Վահանը: Լը-
սած էի թէ քոյրս Ատանացիի մը հետ ամուսնացած էր,
բայց մականունը չէի լսած: Վաղէ եւ կառք մը վարձե-
լով հոս բեր որ այդ Փրանսացի սպան տեսնելու երթանք:

Կառապանը մտրակեց ձիերը: Ատանայի քարուտ փո-
ղոցներէն անոնք շուտով դուրս ելան եւ կայարանին մօտ
չէնքի մը առջեւ իջնալով զանգակը զարկին:

Սպային սենեակը առաջնորդուեցան երկրորդ յար-
կին վրայ: Վայրկեան մը վերջ սպան ներս եկաւ եւ բա-
րեւեց ժպտելով:

— Իսկապէս ողբերգութիւն մըն է այս, նիւթը բա-
ցաւ սպան, եւ չեմ մեղադրեր քեզ Տօքթօր, որ լացած ես:

— Օ՛, ո՛չ, ժպտելու աշխատեցաւ բժիշկը, բայց լը-
սեցէք բարեկամս թէ ի՞նչ գեղեցիկ անակնկալ մը ունե-
ցայ այս առտու ճիշտ ժամանակին:

— Բաւական հետաքրքրական ըլլալու է:

— Վահանը եւ բանտարկեալ օրիորդը իմ քրոջս գա-
ւակներն են:

— Չրե՞ս տօքթօր:

— Ճշմարտութիւն է: Այս առտու երբ խեղճ տղան
քովս եկաւ եւ իմացաւ թէ Արմենուհին պատերազմական
ատեանի առջեւ պիտի հանուի, ուղեց քոյրը ծանօթացնել
իր բազդին հետ. բայց զինք բռնի կերպով ետ նստեցու-
ցի եւ որպէս զի զինքը զրաղեցնեմ, մականունը հարցու-
ցի եւ մտարբերեցի թէ այդ քրոջս ամուսնացեալ մակա-
նունն էր: Պատերազմէն առաջ մայրս իր մէկ նամակին
մէջ յիշած էր այդ մականունը:

— Տօքթօր, հող մի ըներ, ես կը յուսամ թէ քեռոր-
դիդ պիտի կրնամ ազատել պատերազմական ատեանին
մէջ իսկ: Այս գիշեր բաւական երկարօրէն խորհեցայ
այդ մասին եւ օրինական ձեւ մը գտայ անոր ազատու-
թեան համար:

— Եւ ի՞նչ է ան, ոտքի ելաւ բժիշկը բեռը թիթե-
ցած:

— Վայրկենական խենդութիւն է եւ այս ճշմարտութիւն է :

— Բայց պիտի կրնա՞ք մեծամասնութիւնը համոզել :

— Այդ ալ գրեթէ կարգադրուած է : Ես անդամներէն մէկուն հետ ալ տեսակցած եմ այդ մասին, այնպէս որ վստահ կրնաս ըլլալ որ քեռորդիդ ազատած պիտի ըլլայ :

— Երբեք պիտի չմոռնամ բարիքդ :

— Ո՛հ, շատ շնորհակալ եմ պարոն սոյայ, աւելցուց Վահան :

— Երէկ ուրիշ ոճիր մը մեր ուշադրութեան յանձնուեցաւ : Կամուրջին վրայ թուրք մը դաշունահար գլտնուած է եւ հաւանաբար մեռնի : Հսկայ հայկական դրօշակ մը կար գլխուն վերեւ :

— Ես չեմ մեղադրեր, յանձն առաւ սպան. եթէ Յըրանսական Յեղափոխութեան դործակատարները յանցաւոր չէին, ինչու՞ մեղադրեմ հայ անհատները, որոնք իրենց իրաւունքը պաշտպանելու համար միջոցներ ձեռք կ'առնեն : Երբեք մի կարծեր, սիրելի տօքթօրս, թէ Քըրանսական զինուորականները Փրանսական քաղաքականութիւնը Կիլիկիոյ մէջ պատուարեր կը նկատեն : Ես չեմ մեղադրեր Հայերը՝ չթէ երբեք անոնք Ատանայի ամբողջ թրքութիւնը կոտորեն : Զարմանալի է իրասպէս որ Հայերը կրնան զսպել իրենց արդար զայրոյթը :

Տօքթօրը չպատասխանեց այս վերջին տեսութեան, միայն հառաչանքով մը դոհացաւ :

— Այո, վերջին քաղաքական ոճիրի մասին կը խօսէի : Գիտէք, այդ դրօշակը որ ոճրագործի գլխուն վերեւ գտնուած է, այն մեծ դրօշակն է, որ երիտասարդ տղայ մը ցոյցի միջոցին ամէնէն առաջ ինկած կը կրէր : Մեր հայ գաղտնի ոստիկանները ոճրագործին անունը գրտան : Արամ անունով տղայ մըն է եղեր : Զինք թէ եւ չկրցան գտնել, բայց հետապնդումը կը շարունակուի :

— Արամ... բացազանչեց Վահան հետաքրքրութեամբ :

— Կը ճանչնա՞ս զինք, հարցուց տօքթօրը :

— Հարկաւ, Արմենուհիի նշանածն է : Բայց, ո՛չ, ո՛չ, ան չէ, ան հոս չէ, ետ առաւ Վահան իր առաջին խօսքերը : Հաճըն գնաց ան, քոյրը ազատելու :

— Քոյրդ նշանուած է, հա՞... հարցուց սպան : Ո՞ւր է ան որ մինչեւ հիմա չտեսանք :

— Իրասպէ՞ս... հարցուց զարմացկոտ տօքթօրը :

— Ան ալ գնաց, Հաճըն գնաց, խոստովանեցաւ Վահան :

— Հետեւաբար ոճրագործը ան է, եզրակացուց ըսպան, բայց անհող եղէք արդարութիւնը անոր չի կրնար հասնիլ քանի որ դացած է : Հաճըն ճգնաժամային օրեր կ'անցնէ :

— Սոսկալի՛ է, ըսաւ բժիշկը :

— Եւ մեր կառավարութեան դիրքը՝... չեմ գիտեր, չեմ հասկնար, գաղտնիք, գաղտնիք, գաղտնիք ամէն բանի մէջ, զլուխը շարժեց սպան, այո, այսպէս : Հիմա, սիրելի տօքթօր, կրնաս դուն դարմանատունդ վերադառնալ եւ քեռորդիդ սպասել երկու օրէն : Բայց թերեւս դատավարութեան ատեն սենեակին քով սպասել պիտի ուղես : Կրնաս այդ ընել ժամը 10-ին այս առտու : Ժամը ինն է հիմա, պէտք է աճապարեմ :

Տօքթօրը եւ Վահան իրենց երախտագիտութիւնը յայտնելով հրաժեշտ առին սպայէն եւ հազիւ թէ դուռը հասած էին սպան անգամ մ'ալ վստահացուց զանոնք :

— Անհող եղիր, տօքթօր, իմ եղբայրս ալ թուրք կապարի զոհ գնաց եւ անոր ետեւ ձգած որբեւայրի կիներն ու երկու զաւակները դեռ կ'սպրին եւ իրենց նամակները... :

Մնացածը չլսեցին բժիշկն ու Վահան, բայց իմացան թէ թուրքին բացած թունաւոր վէրքերէն մին ալ անոր սրտին մէջ իր անջնջելի դրոշմը դրած էր եւ այսչափը բաւ էր :

Ժամ մը վերջը բժիշկն ու Վահան կառավարական շէնքին մէջ դռնփակ սենեակի մը առջեւ լուռ ու մոռնջ նստարանի մը վրայ նստած անհամբեր ու սրտամաշ Ժամը 12-ին կ'սպասէին: Կեանքի արե՞ւը թէ մահուան խաւարը պիտի զիմաւորէին:

ԳԼՈՒԽ Ժ.

Հ ր ա շ ֆ ը

Ազատութեան ճանապարհը ի՞նչ փշոտ է եւ կեանքը ի՞նչ աննշան՝ անոր վտանգաւոր ճամբաներուն վրայ: Իրապէս մարդ պէտք է կեանքին վրայ նայի իբր անարժէք Ժամավաճառութիւն՝ դոնէ մինչեւ իր նպատակին յաջողութիւնը, որ կարենայ ինքզինք նետել այն կրակին ու բոցին մէջ, որ տարածուած էր Արամի սկզբնակէտին՝ Ատանայի, եւ նպատակակէտին՝ Հաճնոյ միջեւ: Արամ յաջողած էր կեանքի այս սեսակ փրկութեամբ մը հետեւիլ, երբ ան անհամար խոչընդոտներու յաղթելով կը մագլցէր այն լեռն ի վեր, որուն դադաթը տաճկական զինուորական անկանոն խումբեր կը վիտային զիշեր եւ ցերեկ, եւ ուսկից կարելի էր տեսնել հերոսական Հաճնոյ աւերուած տունները՝ մէկ ակնթարթի մէջ: Ճարպիկութիւն եւ կամք՝ ասա այս երկուքը եղած էին երկու զէնքերը, որոնց պաշտպանութեան տակ Արամ անվնաս հասած էր Հաճնոյ լեռները: Բայց հոն էր որ խոչընդոտները իրենց դադաթնակէտին կը հասնէին եւ եթէ Արամ իսկապէս համոզուած չըլլար որ իր քրոջ ազատութեան ճամբուն վրայ մեռնիլը՝ ճակատագրին իրեն վերապահած միակ պատիւն էր, ան պիտի բղքուէր այնպիսի ձեւով մը որ թուրք վայրագութեան զլուխ գործոցը կրօնէր թերեւս: Արամ Ամերիկեան քաղաքադէտի մը պէս, անըզ-

զայ լեռներուն կանչած էր իր բոլոր հոգւով. «Ազատութիւն կամ մահ տուր ինձի»:

Յոգնած եւ մտածկոտ մշտադաշար անտառներուն մէջջէն, Ժայտերու վրայէն ան քալեց, մինչեւ որ պատըտած հազուասներով զիւզացի զինուոր մը խուստ ձայնով հրամայեց իրեն որ կենայ: Արամ հնազանդեցաւ: Վերջին պատուհասը սկսած էր: Եթէ Արամ կարենար վայրագ զինուորականներու հարցաքննութենէն ալ անվնաս ելլել, Շուշանիկին պիտի միանար:

Սակայն նախատեսած էր Արամ այս մեծ արդելքը եւ անոր յաղթելու ծրարիրն ալ շինած էր մտքին մէջ: Երբ զինուորը իրեն մօտեցաւ զէնքը ձեռքին, Արամ սկըսաւ խենդի մը պէս ինքնիրեն մոլորալ:

— Բեափիրնէ՛րը... քոյրս պէտք է ազատեմ: Մուհամէտի անունով կ'երգնում որ կամ թուրքի մը պէս պիտի մեռնիմ եւ կամ քոյրս պիտի ազատեմ այդ քրիստոնեաներուն ձեռքէն: Ո՞ւր է հրամանատարը, հայրենակից:

— Ինչո՞ւ կ'ուզես հրամանատարը, ծօ:

— Հաճնոյ քրիստոնեաները իմ քոյրս զերի տարած են, մայրս հիւանդ անկողնին մէջջէն դայն կ'ուզէ: Պիտի մեռնի եթէ ան իրեն չի վերադառնայ շուտով: Ես եկայ որ կուտիմ եւ հայերու պարտութիւնը իրականացնեմ մէկ օր առաջ, որպէս զի զերի առնուած խլամներ անոնց տանջանքներէն օր առաջ ազատին:

— Զինուորագրուելո՞ւ եկար ուրեմն:

— Հա՛ կ'ըսեմ, ո՞ւր է հրամանատարը:

— Խենդ ես, ի՞նչ ես դուն:

— Հայա, խենդ եմ, ի՞նչ կարծեցիր, եթէ քու քոյրդ ալ այսպէս հայերու քով զերի մնար, դուն ալ պիտի խենդենայիր: Մայրս եւ ծեր հայրս անոր ցաւէն հիւանդացան:

— Ինձի հետ եկուր, թելադրեց զինուորը միամտութեամբ: Արամ մըթմըթալով հետեւեցաւ զինուորին մին-

չեւ վրան մը, ուր թուրք հրամանատարը իր ստորադաս պաշտօնեաներուն հետ կը խորհրդակցէր պատերազմական նոր ծրագիրներու մասին: Զինուորը հրամանատարին ծանոյց նորեկ կամաւորի մը գալուստը:

— Հոս թող գայ, հրամայեց հրամանատարը:

Արամ յառաջացաւ եւ բարեւեց: Քրոջը կեանքներու քով ըլլալը յայտարարելէ յետոյ, առաջարկեց ծրագիր մը որուն գործադրութիւնը պարտութեան պիտի մատնէր Հաճընցիները: Հրամանատարը կ'երեւի յուսահատած էր իր յաջողութեան մասին եւ յանձն առաւ նորեկի ծրագրին մտիկ ընել:

— Իմ անունս, ըսաւ Արամ, Հիւսէյին օղլու Մէհմէտ է: Իմ եղբայրներս Չանաք Գալէ քրիստոնէայ զնդակներու զոհ գացին պատերազմի ընթացքին: Մենք Հաճընցի ենք: Երբ կեանքները պատերազմէն վերջ երկրին տիրացան եւ սկսան մեզ հալածել, իմ ծեր ծնողքս, քոյրս եւ ես որոշեցինք Հաճընէն դուրս ելլել եւ Ատանայի մօտ գիւղ մը խլամներու մէջ ընակիլ: Բայց այդ գիւղեր քոյրս փախցուցին եւ մեզ սօսիաներով քաղաքէն դուրս վաճառեցին:

Վերջը Քէմալի քաջ հայրենասէրները այս քեանքներս թափանք պաշարեցին: Տարիէ մը ի վեր ամէն օր սպասեցինք եւ յուսացինք որ մեր զինուորները պիտի զինաթափ ընեն այս վայրագները, բայց յուսախար եղանք մինչեւ հիմա: Ծնողքս քրոջս ցաւէն եւ ծերութեան հետեւանքով հիւանդացան եւ պիտի մեռնին: Ես ուխտեցի որ կամ քրոջս վրէժը լուծեմ եւ կամ ազատեմ գայն, որպէս զի ծեր ծնողքս ծերութեան մէջ տխրութեամբ գերեզման չիջնեն: Տէր հրամանատար, թոյլ տուէք ինձ որ ձեզի հետ կուրիմ: Ես այս կեանքներու ամէն գաղտնիքին տեղեակ եմ, անոնց լեզուն իրենց պէս կը խօսիմ: Հարիւրաւոր անմեղ թրքուհիներ եւ թուրքեր կան իրենց մէջ: Թոյլ տուէք ինձի որ ես հոն երթամ այս գիւղեր, իմանամ իրենց գաղտնիքները, տեսնեմ իրենց զիրքերը եւ մէկ օր առաջ մէջ-

տեղէն վերցնենք դանոնք եւ խնայենք մեր քաջ զինուորներու կեանքին եւ թէ ուրախացնենք Քէմալ Բաշան: Զիս չեն ճանչնար անոնք, որովհետեւ ես հազիւ երկու ամիս մնացի Հաճըն: Մնացեալ ժամանակս Սիս անցուցի:

Թուրք զինուորականներ իրարու երես նայեցան եւ ի նշան զոհունակութեան, գլուխնին շարժեցին:

— Այս գիւղեր կրնա՞ս երթալ տղաս, հարցուց թուրք սպան:

— Պատրաստ եմ երթալ երբոր ուղէք:

— Բայց կը կարծե՞ս թէ առանց սպանուելու հոն պիտի կրնաս հասնիլ:

— Կրնայ ճերմակ դրօշակով մը երթալ եւ հոն ալ ըսել թէ հայ է, քանի որ լաւ հայերէն կը խօսի:

— Այո, այդ գիւղին է, հաստատեց ուրիշ զինուորական մը:

— Ինձի ձեզեցէք այդ կարգադրութիւնը, աւելցուց Արամ, ես ծրագիրս մանրամասնօրէն պատրաստած եմ: Թերեւս մի քանի օր հոն մնամ, մինչեւ որ քոյրս դառնեմ: Երբ դուք զէնքի առանձին պայթիւն մը լսէք, հոն յարձակեցէք, ես այնպէս մը կը կարգադրեմ որ զիրենք թակարդի մէջ ձգեմ: Հարկաւ երբեմն գիւղերները ես ձեզի լուր կը բերեմ իրենց զիրքերու մասին: Բայց, տէր հրամանատար, մինչեւ որ կարմիր մահիկին Հաճնոյ վրայ ծածանումը չի տեսնեմ, հանգիստ պիտի չընեմ:

Ծրագիրը յաջողած էր: Իրիկուան դէմ Արամ ճերմակ դրօշակ մը ձեռքը հրաժեշտ առնելով թուրք սպաներէն սեպ զառիպարէն վար քալեց: Թուրք զինուորներ ուշադրութեամբ հետեւեցան իր ընթացքին: Քիչ յետոյ ան ձորին մէջ իջաւ:

Խաւարը սկսած էր թանձրանալ, այնպէս որ թուրքեր զինք չտեսան այլեւս, բայց ան հայերուն հասաւ ողջ առողջ եւ իր գալուստը առիթ տուաւ հայ կամաւոր Հաճընցիներու լեռնազորոգ գոռումին, զոր թուրք սպաներ լսելով կարծեցին թէ ան յաջողած էր իր առաքելութեան

մէջ: Արամ իր նպատակին հասած էր, հող չէր թէ թուրքեր ինչպէ՛ս կը հրճուէին:

Երբ Արամ զարմացկոտ հայ զինուորներով շրջապատուեցաւ եւ հազար ու մէկ հարցումներ իր վրայ տեղացին, ան պատմեց թէ ինչպէ՛ս Ատանայի Անկախութեան Յոյցը ձախողած էր:

— Մի՛ յուսաք, հիւլէի չափ վստահութիւն մի՛ ունենաք Ֆրանսացիներուն վրայ, թեւադրեց Արամ ցաւ ի սիրտ: Մեր իրական թշնամիները մեր խարբեայ բարեկամներն են:

— Ի՞նչպէ՛ս յաջողեցար հոս հասնիլ, հարցուցին իրեն:

— Իբրեւ տաճկական դադտնի ոստիկան, խնդաց Արամ: Թրքական հայրենասիրութեան վրայ պերճախօս քարոզէ մը յետոյ մարդիկ հաւտացին իմ անկեղծութեանս եւ մաղթանքներով զիս հոս զրկեցին որ քոյրս ազատեմ: Ահաւասիկ այս է ամբողջ ծրագրին մանրամասնութիւնները:

— Ատանայի հայութիւնը ի՞նչ կը մտածէ մեր կացութեան մասին, հարցուց ուրիշ Հաճընցի մը:

— Կ'ուզեն կամաւորական խումբեր զրկել որ ձեզի ճամբայ բանան Ատանա նահանջելու, բայց Ֆրանսացի զինուորականներ թոյլ չեն տար: Չկայ, պոռաց Արամ, հայրենակիցներ, մեր կ'զժ բարեկամներէն յոյս չկայ, եթէ մէկ միջոց կայ Հաճնոյ ազատութեան համար, այն ալ նահանջել է դէպի Ատանա, ձեր իսկ միջոցներով: Ծամբան այս լեռներէն անդին շատ զինուոր չկայ: Ամենամեծ դժուարութիւնը այս ձորէն լեռան ետեւ անցնիլն է, մնացածը զիւրին է:

Սեւ ճակատադրի մը անդուժ հարուածներուն տակ յուսահատ Հաճընցի կտրիճներ դետին նայեցան յուսալքքուած: Մոռցուած, լքուած հայորդիներ էին անոնք: Բնութիւնը իր լեռներով զիրենք բանտարկած էր ձորի մը մէջ՝ հեռու իրենց ազդին պաշտպանութենէն: Պարէնին կը հատնէր: Սովը իր սեւ ճանկերը բացած երկու ամ-

սուան պայմանաժամի լրանալուն կ'սպասէր: Իրենց մասին հող չէին ըներ, բայց մանուկները, իրենց կիներն ու զաւակները, հարիւրաւոր որք եւ որբուհիները, ի՞նչ պիտի ըլլային:

— Պէտք չկայ, պոռաց մէկը լուռութիւնը խզելով. թող իրենց ըլլայ իրենց օգնութիւնը, խրամներուն տղաք, կըռուինք Հաճընցիներու պէս եւ մեռնինք հերոսներու պէս: Կուգա՞ս Արամ:

— Բայց ես եկայ որ ձեզի հետ կուրիմ նախ, յետոյ քոյրս հասցնեմ Ատանա:

— Առ Արամ, այս գերմանական զէնքը շատ դիակներ գետին փռած է, երբեք չի վրիպիր եթէ լաւ նշան առնես, ըսաւ մէկը:

— Հայրենակիցներ, առիթը պիտի օգտագործեմ: Հիմա ըսէք ինծի թէ ո՞ւր կ'ուզէք որ խումբ մը տաճիկներ բերեմ այս գիշեր, որպէս զի մէկն իսկ չազատի:

— Դիմացի ձորին մէջ, մատով ցոյց տուաւ մէկը, բայց սպասէ որ ես իմ խումբս հոն տանելու հրաման ստանամ հայ հրամանատարէն: Դուռն ալ հետս եկուր Արամ որ քեզ հրամանատարին ներկայացնեմ:

Արամ հրամանատարին ամէն մէկ հարցումին պատասխանելէ յետոյ, հրամանատարին ցոյց տուած ժայռը մեկնեցաւ, մինչ խումբ մը հայ զինուորներ յարմար տեղ մը զիրք առին: Արամ ըստ իր խոստումին առանձին զէնք մը պարպեց կ'ազեց հայ խումբին քով: Խումբ մը թուրք զինուորներ իրենց կարծեցեալ գաղտնի ոստիկանի ազդանըշանին հնազանդելով պայթիւնի ուղղութեամբ վազեցին:

— Պարսպ տեղ վրէժ լուծելու առիթներ փնտռեցի Ատանայի մէջ, մինչ այդ առիթը հոս եղած է, փախաց Արամ, երբ առաջին կրակը կը թափէր թուրքերուն վրայ եւ բլուրն ի վեր վազեց որպէս զի թուրքեր նահանջելու ճամբայ չունենան:

Մեծ քարի մը ետեւ դիրք առաւ եւ երբ խմբապետը իրմէ խնդրեց որ քաջութիւնը ռազմադիտութեան հետ չը շփոթէ, ան պոռաց իր բոլոր ուժով.

— Ինձի մի նայիք, ես ուղածիս պէս կոտելու եկայ հոս, պըն. խմբապետ:

— Անդգոյշ եթէ ըլլաս, կ'սպաննուիս, պատասխանեց խմբապետը:

Այս միջոցին կրակներու մէջէն թուրքեր նահանջել փորձեցին, բայց ամէն անգամ որ մէկը ժայռին ետեւէն վեր ելլել կը փորձէր, Արամ դայն գետին կը փռէր:

Լերան վրայի թուրք հրամանատարները սակայն, դուշակելով իրենց զինուորներուն աննպաստ դիրքը, օգնական խումբ մը զրկեցին: Մինչեւ որ անոնք կոտատեղի հասան, կրակը դադրեցաւ: Հայ զինուորները անոնց ոտնաձայներէն կռահեցին որ թուրքեր ճիշտ իրենց վրայ պիտի դային: Բայց Արամ արդէն այդ վտանգը նախատեսելով թուրք մեռեալ եւ վերաւոր զինուորներուն կողմը անցած էր: Զէնքի ազդանշանը Արամէն լսուելուն պէս թուրքեր ձայնի ուղղութեան հետեւեցան: Հայ խումբը ոչ մի չըւակ հանեց մինչեւ որ թուրքեր իրենց մեռեալներուն քով հասան: Արամ իր առաջուան դիրքին ետեւ սպասեց: Թուրքեր երբ տեսան թէ իրենց ընկերները ամբողջութեամբ սպաննուած էին, նահանջելու փորձ մը ըրին: Արամ սկսաւ կրակել, ուրիշներ իրեն հետեւեցան:

— Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը-տասը:

Մերկ լերան վրայ անպատսպար էին թուրքերը, նահանջի փորձը չյաջողեցաւ: Իրենք զիրենք ժայռին ետեւ նետեցին: Թուրքերէն կապար մը Արամի առջևի քարը երկու կտոր ըրաւ: Արամ դադրեցուց կրակը հինգ վայրկեանի չափ եւ երբ տեսաւ թէ թուրքեր զինք մեռած կարծեցին, մի քանի կանդուն վեր մաղլցեցաւ մացառի մը ետեւէն եւ երբ ձեռքը երկնցուց որ մեծ քարէ մը բռնելով, անոր ետեւ դիրք բռնէ, կապար մը սուլեց ականջին քո-

վէն: Արամ վեր նայեցաւ եւ ինքնաբերաբար պարպեց հրացանը իր հակառակորդին վրայ: Սպայ մըն էր:

— Դուն, դուն, խաբեբայ քեաֆիր, գաղտնի ոստիկանի դեր պիտի կատարէիր, հը: Բայց ատրճանակը ըսպային ձեռքէն ինկած էր: Ան ձախ ձեռքով սուրը քաշեց եւ կեցաւ:

— Սուրովդ պիտի կոտուի ինձի դէմ, հը. վարժուած էք անդէն ու անմեղ հայերը ոչխարի պէս գլխատելու, չէ: Կը կարծէիք թէ բազբի անիւը երբեք պիտի չդատնա՞ր: Հիմա քեզ անմիջապէս գետին կը փռեմ, բայց քանի որ կ'ուզես սուրով կոտելի, քիչ վերջը քեզի հետ պիտի սուսերամարտիմ: որպէս զի չըսես թէ զէնքով միայն քեզի յաղթեցի, ըսաւ Արամ սպային, որ ձեռքէն վերաւորուած էր: Եթէ կ'ուզես քաջի մը պէս ինձի հետ կոտուիլ, սուրդ վար ձգէ, քեզի հետ այս կռիւէն վերջ կը տեսնուիմ: Վստահ եղիր որ ոչ մէկ մարդ քու վրայ ձեռք պիտի վերցընէ: Ձեմ ձգեր, պիտի չձգեմ: Եթէ կռիւը լմնայ քեզի հետ կը սուսերամարտինք, եթէ դուն իմ արիւնս լսմես՝ հալալ ըլլայ, իսկ եթէ ես քու կ'իկնդ իմեմ՝ քսաներորդ դոհըս կ'ըլլաս եւ վրէժս լուծած պիտի սեպեմ:

— Կը կարծե՞ս թէ քեզի պէս ստախոսներու խօսքին հաւատարմով սուրս վար պիտի ձգեմ, դուն վար ձգէ հրացանդ եւ եկուր սա մացառին ետեւ որ սուսերամարտինք: — Որո՞ւ հետ կը խօսիս, Արամ, կանչեց խմբապետը պայթիւններու մէջէն:

— Իմ մասիս մի մտածէք, Վահան, դուք ձեր կռիւը շարունակեցէք, պատասխանեց Արամ սպային ցոյց տուած տեղը քայլելով:

Վրիժաճարաւ, Արամ զէնքը վար ձգելով սուրը քաշեց իր ոտիսին դէմ:

— Եթէ քաջ ես միակ ձախ ձեռքդ պէտք է գործածես, իմ աջ ձեռքս վերաւորուած է:

— Այո, ոճրագործ, ուղածիդ պէս թող ըլլայ, յանձն առաւ Արամ դանակը ձեռքին մէջ առնելով: Ես թուրքի

— Ես կը կարծէի թէ Արմենուհին ձգել շիտակ պիտի չըլլար քեզի համար եւ քեզ տեսնելէ յոյս կտրած էի այլեւս, վստահացուց Շուշանիկ: Ի՞նչ ըսաւ Արմենուհին երբ հոս եկար:

— Արմենուհին զիս լքեց:

Յետոյ Արամ պատմեց ակնախութեան ցոյցը եւ այդ յուսահատ դիչերը երբ Արմենուհիի դուռը ծեծած եւ անպատասխան մնացած էր:

— Ես զինք միշտ պիտի սիրեմ, թէեւ զիս լքեց, հաւաստեց Արամ դրեթէ լալով:

— Երբեք մի տիրիր Արամ, Շուշանիկ քեզ չի ւէքեր եւ ուրիշ աղջիկներ շատ կան:

— Ուրիշ աղջիկներ... փսփսաց Արամ խոկալով: Գոցենք այդ խնդիրը հիմա քոյր: Ես հոս եկայ որ դոնէ քեզ ազատեմ: Հաճըն ահաւոր վախճանի մը կը մօտենայ: Սովը արդէն ծայր տուած է եւ ուղմամթերքը կը հատնի: Ես անոնց ըսի թէ փրկութեան միակ ճամբան Ատանա նահանջելն է, քանի դեռ ուղմամթերք ունին: Կը յիշե՞ս այդ օրը երբ ես խնդրեցի Հաճընցիներէն որ իրենց վրէժը լուծեն:

— Անշուշտ կը յիշեմ եղբայր: Դուն շիտակ էիր:

— Հաճընցիք չու կ'ընեն եթէ ինծի մտիկ ընեն եւ նահանջեն, կարելի եղածին չափ շուտ: Հարկաւ դժուար դործ է: Շատ դոհեր պիտի տանք, բայց աւելի շահաւէտ է քան հոս մնալ եւ վերջ ի վերջոյ անձնատուր ըլլալ: Վստահ եղիր, երբ այդ ահաւոր օրը հասնի, թուրքեր Հայ մ'իսկ պիտի չձգեն:

— Շիտակ ես, բայց եթէ անոնք քու թելադրութիւնը մերժեն ընդունիլ, պիտի կրնա՞ս զիս ազատել:

— Բացարձակապէս, եթէ քսան մարդիկ յօժարին նահանջել, կրնանք դիւրաւ ճամբան բանալ: Իսկ եթէ ոչ մէկ մարդ անսայ իմ թելադրութեանս, ճար մը պիտի մտածեմ որ քեզ ազատեմ, յայտարարեց Արամ մտածկոտ:

— Հիմակուրնէ կը սոսկամ, երբ նահանջի մասին կը մտածեմ:

— Քոյր, կեանքը բախտախաղ մըն է, կամ կը շահիս, կամ կը կորսնցնես, հոս մնալ մահ կը նշանակէ, իսկ նահանջելու փորձին մէջ յոյս կայ:

— Ինչպէս որ կ'ուզես, թող այդպէս ըլլայ, եղբայր: Հոս մնաս կամ երթաս քեզմէ այլեւս պիտի չը բաժնուիմ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ն ա հ ա ն ջ ը

Արամ անհամբեր իր առաքելութիւնը դործադրել կը ջանար: Երկու երեք օր այդ նպատակի յաջողութեան համար պէտք եղած միջոցներ ձեռք բերել աշխատեցաւ: Ժողովողային մեծ զանդուած մը կը նախընտրէր հոն մեռնիլ, իսկ անոնք որ նահանջի համամիտ էին, կը քաշուէին իրենց փափաքը բացէ ի բաց արտայայտել: Կը վախնային, որ ժողովուրդը զիրենք վախկոտներ պիտի նկատէր: Արամին կը մնար այս փոքրամասնութիւնը համոզել թէ նահանջը վախկոտութիւն չէր, այլ ամենատրամաբանական քայլը:

Փորձառութիւնը միմիայն տարիքի վերապահուած չէ միշտ: Արամ թէեւ հազիւ պատանի մը, բայց Հաճընցիներու նահանջելու կամ հոն մնալու խնդրոյն մէջ իր բռնած դիրքը բացարձակապէս փորձառութեան վրայ բռնած էր: Արամ դիտէր որ Փրանսացիք Հաճնոյ օգնութեան պիտի չհասնէին եւ ոչ ալ պիտի ձգէին որ Հաճնութեան պիտի չհասնէին եւ զինքն համոզել, իրենց կշռուած ի դուր կ'աշխատէին զինքն համոզել, իրենց կշռուած զանդադրէն արտասանուած բառերով՝ թէ դարերէ ի

վեր իրենց երազած օտար քրիստոնեայ իրկիչները սեւէ
զոհողութիւն զանց պիտի չընէին հերոսական Հաճնոյ ա-
զատութեան համար: Դեռ ոչ մէկ բիծ աղարտած էր ա-
նոնց սին յոյսերը: Բայց Արամ առիթն ունեցած էր ի-
րականութեան յոյսին տակ տեսնելու օտար բարեկամնե-
րու, մարդասիրութեան դիմակին տակ հետապնդած շա-
հադիտական, անձնասիրական նպատակները: Կեղծա-
ւոր էին անոնք: Իրենց նիւթասիրութեան դործիք ընել
կ'ուզէին խեղճ ազգ մը, տառապած ժողովուրդ մը: Ո՞հ,
անիմաստ պարզամտութիւն...:

Այն թուրքը, որուն դէմ իբր թէ կը կուէր Հայ աղ-
դին պաշտպանը, բուն իսկ այդ քրիստոնեայ պաշտպա-
նէն կ'ստանար իր ուղղամթերքը, իր հրացանն ու թըն-
դանօթը, իր սուրն ու ումբը: Պէտք էր նահանջել որ-
պէս զի ամօթահար մնային այդ պաշտպանները, որոնք
կտրիճ Հաճընցիներու փճացումին համար կարծես հա-
մաձայնութեան եկած էին թուրքերու հետ: Նահանջը
պիտի նշանակէր յաղթանակ մը Հայութեան, պատիւ Հա-
ճընցի կտրիճներուն, իսկ նուաստութիւն Փրանսացիներ-
րուն: Պէտք էր նահանջել որպէս զի Հայութիւնը ցոյց
տար աշխարհին իր ապրելու կամքին յաղթական ապա-
ցոյցը եւ իր իրաւունքները պաշտպանելու կարողութիւ-
նը:

Արամ անխախտ կամքով պաշտպանեց իր թէզը: Ո-
մանք խնդացին իսկ ոմանք մտիկ ըրին: Ոմանք վախ-
կոտ մը նկատեցին զինք, ոմանք քաջ: Բայց Արամ եր-
կար չէր կրնար սպասել այլեւս: Հաճընցիներու մէջ սովը
սկսած էր ծայր տալ: Մարդիկ սկսած էին կատուներ
ուտել, խոտեղով օր անցնել: Ձէր ուղեր Փրանսական
էնթրիկներու զոհ երթալ: Կ'անարգէր այդ թակարդը,
որուն մէջ Փրանսացիք սովամահ պիտի ընէին իր հայ-
րենակիցները: Պէտք էր ազատէր այդ զեհներն, որպէս
զի թընէր մարդկային կեղծաւորութեան վրայ, եւ թե-
րեւս ամչնային Հայուն կեղծաւոր բարեկամները՝ ողջ

տեսնելով իրենց մատնած խեղճ ժողովուրդին զաւակ-
ները:

Հինդարթի իրիկուն մըն էր, երբ Արամին հետե-
ւորդներու պղտիկ խումբը իր տունը հաւաքուած նահան-
ջի համար պատրաստութիւններ կը տեսնէր: Հազիւ երե-
սունեւութը հողիէ կազմուած պղտիկ խումբ մըն էր ան:
Խումբին ծրագրած նահանջին լուրը ամէն կողմ տարա-
ձայնուած էր Հաճնոյ մէջ: Վախկոտներու խումբ մըն
էին անոնք՝ յաջ ժողովուրդին: Բայց անոնք պիտի մեկ-
նէին: Ժամանակը ցոյց պիտի տար թէ ո՞րն էր շիտակը
— հոն սպասել եւ անխուսափելի մահը դիմաւորել, թէ
ելլել այդ տեղէն ու բարեկամ-թշնամի մը անգութ ծը-
րադիրը վիժեցնել:

Վերջապէս դիչերուան ժամը Գ-ին խումբը ճամբայ
ելաւ: Անոնցմէ ամէն մէկուն տարազը կարելի չէր գա-
նազանել թուրքի մը տարազէն: Բոլորն ալ զինուած էին:
Քամահրական նայուածքներու առջեւէն անցնելով կամաց
կամաց քալեցին մայրիներու եւ մացառներու մէջէն դէպի
լեռնային անդնդախոր անցքը: Կէս ժամ ճամբորդու-
թենէ յետոյ անոնք փոխեցին իրենց ճամբան եւ լեռն ի
վեր մաղցելով անոր զագաթը հասան, ուր մի քանի
թուրք զինուորներու հետ պղտիկ ընդհարումէ մը յետոյ
անլնաս շարունակեցին իրենց ճանապարհը:

Ութը օր վերջը Ատանայի մօտեցած էր խումբը, որ-
մէ միայն 28 հոգի մնացած էր: Ազատութեան հորիզոն-
ները կը տեսնէին անոնք քիչ հեռուն: Վերջապէս պիտի
նազատէին այլեւս եւ նոր ընդհարում կամ վտանգ անհա-
ազատէին խումբը: Գիւշերը վրայ հասած էր եւ սեւ
լանական կը թուէր: Գիւշերը վրայ հասած էր եւ սեւ
ամպեր երկնակամարը պատելով երկիրը թանձր խաւա-
րով մը ծածկած էին: Ամառուայ անձրեւաբեր փոթորիկ
մը սկսաւ իր աղբանջանը տալ: Բայց բնութիւնը իրենց
նպաստաւոր ծրագրները կը դործադրէր: Եթէ կային
թուրքեր՝ զինուոր կամ կամաւոր՝ խաւարին մէջէն պի-
տի չկրնային զիրենք նմարել: Իրարու ետեւ մէկ դը-

Շուշանիկը հոն չկար: Հակառակ միւսներու աղա-
չանքին եւ պաղատանքին, Արամ իր ուժասպառ վիճա-
կին մէջ ետ դարձաւ Շուշանիկը փնտռելու: Իրենց ե-
տեւ ձգած ճամբուն վրայ երկու հրացաններ իրարու կը
պատասխանէին: Արամ հեւալով վազեց մինչեւ որ դը-
տաւ Շուշանիկը հարիւր քայլ անդին տեղ մը: Ան պառ-
կած կը կռուէր:

— Ել Շուշանիկ, ո՞ւր ես, ինչո՞ւ ետեւ մնացիր,
հրամայեց Արամ բարկացոտ: Ես քեզի չըսի՞ թէ ինձի
հետեւէ:

— Այո, բայց ես կորսնցուցի ձեզ: Դուք երբ դա-
գաթը ելած էիք, ես դեռ ձորին մէջն էի: Միակ միջո-
ցը որ ունէի ստուգելու թէ՛ հոն հասնողները դուք էիք,
ձեր գերմանական հրացաններու ձայնն էր:

Բայց Արամի զօրութիւնը հետզհետէ կը նուազէր:

— Ի՞նչ է Արամ, ինչո՞ւ խմածի պէս կը քալես, հար-
ցուց Շուշանիկ, անոր օձապտոյտ քալուածքը նշմարե-
լով:

— Շուտ ըրէ, որ խումբին հասնինք, բան չկայ պա-
տասխանեց Արամ:

— Բայց Արամ դուն կամ հիւանդ ես եւ կամ վիրա-
ւորուած:

— Շուշանիկ անոր ձեռքը բռնեց: Տաք հեղուկ մը
զգաց իր ձեռքին վրայ: Բացատրութեան հարկ չկար
այլեւս:

Սումբը Փրանսական պահակներուն մօտեցած էր,
իրենցմէ մին ճերմակ դրօշակով մը անոնց դիմեց: Թոյ-
լատրուեցան որ Ատանա մտնեն: Ատանայի կամուրջը
անցան եւ հազիւ թէ ազդային հիւանդանոցին մօտեցած
էին երբ Արամ ուժասպառ գետին ինկաւ:

— Վերցնենք զինք, աղաչեց Շուշանիկ, եւ հիւան-
դանոց տանինք:

Հիւանդանոցին դուռը հասան եւ Շուշանիկ սկսաւ
դրան զանգակը զարնել արագ արագ:

Ժամերէ ի վեր անձրեւի տակ մնացող յոգնատանջ
խումբը լուսթեան մէջ հիւանդանոցի դրան բացուելուն
սպասեց, մինչ Շուշանիկ դրան զանգակը կը զարնէր շա-
րունակ: Ներսէն ձայն չլսուեցաւ: Մըրիկը ուժգնօ-
րէն կը սուլէր փողոցներուն մէջ եւ տանիքներուն վրայ,
մինչ երկնազդորդ որոտումը կը շարունակէր անձրեւին
հետ միասին:

— Կ'աղաչեմ դուք զացէք եւ տեղ մը պատասպարուե-
ցէք, թելադրեց Շուշանիկ իր հայրենակիցներուն, որոնց
համար կարծես քաջ Արամին հանգստութիւնը աւելի նա-
խամեծար էր քան իրենց իսկ հանդիստը:

— Սպասեցէք օրիորդ, պատասխանեց խումբին մէ-
ջէն երիտասարդ մը, մինչեւ որ դուռը բացուի:

Շուշանիկ զէնքի կոթով դուռը նորէն ծեծեց: Մե-
ռա՞ծ էին արդեօք ներսիները թէ թշնամիներ կը կար-
ծէին զիրենք:

— Դուն միայն հոս կեցիր Սարգիս եւ միւսները թող
երթան, թելադրեց նորէն Շուշանիկ եւ հարուածեց դու-
ռը:

Սումբը մեկնեցաւ: Յանկարծ հիւանդանոցի պա-
տուհաններէն մին բացուեցաւ եւ ճերմակ գլխարկով աղ-
ջիկ մը գլուխը դուրս հանելով վար նայեցաւ:

— Հայեր ենք մենք, քոյր, եղբայրս վիրաւոր է,
դուռը բացէք շուտ, կանչեց Շուշանիկ:

Հիւանդապահուհիին գլուխը անհետացաւ, առանց
հարցուփորձի եւ ըստ մը յետոյ քնատ պահապանը դու-
ռը բացաւ յօրանջելով:

Արամ կը հռաչէր երբ զինք վեր տարին սենեակ մը
եւ սեղանի մը վրայ պառկեցնելով թեւը մաքրեցին ու
կապեցին: Շուշանիկ հազիւ կրցաւ մի քանի բառերով
բացատրել իրենց փախուստի պատմութիւնը եւ ուժաս-
պառ աթոռի մը վրայ ինկաւ: Ձինք կանանց բաժնին մէջ
սենեակ մը փոխադրեցին իսկ Արամ մասնաւոր հիւան-
դապահուհիի մը խնամքին յանձնուեցաւ:

Ուժասպառ ու Հիւանդատ

Լամբարի մը աղօտ լոյսով լուսաւորուած էր այդ սենեակը, ուր անընդհատ լուռութեան մէջ եւ գլխասիրտ հիւանդապահուհիի մը սիրաշող նայուածքին տակ, Արամ հանդիստ կը քնանար: Պատուհանէն կարելի էր տեսնել երկինքի աստղերը, որոնք կը պսպլային ժպտօրէն:

Հինգ տարիներու արկածալից եւ բազմատանջ կեանքի մը առաջին հանգիստն էր որ Արամ կը վայելէր... կամ ստիպեալ համակերպած էր այդ վայելքին: Տառապանքն ու յոգնութիւնը խամբեցուցած էին անոր թուշերուն առուգութիւնն ու կարմրութիւնը եւ ճակատին վըրայ տանջանքը իր գիծերը դրոշմած էր:

Հիւանդապահուհին անոր մէկ ձեռքը աիին մէջ առած՝ ամէն անգամ որ անոր երեսին վրայ պղտիկ շարժում մը կը տեսնէր, կոշտ ձեռքը թող կուտար եւ ոտքի կը կանգնէր: Իր ձեռքին թաշկինակը յաճախ աչքերուն կը տանէր եւ յետոյ նորէն կը հառաչէր, կը խօսար եւ կ'սպասէր: Հրեշտակադէմ այդ օրիորդն ալ թերեւս տանջուածներէ մին էր եւ Արամ առիթը ստեղծած էր որ անոր սրտի ցաւերուն անթեղուած կրակները բոցավառէին, զսպուած արցունքները լուռ, լուռ կաթկթէին առանձնութեան մէջ:

Քիչ յետոյ հիւանդապահուհին ոտքի ելաւ եւ դուրսէն թերթ մը ձերմակ թուղթով ետ եկաւ: Հաստ սեւ գծի մը վրայ թուղթին վրայ հաղիւ թէ կարդաց Արամ Աշտտեան անունը, թուղթը ձեռքէն ինկաւ: Ձեռքերով կուրծքը ճանկուտեց, մատները խածաւ եւ աչքերը լայն բացաւ: Ուղեց դուրս վաղել, պոռալ եւ արթնցնել ամբողջ հիւանդանոցը, բայց կըցաւ ինզինք զսպել: Իր հիւանդին քովը զնաց նորէն, ծունկի եկաւ անոր մահճակալին

քով եւ յորդառատ արցունքներու մէջէն դիւթական արտայայտութիւնով մը փախաց «Փառք Գեղ Տէ՛ր...»: Բայց հաղիւ թէ լրացուցած էր իր նախադասութիւնը, հիւանդը շարժեցաւ, թեւերը վեր երկարեց, երեսը ցաւազինորէն ծամածոնցաւ եւ աչքերը բացած մահացու նայուածքով մը հառաչեց ցաւազին: Հիւանդապահուհին սարսափահար հիւանդին նայեցաւ: Անոր երեսին գոյնը զնաց, մարմինը քարացաւ... ձեռքերը պաղեցան եւ ոտքերը սառեցան... Մեռած էր:

Դուրս վաղեց խելակորոյս աղջիկը հեծկտալով:

— Մօրեղբայր... մօրեղբայր, պոռաց ան շէնքին մէջ վաղելով խենդի մը պէս:

Դուռ մը բացուեցաւ յանկարծ: Հիւանդապահուհիներ իրարանցումի եւ խուճապի մատնուած գիշերանոցներով դուրս եկան: Անոնք չէին իր ուղածը: Անոնք չէին կրնար մահուան ձեռքէն աղատել Արամը: Իր մօրեղբայրը կ'ուզէր, Ամերիկահայ բժիշկը:

— Մօրեղբայր... հասիր մօրեղբայր: Օ՛հ...

Հիւանդապահուհիներ իրեն նայեցան շուարած: Ի՞նչ պատահած էր այս աղջկան: Մէկը կը մեռնէր... Ի՞նչ կ'ըլլար: Հարիւրաւորներ մեռած էին այդ սենեակներուն մէջ:

— Ի՞նչ եղաւ Արմենուհի, հարցուց հիւանդապահուհիներուն պետը:

— Կը մեռնի...

Հիւանդապահուհիներէն ոմանք խնդացին եւ իրարու նայեցան:

— Կարծես միակ մեռնողը ըլլար այդ Հաճընցին, ըսաւ մին միւսին: Սիրահարած է կ'երեւի երիտասարդին:

— Կը դարմանամ թէ ոմանք ի՞նչ շուտ կը սիրահարուին հիւանդներու հետ, մէջ ինկաւ ուրիշ մը:

— Բոլոր հիւանդներն ալ իրեն կը սիրահարուին:

— Իրն է յանցանքը, աւելցուց գիւրուկ աղջիկ մը՝ ջերմաչափ մը ձեռքին: Եթէ ես ալ ուզեմ, ինձի հետ ալ կը

սիրահարուին: Այդ թողարտաւոր տղան միշտ սիրոյ մասին կը խօսի ինծի, բայց մտիկ իսկ չեմ ընել:

— Գիտե՞ս թիւ 2-ի հարուստ երիտասարդը, վստահեցուց երիտասարդ (35 տարեկան իրականութեան մէջ, բայց ըստ երեւոյթին դեռ 22-ը հազիւ լմնցուցած) աղջիկ մը, ինծի համար կը խենդենայ: Շատ քաղաքավար եւ կրթեալ երիտասարդ մըն է, բայց իրեն բնաւ երես չեմ տար:

Այս վերջնոյն յայտարարութիւնը սակայն ոեւէ մէկուն ուշադրութեան չարժանացաւ, որովհետեւ հիւանդապահուօժանները զինք տեսած էին այդ կրթեալ երիտասարդին հետ գիրկընդխառն՝ քանի մը օր առաջ:

Բայց մտերմական խօսակցութիւնը անմիջապէս դադարեցաւ, երբ Ամերիկահայ բժիշկին սենեակին դուռը բացուեցաւ եւ Տքթ. Յովնան վերարկուի մը մէջ փաթթուած դուրս եկաւ: Հիւանդապահուօժաններէն ոմանք սենեակներէն ներս քաշուեցան, իսկ անոնք որոնք գիրչերուան դըթութեան քոյրեր էին՝ բժիշկը դիտեցին:

— Մօրեղբայր, շուտ, կը մեռնի, ազաչեց Արմենուհի եւ բժիշկը առաջնորդեց Արամին սենեակը:

— Բայց ինչո՞ւ զիս կանչեցիր, չէ՞իր գիտեր որ Տքթ. Արչակն է գիրչերուան բժիշկը, հարցուց Տքթ. Յովնան կասկածելով:

— Որովհետեւ, Ար-Ար-ամն է այս մօրեղբայր, իմ նշանածս...: Թերեւս մեռաւ: Նախ չճանչցայ զինք, բայց երբ դեղացուցակին նայեցայ, այլեւս տարակոյս չկար որ ան էր: Մեռած է մօրեղբայր:

Բժիշկը իր սովորական սպառիւնդութեամբ հիւանդին կուրծքին վրայ հակեցաւ եւ մտիկ ըրաւ սրտի թեթեւ բարխումին, որ դեռ կեանքին կը կառչէր հեւալով, անորոշ...: Իր արհեստին տէրն էր բժիշկը, որուն երեսի արտայայտութեան կարելի էր իսկոյն նշմարել թէ Արամ վտանգաւոր կացութեան մէջ կը գտնուէր, կեանքի եւ մահուան միջեւ տարուբեր: Զարմացած, բայց զգալիօրէն

յուսահատ, բժիշկը աչքերը Արմենուհի արտասուածքը դէմքին յառած մտածեց... անորոշ...: Իրապէս յոյսերու եւ յուսախարութեանց երկար շղթայ մըն էր կեանքը, որուն մէջ սակայն, յոյսի օղակները շատ քիչ էին եւ եղածներն ալ հինցած ու մաշած, դօսացած... անփայլ...:

Ի՞նչ դժբախտ աղջիկ մըն էր Արմենուհին, տարաբախտ...: Ամէն դէպք, ամէն դժբախտութիւն, ամէն անակնկալ աջէ խեղճ, ազադուն, տկար աղջկան շուրջ կը հիւսուէին: Դեռ երկու ամիս առաջ ստոյգ մահէ ազատած էր, բայց ազատած...: Մարդասպան, կալանաւոր, պատերազմական ատեանի յանձնուած էր, որովհետեւ կը սիրէր...: Այն օրէն ի վեր, երբ այդ արտասուող աղջիկը սկսած էր սիրել Արամը, դժբախտութիւնները իրարու յաջորդած էին: Ի՞նչ սոսկալի ախտ մըն էր սէրը, որմէ վարակուած էր այդ աղջիկը: Սէրը վարդի մը նմանցուցած են շատեր. բայց Արմենուհին անոր մէջ փուշէն դատ բան չի տեսաւ. փուշեր, փուշեր... բայց ան դեռ կը սիրէր... Անոր համար այդ փուշերը կոկոնի մը փուշերն էին: Գարունը պիտի դար եւ սոխակներու մեղեդիին հետ օր մը այդ փշոտ կոկոնը, որ սէր կը կոչուի, պիտի բացուէր, արշալոյսի մը բոսորագոյն շողերուն հպումով: Բժիշկը, իր մօրեղբայրը, պատերազմական ատեանէն անպարտ արձակուած օրը ըսած էր իրեն, որ մոռնար այդ խենդ, թիպոսական եւ արկածախնդիր տղան եւ... չէ՞ որ հիմա բժիշկի մը քրորդին էր եւ կրնար աւելի լաւ մէկու մը հետ ամուսնանալ: Բայց Արմենուհի հեծկտուք մը կուրծքին տակ, ամուրի մնալու եւ հիւանդապահուօժի մը ըլլալու վճռական որոշումը տալով ցկեանս փակած էր ամէն խնդր: Ան համակերպած էր բժիշկի կամքին եւ կը դործէր Աղգային Հիւանդանոցին մէջ:

Հայ բժիշկը իւրովի յուշաբերեց իր քրորդույն պատմութիւնը: Շուարած էր: Իր դէմ Արամի սնարին մօտ սոպասողական ակնարկով կը կենար Արմենուհին: Ուխտեալ կոյսը... Արմենուհին որուն համար սէր չկար այլ-

եւս, բայց միայն ծառայութիւն, ծառայութիւն հիւանդներու, արտաւերներու, երազուն թոքարտաւերներու, ցաւազար մարդկութեան. մինչեւ որ — եւ ի՞նչ ապշեցուցիչ անակնկալ մըն էր այդ — Արամ, այդ թափառական եւ վրէժխնդիր սղան, իր չարակոչկոճ մարմինը քաշկըտած էր փոթորիկներու մէջէն եւ անակնկալօրէն եկած այդ հիւանդանոցը, ուր դարձեալ յանձնուած էր Արմենուհիի, որուն արտասուածքը աչքերուն առջեւ հիմա կիսամեռ պոռկած կարծես կը թախանձէր. «Եկայ, Արմենուհի, քեզի եկայ նորէն: Բայց Արմենուհի, ինչո՞ւ այդ ահարկու գիշերը երբ դուռդ դարկի, չբացիր: Դեռ նեղացած ես ինձմէ: Ներէ ինձի իմ անձանօթ յանցանքներու համար, ներէ ինձի: Տե՛ս մահը իր ճանկերը կ'երկարէ կոկորդիս: Ժպտէ, ժպտէ որ մահը քաղցր ըլլայ ինձի: Ժպտէ որ կարենամ տոկալ հոգեվարքիս: Ներէ ինձ Արմենուհի, տես ճակատս կը քրտնի, մահուան պաղ քրտնինքն է ան: Դիր, մատներդ դիր ճակտիս վրայ: Ժպտէ ինձ, ժպտէ ինձ, թերեւս չմեռնիմ»:

Իժիշկը դեռ ինքնամոռացութեան մէջ կը տուայտէր: Արմենուհին դեռ կուլար: Արամ նոյն վիճակին մէջ էր: Ինչո՞ւ, այդպէս անհոգ կը շարժէր իր մօրեղբայրը: Ինչո՞ւ չէր ուզեր յղատել իր նշանածը: Անդո՞ւթ...

— Մօրեղբայր... .

— Ե—ս... այս «այո»ին անգլիերէնը մեքենաբար ելաւ բժիշկին բերնէն:

— Մօրեղբայր, յոյս — յոյս կա՞յ դեռ թէ... հեծկըլտաց Արմենուհին:

— Արմենուհի, մանուկի մը պէս մի վարուէր, ըսաւ բժիշկը եւ ինքզինքը գանելով նորէն հիւանդին կուրծքին վրայ ծուցաւ եւ գործիքով մը սրտին բարախիւնին մտիկ ըրաւ: Ծուտ ինձի սառ բեր, հրամայեց Արմենուհիին: Սառը հիւանդին գլխուն վրայ դրաւ եւ քիչ յետոյ Արամ սկսաւ հանգիստ շնչել:

— Օ՛հ, մօրեղբայրս, պիտի ապաքինի՞ թէ...

— Ո՛չ... .

— Ո՛չ, ոչ, մօրեղբայր, ըսէ թէ պիտի ապաքինի:

— Բայց... .

Արմենուհի մտիկ ըրաւ:

— Երակներէն ներս արիւն պէտք է ներարկել Արմենուհի: Գէորգը կանչէ եւ տեսնենք թէ պիտի ուզէ՞ քիչ մը արիւն տալ:

— Մօրեղբայր. ես կուտամ իմ արիւնէս: Հրամէ, թեւ ըր բացաւ, որչափ որ պէտք է առ: Գէորգը այս գիշեր Տարսոն իր ծնողաց քով դնաց: Իմ արիւնս լաւ է: Ծուտ մօրեղբայր... .

— Բայց նախ պէտք է արիւնդ քննել: Արմենուհի դուն բաւականաչափ արիւն չունիս: Եթէ քեզմէ արիւն առնեմ, թերեւս հիւանդանաս:

— Հապա ո՞վ... .

— Մի ջղայնտիւր Արմենուհի, համբերէ՛... պահապանը ինձի կանչէ:

Գիրուկ եւ ծոյլ պահապանը ներս եկաւ, սրտին մէջէն անիծելով զինք իր անուշ մրափէն արթնցնողները եւ բժիշկին նայեցաւ:

— Պր. Սարգիս, այս հիւանդին արիւն պէտք է եւ եթէ թոյլ տաս որ քեզմէ քառօրդ օխտ արիւն առնեմ, հիւանդը կ'ապաքինի, եթէ ոչ յոյս չկայ:

— Արի՞ւն առնել ինձմէ... ի՞նչ ըսել կ'ուզես տոքթոր:

— Այսինքն, երակդ կը կտրեմ եւ կ'առնեմ:

— Ո՛չ, ո՛չ, Պր. բժիշկ, ես չեմ ուզեր: Եթէ կ'ուզես վաղն ալ կը հրաժարիմ: Տէր Աստուած, այսպէս բան չէի լսած դեռ: Հա, հա, հա, զիս ողջ ողջ դերեզման դնել կ'ուզէ: Ես այսքան կոտորածներէ ազատել վերջ դիւրին, դիւրին այս անուշ կեանքէն վաղ չեմ անցնիր:

— Քեզի վտանդ չը... .

Պահապանը արդէն դուրս սպրդած էր:

— Առ մօրեղբայր, առ, ճչաց Արմենուհին յանկարծ, տես կը վազէ: Արիւն, արիւն... Արամին համար...

— Ի՞նչ ըրիր Արմենուհի, խենդեցա՞ր աղջիկ:

Արմենուհի իր երակը ածելիով մը պատռած էր: Ճար չկար, բժիշկը պէտք էր ընդունէր այդ արիւնը եւ ընդունեց:

Արեան սրտուստը ազատեց Արամը: Հետեւեալ գիշեր ան հանդիստ էր: Վերջին կուրը կը յիշէր, բայց ասկէ անդին ոչինչ: Հիւանդապահուհի իրեն ըսաւ թէ զինք գիշեր մը հոն բերած էին: Նուաղած էր, արիւններու մէջ թաթախուած եւ հիմա կ'ապաքինէր: Շուշանիկ աղէկցած էր եւ ցերեկին իրեն այցելած էր երկու ժամ:

Ոչ արեան սրտուստէն լուր ունէր ան, ոչ ալ այդ գործողութեան հետ առնթներ իր սենեակին մէջ բեմադրուած այն սրտայոյզ տրամէն, որուն գլխաւոր դերակատարներն էին Ամերիկահայ բժիշկը եւ Արմենուհին, որոնցմէ եւ ոչ մին տեսաւ Արամ աչքերը բանալէն յետոյ: Բայց իր խորհուրդներուն մէջէն մշուշը հետզհետէ անբեւութացաւ: Արամ հիմա ամէն բան յտակ կերպով կը յիշէր: Այո, ազատած էր: Ատանայի հիւանդանոցին մէջ էր հիմա: Շուշանիկը ազատած էր: Յաղթանակը իրն էր: Բայց... մտքին մէջ խորհուրդ մը, սրտին մէջ կարօտ մը դեռ գոհացում կը պահանջէին: Ի՞նչ էր ան. չէր գիտեր: Մտածեց... եւ յանկարծ մտքին մթնշաղին մէջէն յիշեց... Արմենուհին: Ո՞ր էր ան: Դեռ կ'ատէ՞ր զինք թէ ոչ ուրիշի մը հետ ամուսնացած էր: Արամ իր անկողինն մէջ անհանդարտ սկսաւ ասդին անդին շարժիլ:

— Անհանդի՞ստ ես, պարոն, հարցուց հիւանդապահուհին ձեռքը անոր ճակատին դրած:

— Ո՛չ, ո՛չ, կարծեմ հանդիստ եմ, օրիորդ, շնորհակալ եմ:

— Բայց, հանդարտ չէ՞ք պարոն:

— Լաւ եմ, օրիորդ, լաւ եմ, սիրտս է...

Հիւանդապահուհին արձան կտրած ժպտեցաւ: Իրե՞ն սիրահարուած էր արդեօք տղան:

— Օրիորդ, արդեօք կարելի՞ է որ քոյրս տեսնեմ նորէն:

— Այո պարոն, քոյրդ մօտ ատենէն քեզի պիտի այցելէ, ոեւէ վայրկեան կրնայ հասնիլ:

Կէս ժամ շանցած Շուշանիկ ժպտելով ներս եկաւ:

— Ի՞նչպէս ես Արամ:

— Շուշանիկ... Արմենուհիէն լուր մը կա՞յ:

Բարկութեան հուրը բռնկեցաւ Շուշանիկի երեսին վրայ:

— Այո, հոս է եղեր: Արամ, մոռցիր այն տեսակ սիրուհի մը, որ քու հոս դարը կը լսէ եւ քեզ չայցելեր իսկ:

— Հո՞ս է... ամուսնացա՞ծ է Շուշանիկ թէ ոչ: Արամ անկողնէն դուրս ցատկել ուզեց: Բայց յանկարծ թուլցած ետ ինկաւ: Լուռ, լուռ ձեղունը դիտեց եւ մարմըրուն ձայնով ըսաւ.

— Թերեւս լուր չունի ան, Շուշանիկ:

— Անպատճառ լսած է, Արամ. ամբողջ Ատանան լրսած է մեր քաջագործութիւնը: Հայերէն թերթեր սիւնակներ նուիրած են այս դէպքին: Օրուան նիւթը եղած ենք մենք եւ քու հիւանդ ըլլալը իսկ դրուած է թերթերու մէջ:

— Ուրեմն ան եւս լսած պէտք է ըլլայ, թոթովեց Արամ յուսահատօրէն:

— Հարկաւ լսած է, անպատճառ լսած ըլլալու է, աւելցուց Շուշանիկ: Իր մօրեղբայրը այս հիւանդանոցի բժիշկներէն մին է եղեր եւ... քեզմէ չպահեմ, Արամ, Արմենուհին ալ այս հիւանդանոցի հիւանդապահուհիներէն մին է:

— Դուն զինք տեսա՞ր:

— Ո՛չ, բայց լսեցի:

— Արմենուհիին պէս հազարաւոր աղջիկներ կան...

— Այդ երազս ալ խորտակուեցաւ... թող խորտակուի:

— Դուն չես հասկնար, Շուշանիկ, չես հասկնար: Ինձի համար Արմենուհիէն զատ ոչ մէկը արժէք ունի: Սխալ ըրի ես, սխալ ըրի: Պէտք էր վաղ անցնէի վրէժի ապուշ գաղափարէն: Լքեցի զինք, հակառակ իր պաղատանքներուն, հակառակ իր արցունքներուն...: Արամին աչքերը լեցուեցան եւ ձայնը խեղդուեցաւ:

— Բայց վրէժդ լուծեցիր, չէ՞...

— Այո, բայց ես հիմա առանց պսակի յաղթական մըն եմ, եթէ իմ յաջողութիւնս յաղթանակ մը կարելի է կոչել: Ինչ օգուտ, բախտին ձեռքին մէջ հասարակ խաղալիկներ ենք մենք... Մոռցիր այդ խնդիրը, Շուշանիկ: Աշխարհի հետ մարդիկ ալ կը փոխուին: Բայց, չեմ կըրնար հաւատալ, յանկարծ ձայնը բարձրացուց Արամ, թէ Արմենուհին հոս գալս լսած ըլլայ եւ ինձի չայցելէ:

— Հա՛, նայինք հիմա ի՞նչպէս ես, հարցուց բժիշկ մը յանկարծ ներս մտնելով հիւանդապահուհիին հետ:

— Շնորհակալ եք Տոքթոր, հանգիստ կ'ըլլամ, պատասխանեց Արամ անհողօրէն:

— Այս օրիորդը քոյրդ է հաւանաբար:

— Այո, պարոն, ըսաւ Շուշանիկ ոտքի ելլելով:

— Շատ աղէկ, շատ բարի: Ես պիտի փախալիմ որքու փորձառութիւններդ ինձի պատմես, բայց ոչ այսօր: Պէտք է անգիստ ընես այսօր, իսկ վաղը... տեսնենք թէ ինչպէս պիտի զգաս:

Բժիշկը պահ մը տատամսեցաւ, կամաց կամաց դէպի սենեակին դուռը քալեց եւ յետոյ ետ դարձաւ:

— Արամ, զիտե՞ս թէ կեանքդ որու կը պարտիս, հարցուց բժիշկը ժպտելով:

— Ձեմ գիտեր, լուր չունիմ, զիս խնամող բժիշկին կարծեմ:

— Բայց առաւել քան բժիշկը, հիւանդապահուհի օրիորդի մը կը պարտիս. որովհետեւ եթէ ան յանձն չառնէր իր արիւնէն քեզի տալու, ապաքինումդ տարակուսելի էր:

— Ո՛ւր է այդ օրիորդը, հարցուց Արամ զգածուած:
— Քիչ մը տկար է՝ այսօր, բայց վաղը կարծեմ թէ ան քեզ տեսնելու պիտի դայ ինձի հետ: Յտեսութիւն մինչեւ վաղը:

Օրուան հերոսն էր Արամ: Հասարակ եւ ակնհասօր մարդիկ շարան շարան իրեն այցելութեան կուգային: Պրանսացի սպայ մը, Փրանսական զինուորական իշխանութեանց կողմէ իրեն քսակ մը լեցուն դրամ նուիրեց, ի վարձատրութիւն իր հերոսութեան: Արամ սպային երեսը նայեցաւ քմծիծաղով մը: Չայրոյթը աչքերուն կրակը վառեց եւ ուժասպառ ձեռքերուն վրայ ինքզինք վերցնելով այսպէս խօսեցաւ սպային:

— Տէր սպայ, հաճեցէք այդ դրամը վերադարձնել ձեր զինուորական իշխանութեան եւ ըսել թէ ես Հայոց Յուզան չեմ: Փոխանակ ինձի տալու այդ դրամը, ատով թող Պրանսացիներ իմ խեղճ, անպաշտպան հայրենակիցներս աղատեն: Թող չըսեն թէ անկարելի է այդ ընել: Երբ ես կըրցայ աղատել այս խումբը, ինչո՞ւ Փրանսական հօր բանակը պիտի չկարենայ աղատել խեղճ Հաճընցիները:

Սպան զգածուեցաւ: Աչքերը գետին յառեց, յետոյ կամակոր դոյժը հաղորդեց պաղարեամբ:

— Հաճըն անձնատուր եղած է, երիտասարդ:

— Ա՛խ... բարձին վրայ ինկաւ Արամի շանթահար դլուխը: Ա՛խ...

— Շատ կը ցաւիմ ես անձնապէս: Մեղք եղաւ: Թուրքեր կրակի տուած են զանոնք:

Նորէն բարկութիւնը իրեն ոյժ տուաւ եւ Արամ բռնունցքը օդին մէջ շարժելով պոռաց:

— Ըսի իրենց թէ Պրանսացիներէն յոյս չկար, ըսի իրենց: Ո՛հ... եւ ինչ ապուշութիւն էր ձեզմէ օգնութիւն յուսալ, երբ Թուրքեր Փրանսական զէնքեր եւ ռումբեր կը գործածէին: Ճշմարտութիւնը... ճշմարտութիւնը անգամ մը եւս ըսեմ, որ դուն ալ Փրանսական իշխա-

նութեանց ըսես: Մատնեցին, Ֆրանսացիներ մատնեցին մեզ, Հաճընը, ամբողջ Հայ ազգը: Արամ ուժաթափ ետ անկողին վրայ ինկաւ: Դրամդ ետ տար, փախսաց անցած ձայնով: Ան մեզ չի մխիթարեր: Ան մեզ չի կըրնար խաբել Ֆրանսական կեղծաւորութեան մասին: Մատնեցիք մեզ, մատնեցի՛ք...:

Յայտնապէս նուաղած էր Արամ զգացումի մակընթացութեան տակ: Սպան ոտքի ելաւ ջղաճնացած եւ Արամին նայեցաւ զայրացկոտ: Հիւանդասրահունէին վախէն կոնակը սպային դարձուցած կը մտածէր: Սպան ոտքով ուժգին հարուած մը տուաւ քսակին ու մէկդի շարտեց եւ երբ դռնէն դուրս կ'ելլէր, Ամերիկահայ բժիշկը ներս մտաւ ժպտուն՝ օրիորդի մը հետ միասին:

— Նուաղեցաւ Տօքթոր, հաւաստեց սպան: Հաճնոյ անկման լուրը իրեն շատ գէշ ազդեց:

— Ո՞վ ըսաւ քեզի որ Հաճնոյ անկման լուրը իրեն հաղորդես Տէր սպայ, պահանջեց բժիշկը:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Ձեր բացակայութիւնը հրամայողական է: Հաճեցէք անմիջապէս ձգել այս սենեակը:

Մի քանի բառեր ալ թոթովեց սպան եւ դուրս ելաւ:

Արամ գիտակցութիւնը շուտով վերստացաւ, բայց աչքերը գոց էին:

— Մատնեցիք մեզ... մատնեցիք... մըթմըթաց ան եւ դարձեալ ինկաւ քնոյ մէջ:

* * *

Իրիկուն էր: Արեւուն տժգոյն ճառագայթները սենեակին մէջ կը սահէին հանդարտիկ: Գանդուր մագերով գլուխ մը բարձին վրայ կը հանդէշէր, իսկ չընաղ կոյսի մը սիրածոր մատները անոր ճակատի կնճիղներուն հետ կը խաղային մեղմօրէն: Ամերիկահայ բժիշկը աթոռի մը վրայ անկին մը նստած կը կարդար:

Դիւթական մատներ իրենց հպումը շարունակեցին ճակատին վրայ եւ սիրափայլ աչքեր անոր երեսը դիտե-

ցին անհամբեր: Տիրական էր սենեակին լուսթիւնը, որովհետեւ խորհուրդները շատ խորունկ էին:

Յանկարծ, երկու մարմրուն աչքեր բացուեցան եւ ձեղունը դիտեցին, յետոյ գթութեան քոյրը, որուն մատները իր ճակատին վրայ էին:

— Շատ ազնիւ էք, օրիորդ, թոթովեց Արամ, դեռ անարին քով նստող օրիորդին նայելով:

Բայց Արամին երեսին վրայ նոր արտայայտութիւն մը փայլեցաւ: Մարած յոյսի մը լոյսը շողողաց իր աչքերուն մէջ: Կորսուած յոյս մը իր շողերով ողողեց անոր դունատ երեսը: Երթները սկսան թրթռալ: Ժպիտ մը ցոլաց անոր շրթներուն վրայ:

— Ո՛հ, բայց դուն, դուն Արմենուհին չե՞ս: Արմենուհի, դիւ չմոռցար չէ՞: Քեզի չըսի՞ թէ պիտի գամ, չըսի՞ թէ վրէժս պիտի լուծէի եւ քեզի գայի: Տես, հոս եմ, քեզի համար եկայ, քեզի եկայ: Շարաթ մըն է եկած եմ եւ դեռ նոր կ'այցեկես ինձի: Մտիկ ըրէ՛, ես է քեզի՞ պիտի չբաժնուէի, եթէ Անկախութեան ցոյցին գիշերը դուռը բանայի ինձի: Յուսահատ եւ յոգնած կէս շերտի տունդ եկայ, դուռը զարկի իրարու վրայ եւ չբացիր: Խորհեցայ թէ այլեւս լքել կ'ուզէիր զիս, բայց ես դուռդ զարկի որպէս զի բանաս: Կը յիշե՞ս թէ այդ առտու մատանիները բերած ատենս խոստում մը ըրի, եկայ որպէս զի խոստումս կատարէի: Բայց երբ անպատասխանի մնացի — մի լար Արմենուհի, լացի ժամանակ չէ այս երջանիկ րոպէն — խորհեցայ որ միակ բանը որուն համար կեանքս կրնայի զործածել, Շուշանիկի ազատութիւնն էր եւ Շուշանիկը ազատեցի: Հոս է Շուշանիկն ալ Արմենուհի եւ միակ բանը որ մնաց ընելիք, խոստումս զործադրելն է: Բայց Արմենուհի, ինչո՞ւ դուռը չբացիր այդ գիշեր:

Արմենուհի կը հեծկտար:

— Ես ամառն էի այդ գիշեր:

— Բայց, ինչո՞ւ Արմենուհի:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ԵՆՈՐՀԱՍ
Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն
ST. NERSES SHNORHA
LIBRARY
ARMENIAN PRELACY

լուբերէր: Բայց դիւթական ժպիտը հոն էր նորէն — յոյսին հետ ոսկեղօծ — Արմենուհիի շրթներուն վրայ: Արամի աչքերը պատահմամբ տեսան զայն, եւ այդ ժպիտը դարձեալ յուսադրեց զինք: Տեղի պիտի չտար, պիտի լաւանար, պիտի չընկճուէր Փիղիքական տկարութեան առջեւ: Չէ՞ մի որ այդ մարմինը ամենասոսկալի մարզանքներու տոկացած էր, չարքաչութեան վարժուած: Ինքզինք կը խարէր, բան չունէր: Պատճառ չը կար որ ինքզինք հիւանդի պէս այդ տան մէջ բանտարկէր: Դուրս պէտք էր ելլէր, դէպի ազատ աշխարհ, պարտէզներ եւ դետափ:

— Արմենուհի, երթանք պտոյտ մը ընենք: Օդը դեղեցիկ է եւ շատ կը սիրեմ լուսնակ դիչերին դետափը նստիլ:

Արմենուհի Շուշանիկին նայեցաւ:

— Բայց եղբայր, պատասխանեց Շուշանիկ, վստահ եմ որ կրնաս երթալ դետափը, բայց բժիշկը թելադրեց որ տունը կենաս մինչեւ որ ան...

— Շուշանիկ, դուն ալ դիս անդամալո՞յժ կը կարծես, կրնամ նոյն իսկ մինչեւ Հաճըն քալել, հոգ մի ընեմ: Միայն թէ — երբ ոտքի ելլեմ ոտքերս կը դողան քիչ մը եւ զլուխս կը դառնայ եւ այդ ալ ամիսներէ ի վեր պառկաւ ըլլալէս է: Ելէք քալենք քիչ մը:

— Բայց...

— Բա՞յց... խնդուքով մը որոտաց Վահան, դեռ չընթրեցինք չէ՞: Այսօր ալ կրնանք այդ վայելքը երկու ժամ յետաձգել: Մարդ միայն հացով չապրիր: Ելիք Արամ, այս աղջիկները առողջ մարդն իսկ հիւանդ կ'ընեն:

Վահանի օղնութեամբ Արամ ոտքի կանգնեցաւ: Աղջիկներ հետեւեցան անոնց եւ հազիւ թէ փողոցի անկիւնը հասան, Արամ ուժաթափ եղաւ:

— Հաւատալս չգար, Վահան, մեռած եմ եւ լուր չունիմ, չեմ կրնար աւելի երկար քալել: Բայց ինչո՞ւ

այսպէս տկարանամ: Երկաթ առողջութիւնս որքան վընասուած է: Բայց կեցի՛ր, ձգէ՛ դիս, առանց օղնութեան պիտի քալեմ տուն: Միթէ անդամալո՞յժ պիտի ըլլամ այս տարիքիս:

Տատանելով մի քանի քայլ առաւ Արամ եւ քիչ մնաց գետին պիտի իյնար երբ Վահան ետեւէն զրկեց զինք:

Տուն վերադարձան: Առաջին անգամ ըլլալով Արամ ճշմարտօրէն ճանչցաւ իր առողջական կացութիւնը: Շատ տկար էր: Հիւանդ էր դեռ:

Վահանի անսպառ պատմութիւններուն հետ ժամերը սահեցան մինչեւ տաս, երբ Վահան եւ Արմենուհի հրատեչտ առնելով տուն դացին:

Արամ կէս գիշերին իր սենեակը առանձնացած կը ջանար վաղուան դաղտնիքներուն թափանցել: Ի՞նչ պիտի ըլլար իր վիճակը: Ապշեցուցիչ հիւանդութիւն մըն էր իրը: Շատ ցաւ չէր զգար, լոկ մարմնական անդօրուէր իրը: Լաւ եւ անդատու կերակուրներ կ'ութիւն մը ունէր: Լաւ եւ անդատու կերակուրներ կատարեալ տէր: Բժիշկի հրահանգներուն կը հետեւէր կատարեալ ճշդութեամբ, բայց դեռ երէկի աշխոյժն ու տոկունութիւնը չէր կրցած գտնել:

Նամանաւանդ վերջերը, Արմենուհի եւ Շուշանիկ անկիւն մը քաշուած կը փոփոսային իրարու նիւթի մը մասին, որ իրմէ դաղտնի կը պահէին: Արդեօք մահացո՞ւ էր իր հիւանդութիւնը: Մարդիկ չեն ուզեր հիւանդի մը ըսել անոր իսկական վիճակը: Կեղծաւորութիւնն ու սուտը միայն այդ առթիւ ներելի է կը կարծեն մարդիկ եւ քողարկուած խօսքերով մահապարտը կը յորդորեն, կը քողարկուած խօսքերով մահապարտը կը յորդորեն, կը քողարկուեն: Թերեւս Շուշանիկ եւ Արմենուհին ալ այդ սովորութեան կը հետեւէին: Իրեն երեսին չէին ըսեր թէ քանի օր եւս պիտի ապրէր: Բայց, Արամ պիտի չը մեռնէր:

— Պիտի չմեռնիմ, մինչեւ որ... կը յայտարարէր Արամ:

Հարկ չի կար մնացածը արտասանելու: Իր շուրջինները գիտէին նշանակութիւնը այդ չարտասանուած խօսքերուն:

Արամ իր սենեակին մէջ այդ գիշեր միեւնոյն յայտարարութեան վրայ կը պնդէր ինքնիրեն: «Պիտի չը մեռնիմ, մինչեւ որ...»: Մտածումներու շարանը սակայն, յանկարծ կտրեցաւ: Փողոցին մէջ անլսելի խօսակցութիւնները կը պնդէին ազմուկի մը հետ մրցել: Ռոնաձայններու շատութիւնը կ'աւետէր բազմութեան մը հաւաքուելը վարը փողոցին անկիւնը՝ Գաշնակցական Ակումբէն քիչ մը անդին: Մարդիկ իրարու հետ կը մըրցէին քիչ ժամանակի մէջ շատ խօսելու արուեստին մէջ: Իսկ կոկորդները, լիզական թէ արական, զիրար գերազանցելու կ'աշխատէին սուր ճիշերու մէջ: Ոչինչ կարելի էր յստակօրէն լմանալ՝ բազմութիւնը իր շուրջ համախմբող պատճառի մասին, որովհետեւ ամէն մարդ կը խօսէր առանց լսել սպասելու միւսին զողորմարը: Արամ գլուխը ձեռքերուն մէջ դրած մտիկ ըրաւ ուշադրութեամբ: Խօսքերու հրաբուխի մէջէն օդին մէջ ցատկոզ նախադասութեանց փշրանքներ ոչինչ հասկցուցին իրեն:

— Ինչո՞ւ Ազգային Միութիւնը... կը պոթիկար յանկարծ եւ մնացածը կը թաղուէր ազմուկին մէջ՝ մահանալու:

— Կեղծաւորներ եւ անգութներ — բայց միթէ որո՞ւ կ'ակնարկէր խօսողը:

— Ապուշութիւն էր մեր...

— Հայրենակից, հայրենակից... հոս մտիկ...

— Կոռլինք եւ...

— Շը՛շ... չը՛շ... շ-չը՛...

Անդուսպ դողողը լոնց կէս ժամ յետոյ, եւ գիշերուան զով օդին մէջէն յստակօրէն լսուեցաւ երիտասարդի մը պողպատեայ ձայնը:

— Հայրենակիցներ՛ր...

Լուրջ խնդիր մը կը յուզուէր վարը, որովհետեւ առաջին բառը — հայրենակիցներ — այնպիսի շեշտով մը արձակուած էր, որ տեսակ մը զայրոյթի շեշտ ունէր: Արամ ականջ կտրած ունկնդրեց:

— Պէ՞տք է, անձար, դո՞ւր ըլլանք այս անանուն քաղաքական էնթրիկին ալ: Օտար տէրութիւններու դիմում խի անկարելի է երբ Ֆրանսացիք հեռագրատունները կը փակեն մեր առջեւ, չեն ձգեր որպէս զի մեր այդքան արդար թէզը պաշտպանենք տէրութիւններու մօտ:

Հոս ամբողջին մոնչիւնը ստիպեց որ բանախօսը մի քանի վայրկեան լռէ: Լուրթիւնը հաստատուելէն վերջ ան շարունակեց:

— Հայրենակիցներ՛ր...

Բանախօսին կոկորդը լեցուեցաւ եւ թաշկինակով աչքերը սրբելէ յետոյ, սկսաւ նորէն խօսիլ:

— Հարկ չկայ մանրամասնութիւնները պատմելու: Ֆրանսացիք եւ Եւրոպան մատնեցին մեզ:

— Կոռլինք... գոչեց սուր ձայն մը ունկնդիրներու մէջէն:

— Լոնցէք եզրայր որ լսենք, պոռաց չափահաս մէկը:

— Մեր իրաւունքը, մեր թափած արիւնը, տուած զոհները, իրենց խոստումները բոլորն ալ կ'անտեսուին եւ մենք կը մնանք նորէն անտէր եւ անպաշտպան՝ պարտադրուած խոնարհելու ոյժին առջեւ, պարտադրուած հնազանդելու հզօրի կամքին, ստիպուած զոհելու մեր իրաւունքը հզօրի շահերուն:

Արամ, անկողնէն դուրս ցատկելով, գլուխը պատուհանէն դուրս երկնցուց: Թէ ուսկից եկաւ ոյժը իրեն, ինքն ալ չբիտցաւ:

— Այո, խեղդուած ձայնով շարունակեց բանախօսը, Ֆրանսան մեզ մատնեց այսօր: Ֆրանսայի ներկայացուցիչը ստորագրեց դաշնագիր մը Թուրքերուն հետ, որուն տրամադրութեանց համաձայն ֆրանսական բանակներ

Կիլիկիան պիտի պարպեն եւ Թուրքերուն յանձնեն տասն եւ հինգ օրուան մէջ:

— Մենք չենք յանձներ, վար սահեցաւ Արամի կտրիճ ձայնը վերի պատուհանէն: Առանց Ֆրանսայի աւելի լաւ կրնանք պաշտպանել մեր իրաւունքը Կիլիկիոյ մէջ: Մենք չենք յանձներ, միայն թէ մեր տրամադրութեան տակ ունենայինք ռազմանիւթ:

Հարիւրաւոր աչքեր դէպի վեր ուղղուած պատուհանին նայեցան — վայրագօրէն խառնուած թխադոյն մագերու մէջէն երեւցող դէմքին եւ կրակոտ աչքերուն: Բայց բանախօսը նորէն սկսաւ խօսիլ եւ ամէն մարդ մը տիկ ըրաւ:

— Ֆրանսացիք թոյլ չեն տար այդ տեսակ բան մը նոյն իսկ կ'արդիւնեն այդպիսի ձեռնարկ մը: Երանի թէ ռազմանիւթ ունենայինք եւ երկուքին դէմ ալ կուռելով հայրենիքը ազատէինք: Ես անձամբ կը նախընտրեմ հոս ցանկալի Կիլիկիոյ հողին վրայ մեռնիլ քան թէ նորէն թափառիլ օտար երկիրներ, բայց ինչ օգո՞ւտ... ոչ ռազմական միջոցներ ունինք եւ ոչ ալ Ֆրանսական հզօր տէրութիւնը այդ ծրարիւրը ընդունելի կը դանէ: Այս է դոյժը, վաղը առտուընէ սկսեալ պիտի նահանջենք...: Անիրաւոյ թիւն, անարդարութիւն, անդթութիւն եւ դաւաճանութիւն է այս, սակայն մեր ընելիքը միայն այդ է: Բայց... հայրենակիցներ... թող այս վերջին փորձառութիւնը ըլլայ մեզի, որպէս զի օտարին վրայ յոյս չդնենք այլեւս: Ամօթ մարդկութեան, անէծք աշխարհին...:

Արամ մնացածը չլսեց: Ամբոխը իրար անցաւ վարը: Գոռում, դոչումներ տիրականօրէն ողողեցին չըջակայքը: Ամբոխը հեղհեղէ ցրուեցաւ: Մարդիկ դոյժը քաղաքին հաղորդել փութացին: Այս լուրը կոտորածի լուրէն աւելի սոսկալի էր: Բարեկամն իր խեղճ բարեկամը կը մատնէր: Պաշտպանը իր պաշտպանեալը թշնամիին կը յանձնէր: Ի՞նչ արգահատելի, ինչ զղուելի են չարիքները, որոնք բարեկամութեան եւ կեղծիքի պատմուճաններով դոնէն

ներս կը մտնեն, կը ժպտին, կը սիրեն, եւ յանկարծ կը սկսին չարչարել, կողոպտել: Ո՛հ, մարդկային անձնասէր բարեկամութիւններ...: Դեռ հազիւ վերագրածած աքսորի փշոտ ճամբաներէն՝ ետեւ ձգելով իր սրտահատորները, Հայ ժողովուրդը — ո՞վ անդուժ սիրտ մարդկաները, Հայ ժողովուրդը — ո՞վ անդուժ սիրտ մարդկային — նորէն դաղթին դէմ առ դէմ կը դտնուէր: Դեռ վէրքերը չբուժուած, դեռ ցաւերը չմեղմացած, նորէն աքսոր...:

Արամ, Արամ... Ի՞նչ պիտի ընես դուն: Յոյսերուդ կործանումը հիմա կատարելագործուած, դո՛ւրս դո՛ւրս... կը պոռան երեսդ ի վեր: Դո՛ւրս քու Հաճընէդ, դո՛ւրս քու Կիլիկիայէդ, դո՛ւրս քու հայրենի երկրէդ՝ ձեռնուհայն եւ աւելի յոգնած: Եւ հարսնի՞քը...:

Արամ ոտքի վրայ էր իր սենեակին մէջ, դարակներէն իր ամենազեղեցիկ հագուստը կը հանէր՝ ինքնիրեն անհասկնալի բառեր մը թմրթալով: Հիմա հագուստը հագած էր: Հիւանդ, նիհար Արամ: Դժբախտ սիրահար: Յուսահատ հայրենասէր: Այն անհասկնալի, աներեւոյթ ոյժը որ երեւան կուգայ մարմնոյ մէջ վտանգի մը պարագային, Արամը փոխած էր զօրաւոր, ճարպիկ, առոյգ կտրիճի մը:

Ասդին անդին ջղայնօրէն քալեց սենեակին մէջ: Ամբողջ մարմինը կը դողար ոչ թէ նիհարութենէ, այլ...: Բայց, ի՞նչ արժէք ունի կեանքը, առանց խտէալի, սկզբնաւոր եւ առաքինութեանց: Ամէն յոյս ջախջախուելէ յետոյ, Արամ պիտի հանդուրժէ՞ր որ հարսնիքն ալ օտար երկրի մը մէջ կատարուէր: Ո՛հ, անկարելի էր, անկարելի էր...: Գոնէ այդքան մը յիշատակ տանէր դեղեցիկ Կիլիկիայէն: Պէտք էր հարսնիքը կատարուէր այդ հողին վրայ, ուր իր սէրը ծնած ու հասունացած էր:

Սակայն, Արամ, չէ՞ մի որ հիւանդ ես եւ տկար, չէ՞ մի որ նոյն իսկ ապրիլը անորոշ է: Արամ, զգացումի տակ տրամաբանութիւնդ մի լքեր: Թերեւս հազիւ քանի մը ատրապանութիւն չէ՞ մի ապրիս, հազիւ քանի մը ամիս եւ անիրաւութիւն չէ՞ քանի մը ամսուան կեանքի համար...: Մտածէ, մի քանի

ամիս յետոյ թերեւս Արմենուհին սեւեր հագած գերեզմանիդ վրայ պիտի թափէ իր ծաղիկ կեանքը՝ արցունքներու մէջէն: Մի քանի ամսուան հարս եւ յետո՛յ... ո՛հ, այդ դաժան կնոջական բախտը... որբեւայրի մը անտէր, անպաշտպան, վիրաւոր...:

Ժամը գիշերուան 11ին կը մօտենար: Արամ իր սենեակին դուռը բանալով սանդուխէն վար իջաւ: Ետեւէն ձայն մը զինք կանչեց.

— Արամ, ո՞ւր կ'երթաս, Արամ...

Փողոցները խռնուած էին իրարու հետ տաք տաք վիճարանող մարդիկ: Արամ անոնց մէջէն անցաւ եւ անբեւոյթ եղաւ մութին մէջ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Նարէն Յուսախարութիւն

Տարօրինակ գիշեր մըն էր: Չայն ու աղմուկ կարծես երթալով կը շատնային փողոցներուն մէջ: Ամէն տան մէջ լոյսեր կը սլալալային կէս գիշերին: Հայերու համար նպաստաւոր նոր լուրի մը արդիւնքը չէր այդ եռուզեռ դործունէութիւնը: Արմենուհին չէր հասկնար: Պատուհանին առջեւ նստած Վահանին կ'սպասէր: Վահանը տուն չէր կրնար կենալ: Պէտք էր ամէն գիշեր փողոցներու շրջանն ընէր եւ ուշ ատեն տոպրակ մը լեցուն լուրերով տուն դարձնէր իրենք ժամուան մրափի համար:

Բայց այդ մտածկոտ էակը, հասկնար թէ ոչ աշխարհ իր ընթացքը կը շարունակէր, դէպքերն իրենց լրումին կը փութային: Ի՞նչ փոյթ թէ մարդկութեան մէջ հիւլէ մը շուարումի մատնուած էր: Ծուարուն Արմենուհի... Կը գիտէր, կը մտածէր, կը կռէր ու չէր հասկնար... Մարդիկ որոշած էին չքնանալ այդ գիշեր: Պատու-

հաններէն իրենց մարմրուն ճառագայթները խաւարին մէջ երկարող լոյսերը վճռած էին գիշերուան հետ մենամարտիլ: Բայց, չէր գանդատեր Արմենուհի: Լոյսերու, ոտնաձայններու, աղմուկներու գաղտնիքը հասկնար կամ ոչ, չէր գանդատեր: Իր սովորութիւնն էր գիշերուան այդ ժամերուն՝ խաւարին հետ միասին իր խորհուրդներուն հետ աղբիլ միս մինակ: Մինակ չէր բայց: Արամն ու երազները կային: Բայց ամէն ինչ անորոշ էր: Արամ հիւանդ էր: Չէր լաւացած եւ աղէկնալու նշաններ ալ ցոյց չէր տար: Վե՞րջը...:

Արմենուհին, անորոշ եւ յուսահատ, նորէն կը նայէր աշխարհին, որ կարծես իր շար անակնկալներով ու դէպքերով, իր նիւթական վտանգներով իրեն դէմ կը կռուէր, ո՛չ, կը խաղար: Ծատ տկար իրական էակ մըն էր ան, աշխարհի դիմադրաւելու համար: Ծատ անկեղծ էր կեղծաւորութեան հետ մարտնչելու եւ յաղթութիւն ձեռք բերելու: Ծատ անմեղ էր չարիքով լեցուն աշխարհի դէմ կենալու: Այո՛, աշխարհն ու ճակատագիր միայն կը խաղային իրեն հետ: Մերթ իրենց յոյսերով զինք կ'ուրախացնէին եւ մերթ զինք կը պատէին յուսահատութեան սեւ խաւարով: Երբեմն կը ձանձրանար ան եւ իր փափուկ ձայնով կը բողբէր աշխարհին:

— Կը բաւէ ա՛լ, սէրս ինձ տուէք եւ ալ բան չեմ ուզեր: Անդու՞ թ աշխարհ, հերիք չէ՞՞ այսպէս չարչարուիմ, լամ ու ողբամ:

Ո՞վ կը լսէր: Ո՞վ պիտի լսէր: Չէ՞ մի որ աշխարհն ու ճակատագիր մահուան վճիռը տուած էին արդէն: Եւ սոսկալի հարուածը արդէն պիտի քանդէր զինք, բայց քիչ մ'ալ, քիչ մ'ալ խաղալ կ'ուզէին իրենց աննշան զոհին հետ:

Վերջապէս կարծես ժամանակը ալ հասած էր այդ գիշեր: Լոյսերը կէս գիշերին կը վառէին: Վտանդ կար: Մարդիկ չէին կրնար քնանալ՝ վախէն ու սարսափէն: Սեւ

խաւարը վտանգներով յղի էր եւ Արմենուհի ինքնիրեն կը փախար .

— Արդեօ՞ք . . .

Գրան դանդակին ձայնին պէս աղմուկ մը հասաւ ա-
կանջին : Արմենուհի չլսեց : Ան խորհուրդներու աշխար-
հին մէջ կը խարխափէր : Ձանդակը նորէն ճշաց վարը :
Երկինքի մէջ սլացող գնդակահար թռչունի մը պէս Ար-
մենուհի երազներու երկինքէն զինք հալածող շար աշ-
խարհի մը մէջ դտաւ նորէն ինքզինք : Վաղեց ան եւ գուռը
բացաւ : Ետ քաշուեցաւ սարսափահար : Իր աչքերուն չհա-
ւատաց : Կարելի բան չէր որ դուրսի հիւրը ան ըլլար :
Անոր ոգին էր թերեւս : Ձարմացկոտ աչքերով կրկին գե-
տեց անոր գէմքը : Անոր գէմքն էր՝ քաղցր ու ժպտուն :
Իրականութիւն կամ ոչ անոր ձեռքը պիտի սեղմէր : Պի-
տի փորձէր : Ձեռքը անոր ձեռքին երկնցուց եւ սեղմեց :
Ուրուական մը չէր , բայց ի՞նչպէս կրնար իրականութիւն
ըլլալ : Նորէն նայուածքն անոր յտեց .

— Արմենուհի՛ . . .

Ուրուականը կը խօսէր , Ի՞նչ քաղցր ձայն . . . :

— Սիրելիս , վախցար չէ՞ : Մի վախնար : Կը խոր-
հէի՞ր որ Ֆիզիքական սպառնալիքները պիտի նուաճէին
իմ յոյսերս , իմ սէրս ու խոստումներս : Ահաւասիկ յաղ-
թեցի անոնց եւ հոս եմ որ իմ վսեմ ուխտս կատարեմ քե-
զի հետ՝ վախազներու շար մատնութիւնը չիրագոր-
ծուած :

Արմենուհին շարունակեց նայիլ ապշած ու լուռ : Ի՞նչ
կրնար ըսել : Ո՞վ ինչ պիտի կրնար խօսիլ :

— Վստահ եղիր Արմենուհի ես քու Արամն եմ : Ուր-
ուականս չէ քեզի խօսողը , այլ կենդանի Արամը : Կիլի-
կիան այս գիշերուընէ սկսեալ պիտի պարսպուի իր արդար
տերերէն՝ Հայերէն , որպէս զի Յրանսացիք մեր ոճրա-
գործներուն հետ քաղաքական յաջող խեղկատակութեան
ի պատիւ ձեռք ձեռքի պար բռնեն , համբուրուին :

Մի զարմանար Արմենուհի դուրսի իրարանցումը ու-
րիշ բան չէ բայց եթէ հայ ժողովուրդին զէպի Գողգոթա
ուղեւորութեան պատրաստութիւնը : Մի զարմանար որ ,
ես դեռ երեք ժամ առաջ հիւանդ ու տկար , այսպէս հի-
մա առողջ ու կայտառ քեզի եկած եմ : Ինքեանս վեր-
ջին ոյժն է որ կ'սպառեմ հիմա , որովհետեւ վսեմ իտէալ
մը վտանգի ենթարկուած է : Արմենուհի , վրէժս առի եւ
իմ դրախտավայր հայրենիքէս , պանծալի Կիլիկիայէն չը
բաժնուած կ'ուզեմ մեծ ուխտս կատարել : Կիլիկիա՛ն . . .
մեր ծնողաց լացն ու կոծը , մեր քոյրերուն առեւանգումը ,
մեր կտրիճներուն կտորումը եւ մեր չարչարանքը տե-
սած է : Ես չբաժնուած , ո՞վ անգութ ճակատագիր , իմ
հայրենի օճախէն չվճնտուած , կ'ուզեմ որ Կիլիկիան իր
որդւոց անարժաններէն մէկուն խնդուքը լսէ եւ իր աղ-
ջիկներէն ամենաղեղանիին եւ ամենաազնիւին երջանիկ
ժպիտը դիտէ : Յիշատականեր կան , ո՞հ , ինչպէ՛ս կ'աս-
ղընտեն սիրտս անոնք , որոնք մահու , որբութեան , կոտո-
րածի եւ զուլումի յիշատակներ են միայն : Ես չեմ ուզեր
Կիլիկիան ձգել . . . բայց սուրիններով կը վճնտեն մեզ :
Պէտք է երթանք , բայց այս սրտախոց յիշատակներէն
զատ կ'ուզեմ որ գեղեցիկ հայրենիքէս գոնէ մէկ հատիկ
երջանկաւէտ յիշատակ մը տանիմ : Յիշատակ մը որ իմ
աչքիս առջեւ բերէ կանանչագարգ լեռները , անդնդախոր
ձորերը , կարկաչահոս աղբիւրները , գունազեղ հորիզոն-
ները հայրենիքիս՝ փոխանակ կոտորածներու եւ Հայու
արցունքներու , եւ արիւններու : Քեզ ես այս հողին վը-
րայ սիրեցի , եւ կ'ուզեմ սիրոյս յաղթանակը տօնել հոս :
Եկո՛ւր Արմենուհի զէպի սուրբ խորան քալենք քեզի
հետ եւ վերագառնանք երջանիկ ու ժպտուն : Թող մեր
պտակն ըլլայ այդ երջանիկ յիշատակը Կիլիկիայէն մին-
չեւ վերագարձ : Եկո՛ւր :

Արամ բռնեց Արմենուհիի ձեռքէն :

— Բայց Արամ՛ . . .

Ահաւասիկ ամբողջ բացատրութիւնը: Ի՞նչ կրնար ըսել: Մերժե՞լ...: Հապա հետեւա՞նքը եւ ահաւոր արգիւնքը այդ մերժման Արամի վրայ: Յետաձգե՞ր: Բայց ի՞նչպէս կրնար տարակոյսի պատճառ չըլլալ: Դիւրագոյնաց էր Արամ, օ՛հ, որքան դիւրագոյնաց էր ան: Մերժում կամ յետաձգելու ունէ թելադրութիւն պիտի ըլլար շանթ մը, որ պիտի ջախջախէր, իր խելագարած սիրահարը՝ Արամ:

— Ձե՞ս ուղեր դալ, Արմենուհի:

— Բայց Արամ...:

Որքան տարակուսող էակներ են այրեր: Կը մոռնան ամէն սէր, հաւատարմութիւն, պաշտում եւ անցեալ, եւ տարակոյսի սեւ վարադոյրին տակ կը ծածկեն իրենք զիրենք, երբ իրենց կամքին հակառակ արտայայտուի իրենց սիրուհին՝ նոյն խի մէկ անգամ եւ ան ալ շատ տրամաբանօրէն: «Ձե՞ս ուղեր դալ...»: Բայց ինչո՞ւ այդքան հապճեպ եզրակացութիւն: Ի՞նչ ըրաւ խեղճ աղջիկը: Ծուարած էր, զարմացած՝ խենդենալու աստիճան: Ամէն բան հրաշք էր, ամէն բան: Դեռ երեք ժամ առաջ ունի հիւանդ, գրեթէ անդամալոյժ տղան, հիմա եկեղեցիի ճամբուն վրայ կը կենար, պսակուելու հաստատ կամքով: Ի՞նչպէս կարելի էր այդ: Հրաշք մըն էր եւ Արմենուհի միմիայն բնականոն դէպքերու հետ կրնար մեծամարտիլ, հրաշքի հետ, ո՛չ...:

— Արմենուհի, զիտեմ որ զարմացած ես: Իրապէս շուարեցուցիչ է ամէն բան, նման Փրանսական քաղաքականութեան, բայց այսու ամենայնիւ իրականութիւն եմ ես, խնդրանքս եւ պսակը:

Աղէկ, այս նախադասութիւնը իր մէջ քիչ թէ շատ տրամաբանութիւն ունէր: Իրականութեան կը մօտենար դէպքը: Իր ձեռքը բռնող երիտասարդը ուրուական մը չէր, այլ իր Արամը, հիւանդ Արամը, անյոյս նշանածը: Հրաշք կամ ոչ, Արամ աղէկցած էր: Կտրիճ, անհող Արամ իր գլխուն վերեւ կը կենար: Օձիքին վրայ ճերմակ

վարդ մը գիշերուան մէջ աստղի մը պէս կը ժպտէր կենսալից եւ բուրումնաւէտ: Այո, փեսացուի մը կատարեալ երեւոյթը ունէր ան: բացի երեսին վրայ իր սեւ քողով ձգող անծանօթ հողէն: Սիրտը հաւանաբար կը տանջուէր: Անթեղուած կրակ, անբուժելի վէրքեր կային նոյն: Բայց այդ ալ բնական էր: Աշխարհ բուրաստանի մը չէր փոխուեր այդ գիշեր: Կրակ կար քաղաքին մէջ, լաց ու կոծ: Տանջանքն ու զրկումը իրենց աներեւոյթ հարուածը կը պատրաստէին: Արամ հազիւ կրնար իր երեսին վրայ ժպտալ մը ցոլացնել, բայց սի՛րտը, օ՛հ, ի՞նչպէս ժպտէր անոր սիրտը, երբ վերջին գիշերը կ'անցնէր իր պաշտած Կիլիկիոյ մէջ, ուր մեռնելու եկած էր: — Պիտի դա՞ս թէ ոչ, սպառնական էր Արամի ձայնը եւ Արմենուհի միեւնոյնը զոգաց:

— Անշուշտ կուգամ Արամ, բայց այս կէս գիշերին...

— Վաղը առտու մեզ պիտի վունտեն:

— Ա՛յ, Հայը ուրախութիւն չի կրնար ունենալ: Ծընունդը արցունքով, պսակը արտասուքով, մահը սուբով:

— Այո, եկուր Արմենուհի, նահանջը չսկսած...

— Արմենուհի՛... օ՛Փ, օ՛Փ... Արամ... Արամ, Արամը հո՞սէ... հեւքտ շունչ մը հեծկլտալով ներս եկաւ յանկարծ:

— Ծուշանիկ, հանդստացիր կրկնեց Արմենուհի լալով, այս ի՞նչ սոսկալի գիշեր է, այս ի՞նչ անակնկալներ...:

— Հոս եմ Ծուշանիկ, մի լար եւ մի վախնար: Աղէկ կ'զգամ հիմա եւ եկած եմ որ ուխտս կատարեմ Կիլիկիան չպարպուած:

— Բոլոր Հայ ժողովուրդը սարսափի մատնուած է, լացաւ Ծուշանիկ, Ամէն մարդ կը պատրաստուի եւ լսեցի թէ Հայ երիտասարդութիւնը որոշած է մինչեւ վերջին շունչը կոտրել եւ հոս մեռնիլ, փոխանակ նահանջելու: Հայոց եկեղեցիին առջև երիտասարդներու ահաբեկ բազ-

ներէ ինծի, ներէ ինծի որ իմ հարուածս տապալեց քեզ: Ծուտով պիտի միանամ քեզի, ես ալ քու օրինակիդ պիտի հետեւիմ:

Շուշանիկ աւելի դժբախտ էր: Ան նոյն իսկ անզօր էր խօսելու, իր սրտի կրակը դուրս թափելու, որ այնքան վայրագօրէն կ'այրէր զինքը: Բայց ստիպուած էր համակերպել դժբախտ բախտին:

Ամերիկահայ բժիշկը զիրենք ճամբեց դէպի Մերսին եւ յուսահատ քաղաք վերադարձաւ անոնց միանալու համար քանի մը օրէն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Իր Ոյժի Վերջին Կաթիլով

Կայարանը իր մարդկային էակներու ներածումն ու արտածումը շարաթ մը շարունակելէ վերջ նահանջի վերջին օրն ալ զիմաւորեց: Վերջին օրուան բազմութիւնը աւելի մեծածաւալ էր եւ մէկ կողմէն քաղաքէն կը հասնէին ցանցառ թիւով մարդիկ, մարդիկ որոնք ի դուր սպասած էին քաղաքական նպաստաւոր եւ նոր փոփոխութեան մը: Այժմ յուսահատ համոզուած էին այլեւս թէ որ կողմը որ դառնային, ուր որ երթային՝ «ամէն ճամբայ կայարան կը տանէր»: Որբանոցներ քանի մը օրէն պիտի փակուէին, եւ սարսափահար որբուկներէ ոմանք արդէն իսկ որբանոցէն փախած մարդկային հոսանքին խառնուած էին: Մի քանի ուրիշ որբեր վազելով որբանոցի ճամբէն կայարան կը փութային որպէս զի անհետանային բազմութեան մէջ: Անոնց ետեւէն կարելի էր փոշիի ամպի մէջէն նշմարել ուրիշ մէկը, որ յայտնապէս յոգնած հազիւ թէ կը մաքսուէր միջոցին հետ: Ան հետզհետէ կայարան կը մօտենար, թէեւ շատ դանդաղ: Անգամ մը գետին իյնալու պէս ե-

ղաւ, բայց ինքզինք շուտով հաւաքեց եւ աւելի արագ քալելով հասաւ կայարան: Հայութեան ամենավերջին մնացորդն էր այդ բազմութիւնը՝ ըսին իրեն:

— Ծօ՛ Արամ, ուր ընկած էիր, յանկարծ ըսաւ մէկը անոր ուսին վրայ դնելով իր ձեռքը:

— Կարապետ, յարեց Արամ մեղմ ու խեղդուկ ձայնով, լուր ունի՞ս թէ իմ քոյրս եւ նշանածս երբ դացին:

— Հինգ օր առաջ, երբ քեզ ամէն տեղ փնտռելէ յետոյ յոյսերնին կտրեցին:

— Իմ ապուշութիւննե՛րս...: Սա անգութ մարդկութեան հետ գլուխ պիտի ելլէի...: Վնաս չունի, ազգս ինծի աւելի թանկագին է:

Այդքան մը միայն... եւ ան բազմութեան մէջ մխրձուեցաւ: Անկարելի էր մարդկային այդ խուռն բազմութիւնը ճեղքել եւ շողեկառք հասնիլ: Արամ, սակայն, յաջողեցաւ ինքզինք շողեկառքի նստարաններէն մէկուն վրայ նետել, կէս ժամ տեւող պայքարէ մը յետոյ:


Շողեկառքը սուլեց եւ զայրացկոտ գոռումով առաջ քալեց դէպի Մերսին: Լեռներն ու ծառերը, պարտէզներն ու դետերը փախուստ կուտային շողեկառքի արագութեամբ: Արամ ուզեց վերջին անգամ մըն ալ դիտել իր հայրենիքին զեղեցիկ բնութիւնը, բայց շատ ընկճուած զղաց:

Շողեկառքը վեց ժամ յետոյ Մերսինի կայարանին մէջ կանգ առաւ: Իրենց ծնողքը կորսնցուցած ծնողներու ահագին բազմութիւն մը զիրենք դիմաւորեց:

Արամ ինքզինք վար նետեց: Ծանչուր մը չկար հոն: Դէպ ի ծովափը քալեց: Իրիկնամուտ էր, այնպէս որ բաւական դժուար էր դէմքերը հեռուէն զանազանել: Վերջապէս ծանօթի մը հանդիպեցաւ:

— Քոյրս եւ նշանածս տեսա՞ր:

— Արամ... իր Հաճընէն ազատած երեք երիտասարդներէն մին էր:



500

« Ազգային գրադարան



NL0344904

ՀԱՐՊԻԿ ԱՐԱՄ

Հեղինակ՝ Գ. Յ. ՎԱՀԿԱՅԻ

Վստահ եմք որ «ՀԱՐՊԻԿ ԱՐԱՄ»-ի ընթերցողները համոզուած պիտի ըլլան որ ան գեղեցիկ նուէր մըն է սեւէ սաքիւ, սեւէ բարեկամի կամ ազգակների մը համար :

Գին 75 Սէնթ

“THE LITTLE HOST”

Հեղինակ՝ Գ. Յ. ՎԱՀԿԱՅԻ

«Ճարպիկ Արամ»-ի հեղինակին այս անգլիերէն գրքոյկէն հազիւ 200 օրինակ մնաց : Զայն կարդացող եւ չի սիրող դեռ չէ եղած : Անգլիերէն գիտցող Հայերու համար գայն կարդալ վայելիք մըն է, իսկական յարմարագոյն նուէր մըն է պատիկներուն համար :

Ամերիկացի խմբագիր մը անոր մասին գրեց .
 “It is a charming little book, I read it twice.”

Գին 50 Սէնթ

Ս Է Լ Ի Մ

Հեղինակին յաջորդ վեպը

(Պիտի տպուէի տարի մը յետոյ)

«ՍԷԼԻՄ»-ի ընթերցողը պիտի նախընտրէ ամբողջ գիշեր անհուն մնալ քան գայն կէս ձգել :

Ապաւէ «ՍԷԼԻՄ»-ի հրատարակութեան՝ գիտնալու համար քէ պատմութիւն մը ի՛նչքան հետաքրքրական կրնայ ըլլալ :